



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4544

T my

191.99.8

un-45

1877

2010

## La langue maternelle

Fig. 187.

Am. 488.

Հբատարակութիւն Զ. Գրիգորեանի գրավաճառանոցի.

## Ն. ՏԵՐ ՂԵԽՈՆԴԵԱՆ

# ՄԱՅՐԵԼԻ ՀԵԶՈՒ

ՓՈՔՐԱՀԱՍԿ

## ՄԱՆՈՒԿՅԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ԸՆԹԱՐԾԱՆՈՒԹՅԱՆ

## Upniphag junction

ԵԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՎԱՆԻ ՏԻՊ

Հրացրած նոր փոփոխութիւններով եւ յօդուածներով:

• 1 3 1 1 0

Въ Типографіи Амбарцума Энфіатжіан


1877

Գրաշաբ Ա. Գրիգորեանց եւ, թ. Փլոյինեանց :



2002

БИБЛІОТЕКА  
ІНСТИТУТА  
ВІДОНОВЛЕННЯ  
Відділення науки  
СССР



*arm.*  
U 488.

*Հրատարակութիւն Զ. Գրիգորեանի գրավաճառանոցի.*

*Ն. ՏԵՐ ՂԵԽՆԴԵԱՆ*  
*491.99-8*  
*Կ7-45*

*ՄԱՅՐԵՆԻ ՀԵԶՈՒ*

*ՓԱՔՐԱՀԱՍԿ*  
*ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ*

*ՏՐԿՈՐՈՒԹՅՈՒՆ*

*ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ*

*Այրութեանից յետոյ*

*ԵԿՐՈՐԴ ՏԱՐԻ*

*ԵՐՐՈՐԴ ՏԻՎ*



*Կրացրած նոր փոփոխութիւններով և յօդուածներով:*

*Թ Ի Ֆ Լ Ի Ս*

*Въ Типографии Амбарцума Энֆаджинцъ и К-*

*1877*

*Գրաշար Ա. Գրիգորեանց Խ. Բ. Փիղինեանց.*

*ՅԱՅԼԻՈՒԵԿԱ  
ԻՆՍՏԻՏՈՒ  
ՎՈՏՈԽԵДЕԿԱ  
Ակադեմիա Խաչ  
ԱԽԱ*

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Մայրենի լեզուի երկրորդ մասը կտղմելիս մենք հետեւցինք ուշինսկու մետօղային, Մենք մեր նպատակին չէինք հասնի, եթէ կուրօրէն հետևելով ուստականին՝ ճիշտ բառացի թարգմանութեամբ մի դիրք լոյս ընծայէինք, այդ պատճառով կարելի եղածին չափ յարմարեցրինք նորան հայկական կեանքին, մանաւանդ գրքի երկրորդ հատուածը, որի բովանդակութիւնը աւելի կրօնական լինելով, կատարելապէս հայացնելու կարօտ էր: Բացի դորանից մենք դուքս ձգեցինք ուշինսկու գրքուկից շատ յօդուածներ, որոնք մեր կեանքին անյարմար էին, և ուր հարկաւոր տեսանք, աւելացրենք ոչ սակաւ նոր յօդուածներ այլ և այլ բովանդակութեամբ: Այսպէս ուրեմն, մենք ոչ թէ թարգմանեցինք, այլ թարգմանօրէն կազմեցինք:

Մայրենի լեզուի երկրորդ տարին երեք հատուածի է բաժանվում: Առաջին երկու հատուածները կազմում են բուն ընթերցանը, իսկ երրորդում սիստէմատիքական ձևով դասաւորուած են բերանացի և դրաւոր կրթութեան օրինակներ:

Առաջին հատուածում, որ կոչվում է «Հուրծ և մօտը» յօդուածների դասաւորութիւնը հիմնուած է տեղի վերայ, երկրորդ հատուածում, որ կոչվում է տարուայ և զանակներ, հիմքը եղել է ժամանակը:

Գրքի երեք մասն էլ մինոյն ժամանակ պիտի ուսուցանել, Գլխաւոր հիմքը պէտք է լինի առաջին հատուածը, ուր առարկաները դասաւորուած են իրանց տեղին համեմատ: Այս հատուածի մէջ կէնտրօն է ընդունվում աշակերտը և ուսումնարնը, որից յետոյ շրջանը սկսվում է ընդարձակուլ մինչև այն այդին և քաղաքը, ուր ապրում է մանուկը: Առաջին հատուածում, բացի չափարելական, պատմողական և առասպեկտական կտորները, զինաւոր տեղը բունում են: Մեր ուսումնար առան, դասատուն, հագնելիք, աման եղններ և այլն: Այս գործնական յօդուածները միմիայն ընթերցանութեան համար շեն, այլ նորանք պիտի ծառայեն իրբեն նիւթ ուսուցչի զրոցագրութեան իւր սաների հետ, և որքան կարենը է սորանց կանոնաւոր ընթերցումը, նոյնքան ևս կարենը է բերանացի խօսակցութիւնը նորանց բովանդակութիւնից առած: Առաջ, քանի որ աշակերտը զեռ ապատօրէն չէ կարող բացազրել իւր կարդացածը, պէտք է ուսուցիչը նախ ինքը խօսէ այն առարկայի վերայ, որը դասի նիւթ է լինելու, իսկ յետոյ երբ աշակերտը փոքր ինչ աւելի կըզարդանայ, կարուի է նախ կարդացնել աշակերտին և ապա պահանջնել, որ կարդացածը իւր բառերով բացադրէ: Այսուհետեւ ուսուցիչը առաջարկում է հարցեր, դասի բովանդակութեանն համեմատ, և այդ հարցերին աշակերտները պատասխանում են ընդարձակ նախադասութեամբ (կատարեալ պատասխանով): Միանգամ ընդ միշտ նկատում ենք, որ մեր ուսուցիչները զինաւոր ուչադրութիւն դարձնեն այս բանի վերայ և դամբ առաջ մտածեն, թէ ինչպիսի հարցեր պիտի առաջարկեն, որ դասի բովանդակութիւնը կատարելապէս պատասխան է,

Дозволено цензурою, г. Тифлисъ. Января 1877 года.

50247-ար

Ս. Դ. Փ. Վ. Վ.



36287-66

որովհետեւ սորա մէջն է զիխաւոր հմտութիւնը։ Առհասարակ պէտք է իմացած, որ պատողական բովանդակութեամբ յօդուածների բացադրութեան ժամանակ հարցմունքները, որքան կարելի է, պէտք է քիչ լինին, և այն ևս երբ աշակերտը պատմելիս զանցէ առնում մի նշանաւոր կէտ, կամ շփոթում է մաքերը։ Իսկ գործնական կտորների բացադրութեան ժամանակ, երբ մի առարկայ նկարագրվում է ամենայն կողմից—զննվում է—հարցմունքները կարևոր են, որովհետև այդ վնասութիւնը հարց ու պատասխանով է լինում։ Վերառնենք օրինակի համար ուսումնարանում, որտեղ է նստում ուսուցիչը, որտեղ են նստում աշակերտները։ Ինչ կայ ուսուցի մօտ, ինչով են գրում գրատախտակի վերայ։ Ինչ տախտակներ են դրած աշակերտների առաջ և այլն։ Յետոյ հարցերը բարդում են. որտեղ են նստում ուսուցիչը և աշակերտները, ինչ կայ ուսուցի մօտ և աշակերտների առաջ։ Ինչով են գրում գրատախտակի և քարետախտակի վերայ։ Հարցմունքներով յօդուածի նիւթ եղած առարկան բացադրելուց յետոյ, պէտք է համեմատել նորան ուրիշ առարկայի հետ, ցոյց տալ, թէ ինչ յատկութիւններով նորա նման են միմեանց և ինչով—զանազան, որքան համարաւոր է այդ բանը։ Սի կամ միքանի գործնական կտորից յետոյ հետեւումնեն ոտանաւորներ և պատմողական կամ առասպելական յօդուածներ, որոնք զարգացնումնեն աշակերտի յիշողութիւնը և երեսկայութեանը մնունդ են տալիս։

Դրբի երկրորդ հատուածը կարդալիս պէտք է հետեւ, որ ընթերցանութեան յօդուածը համապատասխան է այն ժամանակի և այն տօնի հետ, որը դասի նիւթ է եղել։ Երկրորդ հատուածում ևս պիտի մի և նոյն մետողը՝ պահպանել, ինչոր առաջինում։

Երրորդ հատուածը բովանդակում է իւր մէջ բերանացի և գրաւոր կրթութեան օրինակներ, որոնց նկատակն է նախապատրաստել աշակերտներին ապագայում տրամարանական և քերականական կուրսը պատեմատիքաբար և հեշտութեամբ ընդունելու, նոյնպէս գրաւոր աշխատութեան ընտելացնելով, նոցա մէջ ուղիղ և գրամաբանօրէն խօսելու և գրելու ընդունակութիւնը զարգացնել։ Միայն այս կրթութիւնները պէտք է անցնել կից ընթերցանութեան հետ, որ մի գուցէ նորանց բաժանելով մեքենայական ձեւ ստանանար և սովորուելը մոռացուելու համար։ Ենթագրելով, որ աշակերտը արդէն ծանօթ է առարկային, կրթութիւնները սկսվում են նորա զանազան յատկութիւններից (քերականական լեզուով խօսելով—ածական անուններից) ապա գալիս է նոցա փոփոխութիւնը, գործողութիւնները, և վերջապէս № 25 պարզ նախադասութիւնը իւր ընդարձակութեանն է համուռմ : —ինարկ է, ուսուցիչը կրթութիւնները կարող է սկսել, որտեղից յարմար համարէ—№ 27-ից գալիս են քանի մի սիւծեր (թէմաներ) գրաւոր աշխատանքի (շարադրութեան) համար։ Ուսուցիչը իւր կողմից այդպիսի նիւթեր գրքի միջից պիտի ընտրէ ըստ կարելոյն շատ և առաջարկէ աշակերտներին շարադրութեան համար։

# ՄԱՅՐԵ ՆԻ ԼԵԶՈՒ

## ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

### ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

#### Շուրջը եւ մօտը:

#### ՈՒՍՈՒԱԾ ՆԱՐԱՆՈՒՄ ԵՒՏԱՆ Ը:

#### Ուսումնարանում:

#### Եղայրն ուսումնարանից եկաւ ուունսաւը իւսուաց

#### Եղայրա փաքրիկ քոյրը հարցրեց, թէ կուք ուսումնարանում ի՞նչ էք անում։

#### Եղայրն էլ պատմեց բոյրը, ինչոր ուսումնարանում պատշաճում է։

#### Ուսուցիչը նստում է աթոռի վերայ, սեղանի մօտ։ Աշակերտները նստում են նստարանների վերայ։ Ուսուցչի մօտ զրած է մէկ մեծ գրատախտակի գրատախտակի վերայ գրում են կափիճով։ Աշակերտների առաջ դրած են քարետախտակներ։ Քարետախտակների վերայ գրում են քարետախտակներ։

դրչով : Ուսուցիչը ուսուցանում է : Աշակերտները ուսանում  
են : Ուսուցիչը դաս է հարցնում : Աշակերտները պատաս-  
խանում են : Աշակերտներից մեկ քանիսը գրում են, միւս-  
ները կարդում են, իսկ ոմանք նկարում են :

Այսպէս է լինում եւ մեր ուսումնարանում . պատմեցէք :

### Մանկական ակնոց :

Մանզւկն ասաց իւր հօրը . «Հայրիկ, գնիր ինձ  
համար ակնոց . ես էլ քեզ պէս կամենում եմ կարդալ : »  
— Լաւ, պատասխանեց հայրը . ես կրգնեմ քեզ  
համար ակնոց, միայն մանկական — և գնեց նորա համար  
այբբենարան :

### Հրաւեր դէպի ուսումնարան :

Հաւը խօսեցաւ օրը բացուեցաւ . արեն էլ վաղուց  
ելաւ, բարձրացաւ : Խելօք մանուկներ, շուտ հագնուեցէք,  
շուտով դասառուն՝ դուք հաւաքաւեցէք :

Մարդ և անառուն գազան և թռչուն, ամենն էլ իւ-  
րանց գործին են գնում . մըջեւնը բերնով կերակուրառ-  
նում, մեղուն ծաղկիցը հիւթեր է ծծում :

Դաշտը զոյնզգոյն ծաղկով վարդառուած, մարդա-  
գետինը կանաչ հագնուած, անտառն ձմեռուայ քնից  
արթնացած՝ իւր տերևները շարժում է կամաց :

Զինորաններն իրանց ուռկանն են քաշում, հնձող-  
ներն իրանց մանգաղը շարժում . . . — Դուք էլ, մանուկ-  
ներ, ձեր գրքերն առեք . Աստուած ծուլութիւն չէ սի-  
րում երբէք :

### Առաւագեկան ճառագայթները :

Վարմիր արելք բարձրացաւ երկինքը և սկսեց ցրուել  
դէպի ամենայն կողմեր իւր ոսկեփայլ ճառ ագայթները . որ  
արթնացնէ երկիրը :

Առաջին ճառագայթը թռուաւ ընկաւ արտուակ  
վերայ : Արտոյտը թրապրատաց . թափ տուեց թեւերը, դուբս  
թռուաւ բնից, շատ ու շատ բարձրացաւ և երգեց իւր գե-  
ղեցիկ երգը . Այս, ինչ քան լաւ է առաւատեան պարզ և  
թարմ օդի մէջ թռչելը, ինչպէս լաւէ, ինչպէս ազատ է :

Երկրորդ ճառագայթն ընկաւ նապարտակի վերայ:  
Նապարտակին ականջները շարժեց և ուրախ ուրախ թրուա-  
կուաց զողապատ մարդագետիներում . կազեզ — զնաց նա-  
խաձաշիկ աներու հիւթայի խորերով :

Երրորդ ճառագայթը մտաւ հաւաբունը : Աքա-  
ղաղը թափահարեց իւր թեւերը և երգեց . ածու — զոն-  
— զու : Հաւերը ցած եկան թառերից, կրկրուացին, սկսե-  
ցին քջ ջել աղըը և Ճիճուներ որոնել :

Չորրորդ ճառագայթը ընկաւ փեթակի վերայ : Մեղուն  
դուրս սողաց իւր մոմեղն խցից, կանգնեց փեթակի զրան-  
առաջ, ուղղեց իւր թեւերը և բզդարով . թռուաւ — զնաց  
: Աեղը հանաքելու հոտաւէտ ծաղիկներից :

Հինգերորդ ճառագայթը մտաւ մանկանոյը և ընկաւ  
փոքրիկ ծոյլ մանուկի անկողնու վերոյ ու սկսեց ուղղակի  
նորա աչքերը . ծակձըկել . բայց նա դարձաւ միւս կողքի  
վերայ և նորից քնեց :

Կառմէց Ի՞նչպէս կանէր աշխատասէրը :

Եթամիանիստանը ցլաւախանական զերծանական ոզգամիանական

### Ամեն բան իրան տեղը :

Արգիսը, հենց վեր էր կենում թէ չէ, սկսում էր

իւր բաները ողոնել. նորա մէկ գույզան աթոռի վերայ  
էր լինում, միւսը սեղանի տակը. կօշեկի մի հատը մահ-  
ճակալի տակ վայր ընկած, իսկ միւսը սենեակումն էլ չէր  
լինում։ Ման էր գալիս Սարգիսը ամենայն առաւօտ, այս  
ու այն կողմն էր ընկնում և միշտ դասից ուշանում էր։  
ի՞նչպիսի երեխայ էր Սարգիսը։

## Գրատախուակ:


Գրատախտակը շնում է ատաղձագործը փայտից և  
ներկարաբրը ներկում է նորան սև գունով։ Նա քառան-  
կիւնի ձեւ ունի և դրած է շարժական ոտների վերայ կամ  
կախած է պատից։ Գրատախտակը միշտ դասատանն է մնում։  
Նորա վերայ դրում են կաւիճով։

Այսպէս է եւ մեր գրատախտակը: Համեմատեցէք:

## Քարետախտակ:

Քարետախտակը կտրում են քալտաշները շերտա-  
քարից, իսկ հիւսնը նորան դնում է փայտէ շրջանակում:  
Քարետախտակները գրած են գրասեղանների վերայ՝ աշա-  
կերտների առաջ: Աշակերտներն իրանց քարետախտակները  
հետները տուն են տանում: Քարետախտակի վերայ գրումին  
քարեգրչով :

Այսպէս են եւ ծեր քարետախտակները; Եվ ինչից են շինում քարետախտակները: Համեմատեցէք քարետախտակը գրատախտակներին:



Կարիճ

Փոքրիկ Նազելին վաղուց գիտէր, որ կաւիճով՝ գրում  
են գրատախտակի վերայ, որ նորանով տողում են մահուդը՝  
ձևելու ժամանակ, որ կաւիճով՝ կարելի է ձեռները և շու-  
րերը թաթախել, որ նա սպիտակ է և փափուկ ու կա-  
բելի է փշը, փոշը գարձնել։ Ուրիշ ոչինչ չէր իմանում  
Նազելին կաւիճի մասին։ Միանդամ նա հարցըց իրանց  
աղախնին, թէ ո՞րտեղից են ստանում կաւիճը։

»Յայանի բան է, խանութիւններիցն են գնում, Հոգիս,  
ասաց աղախինը:

— Կատ լաւ, բայց խանութատէրերը ի՞նչ տեղից են ստացել:

•Աարերից . . . այդպիսի սարեր էլ կամ . . . 2

— չա, ուրեմն, զա հող է, մտածեց Նաղելին, և էլ  
ոչինչ հարց չառաջարկեց:

Բայց ինչպէս զարմացաւ մեր նաղելին, երբ միանգամ  
նկատեց գրքի մէջ մի այնպիսի պատկեր, որպիսին նկարածէ  
այստեղ, և նորա տակը կարդաց՝ կտութէ: Նաղելին վա-  
զեց իւր մօր մօտ. «Մայրիկ, սիրելի մայրիկ, մի՞թէ առ  
կաւիճ է նկարած:

— Այս, որդի, տեսնում ես, գրած է . . .

«Բայց մեր կաւիճն այդպէս չէ, մայրիկ:»

— Կա էլ այդպէս կերեայ, եթէ խոշորացյցի տակ  
դնենք: Խոշորացյցը մի խողովակ է, որ առարկաները ցոյց  
է տալիս մեծ զիբքով: Կաւիճն այն մանր կենդանիների  
բուներն է, որոնք շինում են կաւիճէ և կրէ լեառներ: Դու-  
րանք, այդ անչափ մանր կենդանիները, բնակվում են ծո-  
վային ջրերում, և այնքան մանր են, որ հասարակ աչ-  
քով նորանց չես տեսնի: Ուսումնականները այդ ման-  
րիներին անուանում են ի ն ֆ ու զ օ ր ի այ: Նորանք շատ  
են և իրանց մանր կաշուի մէջ սողում են ջրի յատակում . . .  
այստեղ ապրում են, ապրում ու մեռնում. իսկ իրանց  
կաշին—վահանը լուսում են ջրի յատակում. Չուրն  
էլ աւազի չեա քշու յէ նորանց իրան ալիքներով դէպի  
ծովի ափերը: Նորանք այնքան շատ են, որ չնայելով իրանց  
մանրութեան, այդ մեռած մարմինների միմեաց վերայ  
դարսուելուց ծովի յատակից, մէկ էլ ես տեսնում, վեր է  
բարձրանում և հպարտաբար փայլում է արեգակի տակ  
մի ամբողջ սար: Աչա ինչպիսի կենդանիներ են այս ման-  
րիները— նորանք մինչև անգամ ամբողջ սարեր են շի-  
նում, որոնք արեգակի տակ փայլում են ինչպէս ձիւն.  
Երբեմ այդ սարերի վերայ ածում են խոտեր, թժիեր  
և ծառեր. նորանց վերայ և նորանցից մարդիկ շինում են

մէծ ու փոքր քաղաքներ, դիւղեր: Մեր պատերն ավիտակա-  
ցնող կիրնէլքիւ չունի այդ ջրային մանրիների պատեան-  
ներից:

Կա Կաղելին լուս նպտած էր ու խորը մասնում էր, և  
շատ մասնութեաներ կար. . . Մօր պատմութիւնը առ-  
դախնի պատասխանի նման չէր. սորան հարկաւոր էր հաս-  
կանալ և լաւ հասկանալ: Ամ մասն զիւրծ լ:

այս վերաբեր մայութան զիւրծը ըստ առ առ առ առ  
. Նորանց չէ զարաւ Մատիու:

Ցողակը, որ մի սրամիտ երեխայ էր, իւր հօր գրա-  
սեղանի առաջ նստած՝ մատիտներ էր կտրում իրան և  
հօր համար: Նա քանի կտրում էր, կոտրվում էր. թէն  
մատիտ կտրելը մի շատ գժուար բան չէր, այնու ամենայ-  
նիւ այսօր այդ բանը նորան չէր յաջողվում: Ցողակը  
մոտածման մէջ էր. Նա անուշադիր էր, նորա համար էլ  
բանը գլուխ չէր գալիս:

— Ի՞նչ ես անում, փոքրիկ, ներս մտնելով ասաց  
հայրը. երեւում է խելքդ որից բանի վերայ է, նորա հա-  
մար էլ բանը ձեռքիցդ վայր է ընկնում:

«Հա, հայրիկ, ես ուզում եմ իմանալ, թէ ինչպէս է  
այս սկս ու փայլուն չոփիր փայտէ ձիատի մէջ մտել և  
մատիտ գարձել:

— Ե՞ս, որդի, կուզես հարիւր մատիտ կտրատիր ու  
կտրատիր, բայց էլի քո խելքովդ ոչինչ հաստատ տե-  
ղեկութեան չես համիլ: . . . Դա արդէն յայտնի բան է  
գրքի մէջ կարդա, հարցրու: . . . իսկ ինչ որ ամենքն  
էլ վազուց գիտեն, նորա համար հարկաւոր չէ գլուխ ցա-  
ւացնել:

«Գրքերի մէջ ես ալդ բանին չեմ պատահէլ. իսկ եթէ

գուլպատմես, հայրիկ, ես շատ շնորհակալակը լինիմ, և միայն շուտ, որովհետեւ պէտքէ դնամ, ողասերս պատրաստ տեմ:

— Շատ լաւ: Նայիրայդ կտօրներին, որ զու այդ տեղ թափել ես, ո նորանք մե են, նշանակում է ինչի՞ն մասն են: Պատմաց մասն ու մասն մասն վաստակաբար վճիռար

— «Ածուխի նման են, հայրիկի նպաստ՝ այ և յամայ»

— Շատ լաւ. բայց նկատիր ածուխն աւելի փափուկ է և երբոր կոտրում ես, հաւասար չէ կոտրվում. իսկ երկաթը, տեսմէլ ես, ինչպէս է կոտրվում. — Համեմատիլիր: . . .

— «Հասկացայ: Այստեղ խառնուած են երկաթը և ածուխը:»

— Ճշմարիտ ասացիր: Ուրեմն տպաւորիր մտքում հետեւեալը՝ ածուխը և երաթը անհաւասար չափով. այսինքն մէկից քիչ, միւսից շատ, հողի տակը խառնուել են միմեանց հետ, միացել են և դորանից առաջացել է կապարաքարը: Մարդիկ էլ գտել են նորան, սղոցել են և անց են կացրել ձիպոտի մէջ ու մատիտը պատրաստուելէ: Բայց այս էլ պէտք է իմանաս, որ սարերում գտած կար պարաքարով չեն բաւականացել մարդիկ. այժմ՝ նորանք միւնոյն բանը շինում են արուեստական կերպով, այսինքն գործարարներում. դորա համար առանձնապէս շինած հնոցներում երկաթը հալեցնում են, նորա հետ ածուխ են խառնում և կապարաքար են պատրաստում. պատրաստեց յետոյ նորան ջոկջում են և ստանում են զանազան տեսակներ՝ փափուկ, պինդ: Փափուկ մատիտների մէջը երկաթը սակաւ է, իսկ պինդերի մէջը նա համեմատաբար աւելի է: Հասկացար այժմ:

— Ույն. շնորակալեմ, որ պատմեցիր:

« Ջն դաւանի և հազարաշ զամա մաս ամբար և նայ ամո զայոյ բառ ոմ ըդր Ուետին:

Վարդիկը, որ մի փոքրիկ, աշխատասէր և խելօք մանուկ էր, միանգամ զբքից դասը արտագրելու ժամանակ է տարի տեղը ո զբեց: Վարդիկը նկատեց իւր սկալը և սկսեց լաց լինիլ:

Մի՛ լաց լինիր, սիրունիկ, ասաց նորան իւր մայրը, քան թէ լաց ես լինում, վեր առ և ուզդիր:

— Բայց այն ժամանակ կը կեղտոտուի, մայրիկ, իսկ վաժապետը պատուիրել է, որ մաքուր ու անսխալ արտաշ գրենք:

«Ե՛՛, այդ ցաւին էլ ճար կանուի. վեր առ ռետինը կամ գրչաշառը և կամաց ու զգուշութեամբ քերի՛ր սխալ գրած տառը. միայն զգուշ կաց, որ թուզթը ըստակես:»

— Յետոյ այդ քերած տեղը ինչպէս է զրեմ, մայրիկ. չէ որ քերած տեղը կը ծծի թանաքը և աւելի վատ կը լինի:

«Այ ինչպէս կանես. զգուշութեամբ քերելուց յետոյ դու նորան տրորիր գրչաշառի կոթով, կամ եղունկիցդ մի փոքր քերի՛ր դանակի յետոյքով մաքրած տեղի վերայ և քերելուց յետոյ տրորիր եղունկովդ. լաւ տրորելուց յետոյ շուտով գրի՛ր հարկաւոր տառը և իսկցն աւաղ ածա վերան . . . էլ ոչինչ չի նկատուիլ:»

Լայր գագարեց, տառը ուղղած էր արդէն, և վարդիկը սկսեց իւր մօրը հարց ու փորձ անել:

«Ո՞րտեղից է, մայրիկ, այդ պատուական ռետինը, որ այդպէս զարմանալի կերպով ձգվում, մատովդ է փաթաթը վըւմ, իսկ երբոր բաց ես թողում, նորից սեղմը վում,

կուծ է գալիս: Իսկ այն միւսը հազցրած է փայտի մէջ, և ի՞նչ երկար է ու մէծ . . . Ո՞րտեղեց են այդ բոլոր ռեա-տիները, մայրիկ:

— Ա Մի տեսակ ծառ կայ, ասաց մայրը: Որ աճում է տաք երկիրներում: այդ ծառից հիւթ է դուրս գալիս, իսկ այդ հիւթից կամ իմեմիցը մարդիկ պատրաստում են զա-նազան տեսակ ռետիններ. նորանցից միքանիսով թանաքով գրածը կարելի է քերել, միւսներով մատիտով գրածը՝ նորա-նից շինում են նոյնպէս կալօշներ, կօշեներ և այլն: Մի ուրիշ անգամ էլ, երբոք ժամանակ կունենամ, ես քեզ ցցց կը տամ, թէ ինչպէս լաւ է այրվում ռետինը:

Այժմ, մայրիկ ջան, այժմ ցցց տուր. լուցինքնեարթէ չէ, կրակը պատրաստ է:

Այրը վառեց ռետինը և նա սկսեց այլուիլ, արձա-կելով կապրոտ, փափուկ և դուրեկան բոց ու կծու խէ-ժային հոտ: Վարդիկը հանդարտ և անշարժ նստած էր: Նորա աչքերն էլ կարծեն, կրակ էին ընկել և այրվում էին ռւաման կրակով, երբ տեսնում էին այդ կենդանի պատկերը, որ առաջ երբէք չին տեսել:

Ո պ ո ւ ն գ:

Փոքրիկ Սաթինիկը հեալով և հաղեւ շունչ քաշե-լով ներս վաղեց մօր սենեակը և բացականչեց. մայրիկ, տես ի՞նչպիսի սև մարդ է անցկենում՝ մեր փողոցով: Եռ-րա վերայ, ոտից միւսւ դուսւը, կաւկը լսուածէն մի տեսակ դեղնէն, փափլիկ բաներ, գեղեցիկ ծակուիներով: Նորանցից մինին ես այն էր ձեռք էլ տալիս, բայց որ իմանաս, թէ նա ինչպէս ծիծաղելի կերպով կուծ եկաւ, կասես թէ վախճառ ինձանից, իսկ յետոյ ինքն իրան էլ ուղղուեցաւ:

— Հա, հասկանում եմ, ասաց մայրը: Դա յոյն է, որ սպունդներ է ծախում: զնանք գնենք միքանիսը, ևս վա-ղոց մտադիր էի գնել Ցողակի համար, և բռնելով Սա-թինիկի ձեռքից, մայրը դուրս գնաց բազր, ուր ներս էր եկել սպունդ ծախողը:

— Մինչեւ որ Սաթինիկի մայրը ջոկում էր սպունդ-ներից աւելի մաքուրները, փափուկները և մալիները, աղ-ջեկը անգագար սեղմում էր, կամ մէկ կամ միւս սպունդը. նորան սասակի գրաւում էր այն բանը, թէ ինչպէս են նո-րանք սեղմիում և նորից բացվում, լայնանում: Մայրը գնեց միքանի սպունդներ, վճարեց նորանց արժեքը և յոյնը արդէն պատրաստում էր հեռանպ. իսկ Սաթինիկը դեռ էլ բռնում էր իւր փոքրիկ թաթիներով չեչոտ սպունդ-ներից և հետաքրքրութեամբ նայում էր կամ մոյնին և կամ մօրը:

— Դէ՛ս գնանք աղջիկա, աեմտում ես, ծախողը հեռ ռամում է:

— Ա նրա վա ո՞րտեղեց է աւաքել այբքանը, մայրիկ: Գնանք, գնանք, եռցեաց տանը կը պատմեմքեղ այդ մասին:

Եկան տոն, եւ աղջիկը չէր հեռանում մօրից, այ-շարունակ խնդրում էր, որ պատմէ, թէ որտեղից է հաւա-քել յոյնը այբքան սպունդ:

Ա յ որտեղից. այն երկիրը որուեց ապրում են յոյ-ները, կողմներով ցրուած է, ծովի մէջ (ծովը մի մէծատա-րած ջուր է, այնքան մէծ, որ երբ միանգամ նորա մէջն ես մտնում, էլ շուտով ցամաքի երես չես տեսնում): այս ծովի ջրերում, ավելի մօտ, յոյներից աղքատները լողալով խորասուզնում են ջրի տակը և այնուեղից հանում են այդ

սպունգները: Զրիցը նոր հանած ժամանակը սպունգներն  
ամենեին նման չեն լինում մեր գնածներին. նորանք ամբողջ  
ջալէս ծածկուած են լինում լրճիւնով այնպէս, որ նու-  
րանց խոր ծակուտիներն ամենեին չեն նշմարդում: Այս լոր-  
ձիւնը նոյնպէս կենդանի է և ապլում է ծովի յատակում,  
թէ և ամենեին չէ կարող իւր տեղու փոխել: Բայց բանի  
որ նորան չեն պոկել իւր ծննդեան տեղից, նա ապլում է  
և շարժում իւր շօշափուկները: Այդ շօշափուկներով նա  
ջրիցը ընդունում է իրան սնունդը: Նորանք շատ անգամ  
բռնում են բաւական մեծ տարածութիւն ծովի խորքում:  
Երբոր ծամի տակից հանում են նորան, ստիպուած են լինում  
երկար ժամանակ լրանալով մաքրել այդ անշարժ կենդա-  
նու անախորժահոտ լրճիւնը, մինչև որ հասնում են նորա  
փափուկ՝ ծակուտինաւոր մասերին, որոնք հիմայ ել ներս  
են ծծում ջուրը, բայց հէնց սեղմում ես թէ չէ, նորից  
դուրս են թողում: Հէնց իւր այս յատկութեամբն է նա  
մեզ պիտանի և օգտակար: Ուրիշն մեր ունեցած սպունգը  
այն ծովային կենդանու ամրամասը, նորա ոսկրակազմն է  
կարծես: Երբոր կը գնաս ուսումնաբան, գուռ էլ թրջե-  
լով գործ կածես նորան գրատախտակը և բարեախտակը  
սրբելու համար, իսկ մինչև ուսումնաբան գնալո՞ նորանով  
մարմինդ կը լուանաս, լողանայու ժամանակ:

### Մեր դասատունը:

Մեր դասատունը մի մեծ սենեակ է: Այս սենեակում  
կայ յատակ, առաստող և չորս պատ, որոնցից երկուսը  
երկար են, իսկ երկուսը կարճ: Առաստաղը սպիտակացրած է,  
յատակը նեկած է գեղին գունով, իսկ պատերին թուղթ

է կացրած: Պատերում շինած են դուներ և լուսամուտներ:  
Լուսամուտներից մտնում է լոյսը, իսկ դռներից մտնում  
են մարդիկ: Սենեակի մի անկիւնում դրած է վառարան,  
երկրորդում՝ պահարան դասական առարկաների համար,  
իսկ երրորդում՝ գրատախտակ: Սենեակի մէջ աեղում  
շարած են նստարաններ աշակերտների համար, իսկ նստա-  
րանների առաջ դրած է սեղան և աթոռ ուսուցչի  
համար:

### Հացն ուտելով, բանն անելով:

Ապուցէր մանուկը լուսամուտի առաջեւը նստած  
պատրաստում է իւր դասերը. և շատ ժամանակ է, որ փայ-  
լուն պրել դրախ նորան հրաւիրում է: Բաւական չէ,  
ինչ կարդացլու: Վեր կաց, խաղերդ սկսիլու: Իսկ երեխան  
արեգակին պատաօխանում է, ո՛չ, պայծառ արեիկ, ոչ.  
այժմ խաղի միջոց չունիմ, թող առաջ դասերս վեր-  
ջացնեմ:

Մանուկը գրում է ուկարդում: Իսկ պատուհանի տակ,  
ճղան վերայ նստած, սիրուն թռչունն է երգում և միշտ  
այս բանն է ասում: Բաւական չէ, ինչ կարդացիր: Վեր-  
կաց, խաղերդ սկսիր: Իսկ մանուկը թռչունին պատասխա-  
նում է, ո՛չ, սիրուն թռչնակս, ոչ. այժ խաղի միջոց  
չունիմ, թող առաջ գործս վերջացնեմ:

Մանուկը դարձեալ նստած է զիրքը առաջին և լու-  
սամուտին էլ չէ նայում: Իսկ պարտիզն կարմիր կեռասը  
ականջի տակ միշտ ասում է: Բաւական չէ, ինչ կարդա-  
ցիր: Վերկաց, խաղերդ սկսիր: Մանուկը կեռասին պատաս-

խանում է. յՈչ. իմ քաղցրատես կեռաս, ոչ. այժմ խաղե  
միջոց չունիմ, թող առաջ դասերս վերջացնեմ:

Մանուկը կարդաց ու գրեց, բոլոր գործը վերջացրեց,  
գրեթերն արկղի մշջը գրեց, ապա դէպի այդին վագեց  
և համարձակ ճայնով գուշեց: ո՞լ էր ո՞ր ինձ  
հրափրում էր: Արեգակն այժմ նորա համար աւելի լաւ  
էր վայլում. վազրիկ թռչնակն իւր երգը նորան էր  
նուիրում. իսկ կեռասենին ծեծաղելով քաղցրիկ պառող  
էր ընծայում:

### Յոյմա մնիՏ ա ն ը: մքա

Քոյրը եղբօրը հարցրեց, թէ քեղ համար ո՞րտեղ է  
լցու տանը, թէ ուսումնարանումը: յՈւսումնարանն էլ վատ  
չէ, պատասխանեց եղբայրը. բայց առնեն աւելի լաւ է: Տանն  
են իմ հայրս ու մայրս, եղբայրներս ու քոյրերս: Հայրս  
մեղ համար աշխատումէ, մայրս կառավարումէ տունը:  
Աղախինը լուանում է մեր շորերը, իսկ մանուկները ուսա-  
նում են կամ խալում: Տանը ամեն բան ինձ ծանօթ է  
սեղանները, աթոռները և պահարանները: Ես վաղլըգում  
եմ ամեն սենեակներում, մանում եմ առանձնասենեակը՝  
հօրս մօա, ննջարանը՝ մօրս մօա, ես մանում եմ վահլիմը  
և ընդունարանը, մոնում եմ և խօհանոցը, ուր ճաշեց  
առաջ այնպիսի գեղեցիկ անուշահոտութիւն է բուրում,  
և մառանը, ուր կեռերի վերայ կախած են շատ պատռ-  
ական իրեղեններ: Տանը առաւատեան մենք նախաձաշիկ  
ենք անում, կէս օրին ճաշում ենք, երեկոյեան ընթրիք ենք  
անում, իսկ զիշերները հանդիսա քնում ենք մեր մահճա-  
կաների վերայ:

զուր ի՞նչ էր անում տանը, պատմեցիք եւ համեմատեցիք:

Մեր տունը մեծ չէ: Նա միայակի և ունի ութը  
սենեակ. դահլիճ, ընդունարան, սեղաննատում, ննջարան,  
մանկանոց, առանձնասենեակ, նախամաննեակ և խոհանոց:

Դահլիճը ամենամեծ սենեակն է, իսկ նախասենեակը ա-  
մենից փոքրը: Մանկանայը առանձնապէս մեղ համար է  
— այնտեղ մենք պատրաստում ենք մեր գասերը: Նա  
ունի չորս լուսամուտ և երկու դրուբ: Մեր սենեակը շատ  
լցու է, որովհետեւ պատուհանները մեծմեծ են: Սենեակի  
մէկ անկիւնում վառարանն է շինած, իսկ միւս անկիւնում  
դրած է մեր զրբերի և թղթերի պահարանը: Սենեակում  
կայ մէկ սեղան, և մի քանի աթոռներ: Պատերի վերայ  
կախուած են շատ կենդանիների և բցյսերի նկարներ. նու-  
րանք մեզ հարկաւորվում են զաններս պատրաստելու  
ժամանակ:

Համեմատեցիք մեր տունը եւ մեր սենեակը այստեղ նկարա-  
գրածի հետ:

Դասամ ած վիլլան զայ

Վայսաւարա բազա բազա

Կամաց ար կը վմաս վի այ

Խ լ ճ ի թ:

Խներն մասաթ բնուու զայ

Կէս զիշերին պայծառ լուսինն

Երկնքումը բարձրացաւ սմիւ

Ազոտ ճաճանները սփռեց զածթ

Եւ իրծիթը լցու առաւ:

Փոքրիկ խօւղ էր, զատարկ ցեխից

Անշքապէս նա շինած.

Մի զուռն ունէր ցած և նեղիկ:

Եւ մի երգիկ եւ բացած:

**Լուսնիակի աղօտ լոյսը**  
**Երդկիցը ներս թափանցեց**

Են այսողի աչքի առաջ Ա Ո  
մաղաշման Այս տեսարանը բացեց Ա Ո  
զբանշույ Ա Խրձըթի մէջ, երդկի տակը Ա Ո  
առ պահանձն Կողը հնոց կար շնչած Ա Ո  
չ զանա Նորա շուրջը երեք հոգի մաս ։ ողքափ ըմբռն  
այ ։ ցյանքործը ձեռքին նստատած Ա Ո  
առ ցիսնման Պառաւ կինը ձախարակը Ա Ո  
ցիսնման Վարպետութեամբ պատում էր Ա Ո  
Արագ արագ նա կազմում էր Ա Ո  
Նորիաման Էրժէ թելից վելաներ ։ Ա Ո  
աղջի պահանձն Համեստագէմ կոյս աղջեկը Ա Ո  
ամ զմազան Սանդերըն առաջը դրած ։ Ա Ո  
այնդաստաց Հանդարտութեամբ բուրդ էր գզում ։ Ա Ո  
իւր մայրիկի մօտ նստած ։ Ա Ո

**Երիտասարդ տղամարդը**

Արագ արագ տաշում էր, Ա Ո  
Եւ մի ժամկց ողջ գութանը Ա Ո  
Աղուան համար պատրաստ էր ։ Ա Ո

**Հաւը խօսեց Պառաւն մեղմով**

Զեռքի քուլան վեջացրեց, Ա Ո  
— „Կէս գիշերը, վաղուց անցաւ, Ա Ո  
Պէտք է քնել, “ նա ասեց ։ Ա Ո

**Անցան ժամեր Եւ խրձիթում**

Խոր լսութիւն էր տիրել Ա Ո  
Մինչ աղջեկըն արիաջան աշխաց Ա Ո  
Քնիցը վեր էր կացել ։ Ա Ո

**Լուսամուտից նա դսւրն նայեց**

Եւ շրթունքը մեղմ խաղաց.  
Արշալոյսր նոր բացվում էր,  
Կռւժն ուսեց, ջուրը դնաց:

ԽՈՃԹԻ ԱԵՐԱԾ:

Յած իսրայելի մէջ որի պատուհանները բաց էին,  
մութ գիշերին մէկ ձիթի ճրագ էր այրվում: Հնոցի (օջաղի)  
թոյլ կրակը կամ՝ բոլորովին հանգչում էր, կամ իւր աղօտ  
լուսով՝ լուսաւորում էր ծխից գեղնած պատերը: Խրճիթը  
շատ մաքուր աւելած էր. լուսամուտի կտաւէ վարագոյրը  
մթութեան մեջ սպիտակին էր տալիս. յատակը կոկած էր,  
առաստաղի գերանները երևում էին. սենեակի մէջ տեղը  
մեծ հնոց կար շննած, իսկ պատի մէջը մի փոքրիկ վառա-  
րան: Արևմտեան պատի մօտ երկար տախտ էր կապած և  
նորա վերայ հին կապերաններ էին սփռած, իսկ հիւսիսային  
պատի մօտ՝ դրած էր մէկ մահճակալ, որից բարձր, սիւ-  
նի վերայ կախ էր արած քաջ զիւղացու փայլուն  
զէնքերը:

Նկարագրեցէք մեր բնակարանի ներսը:—Յոյց տուէք եւ պատմեցէք, թէ ինչպէս էք գտնում աշխարհի չորս կողմերը եւ ի՞նչ անուններ էք տալիս նորանց:

Մկրտիչը ներս վազեց այդին, Խլեց իւր քոյր Սաթի-  
նիկի ձեռքից տիկինը և սկսեց վազվազել այգումը, նստած  
իւր փայտէ ձիու վերայ: Սաթինիկը կանգնած լաց էր լի-  
նում: Մկրտչի մեծ եղբայր Վահանը դուրս վազեց տանից:  
Մայր, լեզ, բ. տ. Ն. Տ.—Ղ.



Վահանը կամեցաւ ինքը խաղալ այս պատճառով իմեց  
Մկրտչի ձերքից տիկնն էլ ձին էլ: Մկրտիչը գնաց, գանչ  
գատուեցաւ հօրը. իսկ հայրը, լուսամուտի առաջ նստած  
բոլորը տեսել էր:

Ի՞նչ կասէր Մկրտչին հայրը:

### Ի՞նչպէս են շինում տները:

I.

Փայտէ տները շինում են հիւսները գերաններից:  
Քարէ տները շինում են որմնադիլները աղիւսից կամ տաշ  
շած քարից: Ամենից առաջ հիմքն են զնում: Հիմքի վե-  
րայ բարձրացնում են պատերը: Պատերի մէջ թողնում են  
բացուածներ՝ դռների և լուսամուտների համար: Երբոր  
պատերը բարձրացնում՝ պրձնում են, ապա գցում են նո-  
րանց վերայ գերաններ, իսկ գերանների վերայ կոճեր: Յե-  
տոյ նորա վերայ շինում են կտուրք: Կտուրք թեքուած է  
լինում, որ անձրւների ջուրը վերան չ'կանգնէ: Կտուր-  
ները ծածկում են հողով. երկաթով կամ եղեգով.

II.

Տունը դրսից պատրաստ է, բայց նորա ներփց գեռ-  
էլի շատ գործ կայ: Պէտք է յատակը և առաստաղը տախ-  
տակել, վասարանները պատրաստել, դռները կախել, լու-  
սամուտների փեղկերը հապցնել: Պէտք է պատերը կամ  
ներկել կամ թուղթ կպցնել: Երբոր տունը պատրաստվում  
է, նորա մէջ բերում՝ զարսում են զանազան կարասիներ  
և ամանեղիններ. յետոյ կանչում են քահանային: Քահանան  
օրհնում է տունը և այնուհետև մկում են նորա մեջ բնա-  
կուիլ:

ԱՊԱՍՏԱՑԵՐ մի առ մի, թէ ինչպէս են շինում տունը:

### Քար և երկաթ:

Ստեփանը ուսուցչի հետ գնաց գետի ափը: Այնակղ,  
գետի եղերքներում, ընկած էին մեծ մեծ քարեր, իսկ  
նորանց շուրջը մանր քարերի կտորներ և շատ էլ աւագ  
կար: «Այսքան աւագը ո՞րտեղից է այստեղ», հարցրեց Ստե-  
փանը: — Հէնց այս քարերից, պատասխանեց վարժապետը.  
գարնանը, երբ ջուրը սասափիկ մեծանում է, գարկառմէ է  
քարերին և քիչ քիչ նորանց մանրացնում է: ազո՞ւնա

— «Այնու ամենայնիւ քարը փայտից շատ ամուր է,  
նկատեց Ստեփանը. աչա մեր փայտէ տան պատերի տակը  
որձաքարեր են դրած, որոնք պահպանում են իրանց վե-  
րայ ամբողջ տունը և իրանք չեն փշրվում. երկե շատ  
երկար կը դիմանան տները, երբ ամբողջապէս շինած լի-  
նին քարից:

— «Եայելով թէ ինչպիսի քար է, պատասխանեց վար-  
ժապետը. կան քարեր, որոնք շատ շուտ են փշրվում: Բայց  
կան և այնպիսի քարէ տներ, որոնք միքանի հարիւր տա-  
րիներ են դիմանում: Եւ դու ի՞նչպէս ես կարծում, ո՞րն  
է ամուր, կայծաքարը, թէ երկաթը: Խիմի՛ր և կիմանաս:  
կայծաքարն ամուր է. իսկ միւս քարերը հեշտ կարելի է  
փշրել երկաթէ մուրճով: Սորա փոխանակ երկաթը ձգա-  
կան է և կուանուող: Ա՛յ, մտիկ արա, ինչպէս դարբինը  
կարմրացնում է երկաթի կտորը և թափում է նորան մուր-  
ճով: Երկաթն էլ ձգվում է: Այսպիսով կարելի է պատ-  
րաստել ամենաբարակ թերթ, կամ շինել բարակիկ լա-  
րեր: Քարից այդպիսի բան չես ստանալ, որովհետեւ նա  
փիրուն է:



## Մեր ընտանիքը:

Մեր ընտանիքը փոքր չէ: Աս ունիմ՝ հայր և մայր,  
երկու եղբայր և երկու քոյր. ես ամենից մեծն եմ: Մենք  
ունինք էլի մի պառաւ տատ: Նա շատ սակաւէ տանից  
դուրս գալիս, այն էլ ժամ է դուրս: Նա մեզ շատ է ախ-  
րում և վայի այսում է:

Իմ հայրս շատ է աշխատում. նորա աշխատանքովն  
ենք կերակրվում և հաղնվում մենք ամենքս: «Մենք ա-  
ռանց նորան ի՞նչպէս կարող ենք ապրել» ասում է շատ  
անգամ մայրս:

Մայրս տնտեսութիւն է անում. նա հրամայում է  
ճաշ և ընթրիք պատրաստել. նա գնում է ներքնատունը  
և մառանը: Բայց որ իմանաս, թէ ես ի՞նչպէս սիրում եմ  
նորա հետ մառան գնալ: Ամբողջ օրը մայրս մեզ հա-  
մար հոգում և շորեր է կարում: Նա սովորեցնում է մեզ  
խաշանքել և աղօթել: Մենք երեկոյեան քնելիս միշտ  
աղօթում ենք:

Ես մէկ փոքրիկ քոյր էլ ունեի, բայց նորան տա-  
րան գերեզմանատուն և զրեցին կանաչ ըլքակի տակ:  
Մայրս մինչեւ այսօր լաց է լինում մեր փոքրիկ նղեսարեթի  
վերայ:

Ի՞նչ անդամներից է բաղկանում մեր ընտանիքը: Համեմատեցէք  
մեր պատմածը կարդացածներիդ հետ:

## Հինգերորդ պատուիրանք:

Պատուիր քո հօրը և քո մօրը, որ քեզ բարի լինի  
և որ երկայնակաց լինիս երկրի վերայ:  
Ասացէք բոլոր պատուիրանքները: Ո՞վ է աւանդել մեզ այդ  
պատուիրանքները եւ ե՞րբ:

Մայրը և որդիքը: Վայ ոչ ուղան դու  
ուղարկածարար գրած դու արց

— Ինչի, մայրիկ, դու անդադար  
Մեր քրոջ անունն ես յիշում.  
Կու երկում է մեր էլեգան.  
Դու նկրդ ես մեզ տսում:

Ա՛ն, ես զիտեմ, լու երկրում է,  
Բայց այնտեղ ո՛չ հովիտ կայ,  
Ո՛չ ծաղկե, ո՛չ խոտ հոտաւէտ,  
Ո՛չ թիթեւներ գարունքուայ:»

— Մայրիկ, մայրիկ, երկն քումը

Հրեշտակներն են երդ երգում.  
Կարմրազգեստ զօրք է ընթանում.

Աստղերն ուրախ են ձեմում:

Բայց ախ, այնտեղ նա մայր չունի,  
Որ լուսամուտից նայէր,  
Թէ ի՞նչպէս նա ծաղկի փունջեր  
կանաչ հովտից կը քաղէր:

## Որբի օրը սև է:

«Եիկողայոսը ներս վագեց իրանց հարեանի տուն և  
տեսու, որ այնտեղ շատ անկարդ է. երեխայքը կեղտոտ,  
շորները պատուտուած, զլուխների մագերը գձըձուած և լը-  
սանրած: Փոքրերը վեր էին թափած կեղտոտ յատակի  
վերայ, ուրիշ երկուսն էլ կովում էին, իսկ ամենից մեծը  
հիւանդ պառկած էր և ոչոք չկար, որ նորան նայէր, ինսամք  
տանէր: Այս տմենը տեսնելով, նիկողայոսը միաքը բերեց,  
որ իւր հարեանի կինը մօտ օրերում վախճանուել է, և  
մտածելով թէ ի՞նչ դրութեան մէջ կը լինի ինքը, եթէ

իւր մայրը չը լինի, վազեց իրանց տուն և փաթաթու-  
եցաւ իւր ծնողի պարանոցովը

ի՞նչ է անում մայրը իւր որդոց համար:

### Օրօրոցի երգ:

Ննջիր, որդեակ իմ սիրուն,  
Ննջիր հանդիստ դու ի քուն.  
Քեզ ծծմայր ես վարձեցի  
Արծիւ, արեւ ու քամի:  
Արծիւն իւր բունը թռաւ.  
Արեւն սարից անցկացաւ.  
Քամին երեք օրից յետ  
Իւր մօր մօտ վազեց վէտ վէտ:  
Մայրը գարձաւ դէպ' նորան,  
Դթէ ուր էիր դու այսքան.  
Աստղերի հետ ՚իր կովում  
Թէ ծովերը տատանում: ո  
—Ես ծովերը չեմ շարժել,  
Աստղերին ձեռք չեմ տուել.  
Քնքոյշ մանկան հսկեցի,  
Իւր օրրանը շարժեցի:

### Պատ պէլ:

Պատը սաստիկ ծերացել էր: Նորա աչքերը լաւ չին  
տեսնում, ականջները ծանրացել էին. նորա ձեռները և  
տոները ծերութիւնից դողդողում էին, այնպէս որ գդալը  
բերանը տանելիս կերակուրը կաթկաթեցնում էր:

Այս բանը դուր չ'էր դալիս նորա որդուն ու հարսին:  
Նորանք ծերին իրանց հետ միևնույն սեղանի վերայ չէին նըս-  
տեցնում, այլ մի անկիւնում առանձին տեղ էին տալիս  
հաց ուտելու և կաւէ ամանով (քրեղանով) էին կերակ-  
րում խեղճին: Մի անգամ՝ հաց ուտելիս, ծերի ձեռքերը  
դողդողացին, ամանը վայրընկաւ, կոտրուեցաւ: Շատ սաս-  
տիկ բարկացան հարսն ու որդին խեղճ ծերի վերայ և  
այնուհետև վայտէ ամանով (կիւշով) էին կերակուր տա-  
լիս նորան:

Ծեր մարդը մի թռոռն ունէր: Միանգամ նա նստած  
յատակի վերայ տաշեղներից կարծես մի բան էր շինում:

Մայրը հարցրեց նորան, թէ ի՞նչ ես շինում, ո՞ր երբ դու և հայ-  
րիկս ծերանաք, նորանով կերակուր ուտեցնեմ ձեզ :

Հայրն ու մայրը նայեցան միմեանց երեսի և ամօ-  
թից կարմրեցան: Նորանք այնուհետև սկսեցին ծերին շատ  
պատուով պահել:

Պատուիր ծերին, որ ծերանաս: Ծերանաս, ծերի պա-  
տին իմանաս:

### Ուտելիք և խմելիք:

Առանց ուտելիքի մարդս քաղցածութիւնից՝ խկ  
առանց խմելիքի ծարաւութիւնից կը մեռնէր: Մարդս  
իբրև ուտելիք գործ է ածում բուսեղէն, մանղեն և աղ: Ամենա-  
նա խմում է ջուր, թէյ, սուրճ, գինի, գարեջուր: Ամենա-  
հարկաւոր ուտելիքը հացն է: Ամենակարեւոր և առողջա-  
րար խմելիքը ջուրն է:

Դուք ի՞նչ էք ուտում եւ ի՞նչ էք խմում:

Հացը թիում են կամ տանախիկները կամ հաց-  
թուխները; Հացը թիում են խմօրից; Խմորը հունցում են  
ալիւրից, ջրից և խաշեց; Ալիւրը աղում է ջրաջացպանը  
ջրաղացում ցորենից; Ցորենը հասնում է արտերում, հաս-  
կերի մէջ; Գիւղացիք դաշտը մշակում են. նոքա հերկում  
են հողը—ցել են անում, յետոյ ցելումը սերմում են ցորեն  
և ուրիշ հացահատիկներ. իսկ լստուած աճեցնում է նորանցը  
Աստուած ուղարկում է ամառ, ջերմութիւն, անձրև և  
փայլուն արեւ;  
Ի՞նչից եւ բնչպէս է պատրաստվում հացը:

**Ω n L P:**

Մկրտիչը գնաց գետի ափը, որ հսկում էր անտառի  
մօտով։ Գարնանը անտառում և դաշտերում շատ ձիւն  
էր ժողովկում։ Ձիւնը հալվում և ջուրը թափկում էր  
գետի մէջ, իսկ սորանից նա լայնանում ու ընդարձակվում  
էր։ Իսկ այժմ շոգ ու երաշտ ամառ էր, և գետը կարե-  
լի էր ոտով անցկենալ։ Մկրտիչը նկատեց, որ գետը չափանց  
բարակել էր, այնպէս որ նորա տակը երևում էին բոլոր  
քարերն անդամ։ «Ուր գնաց այնքան ջուրը»—մտածեց  
Մկրտիչը։

**Այսիր,** Մկրտիչ, երկնքին: Ի՞նչպէս ես կարծում.  
ո՞րտեղից են առաջացել այդ ամպերը: Նթէ նորանկ կա-  
րողանային խօսել, քեզ կը պատմէին անշուշտ) թէ ինչ-  
պէս են շոգիանալով բարձրացել ճահճամերից, բազմաթիւ  
գետերից, լճերից և ծովերից. ի՞նչպէս է քամին քշել նորանց

զէսլի մեզ և ի՞նչ են տեսել իրանք Ճանապարհին։ Ահա  
նորանք կը հաւաքուին, կը խառնուին միմեանց հետ, կը  
թանձրանան և կաթիլ կաթիլ ցած կը թափուին, և  
այն ջուրը, որ գնացել էր երկինքը, նորից կը թափու  
Ճահիճների, գետերի, ջերի և ամենայն վոս տեղերի մէջ։

Անջուր չէ կարող անպիտ ամենափոքր միջատը, չէ կարող աձիլ ամենափոքր բայսը:

Անջուր տղերում միայն քար ու աւազ է երեսում:  
Այսպիսի տեղերը ասվում են անապատ: Ճուրը լինում է  
աղբիւրներում, ջրհորներում, գետերում, լճերում. և ծո-  
վերում: Ծովային ջրերը դառն են և աղի: Գետերի և մի  
քանի լճերի ջրերը քաղցրահամ են: Լաւ ջուրը պարզ է  
լինում և թափանցիկ, ուս ոչ հոտ է ունենում, ոչ համ:

**Տաքութիւնից ջուրը եռ է գալիս ու գոլորշիանում է.**  
**ցբախից սառչում ու սառուց է դառնում:**

Դուք ի՞նչպիսի ջուր էք խմում. ջուրն ի՞նչ տեղերում է լինում.

## **Q u o t e s**

**Պուրը** նաւից արշաւելով  
կատաղաբար ձայն է հանում,  
Եւ ջրաղի յատակի տակ  
կարծես ամպեր են որոտում:  
**Անիների** խիսա շարժուելուց  
Ամբողջ յատակն է զողդողում,  
Եւ երկանի պարտուելուց  
Փոքրիկ լեզուակն է ըլսկըլսկում.  
**Սա** շարժվում է օրօրուելով  
Եւ լիք տաշի բերանն շարժում,

Որից վերին երկանի մէջ առաջ բան փաթը  
Մաքուր ցորեն է կաթկաթում. այլ գիտում  
Իսկ քարի տակ մանրուելով՝ անցնեման  
Ալիւր դարձած ամբարն թափվում  
Եւ ջրաղացը գեղեցկապէս նույն ան  
Իրեւ ծերուկ ալեզարդում:

**Կ ր ա կ:**

Սիմոնը գնաց դաշտը: Շատ ցուրտ էր և անձրեւ էր  
գալիս. նա դողդողում էր ամբողջ մարմնով: Սիմոնը մտաւ  
անտառը, չոր ճախեր ժողովեց, ջերից հրահանը հանեց,  
զարկեց կայծաքարին և կրակ արեց: Նա տաքացաւ, շորերը  
ցամաքեցրեց և իւր չոր հացի կտորը տաքացրեց, կերաւ:  
Կրակի առաջ նստած՝ Սիմոնը մտածում էր. «Ինչ լաւ բան է  
կրակը. առանց նորան ոչ հաց կարելի է թխել, ոչ կերա-  
կուր եփել և ոչ տաքանալ»: Տես, որքան գործ է շինվում  
զարբնոցում և գործարաններում: Եթէ կրակ չ'լինէր,  
մենք երկաթից ինչպէս պիտի շինէինք պայտեր, խոփ, կա-  
ցին և ուրիշ շատ բաներ: Ճշմարիտ, թէ երբեմն կրակից  
մենք ֆլաս ենք ստանում, բայց այդ էլ մեր անզգու-  
շութիւնից, մեր յիմար անհօդութիւնից: Մենք արեգա-  
կիցն էլ ենք տաքանում. նա էլ կրակի նման այրվում է  
երկնքում: Առանց արեգակի ոչինչ չէր ածիլ՝ ոչ դաշտե-  
րում, ոչ անտառներում և ոչ պարտէզներում, և բոլոր  
կենդանիք ու մարդիկ կրմեռնէին քաղցածութիւնից: Իսկ  
այժմ Աստուծոյ ողորմութեամբ ապահով ապում ենք:

**Օ դ:**

Դուռ օդ տեսել ես: Նա միշտ քեզ մօտ է և դու նո-  
րան չե՞ս տեսնում: Բայց կարելի՞ է լսել, թէ նա ինչպէս է

Ճայն հանում: Տեսնենք: Ահա քամին դողանջում է լու-  
ղովակների մէջ և շվացնելով ներս է մտնում տան  
ամենայն բացուածներից: Ահա նա խփում է պատու-  
հաններին և սասակի թող է բարձրացնում ճանապարհ-  
ներում: Եւ ի՞նչ բան է քամին: Սա օդն է, որ շարժվում  
է մի տեղից միւս տեղ է փախչում: Փախչելու ժամա-  
նակնա զարկում է որևէ իցէ առարկայի և լսվում է ա-  
զաղակ, շվաց. երբ փչում ես վողի, կամ սրինդ ես ա-  
ծում, կամ մորակի պատացնում ես, ամեն անգամ  
ձայն է լսվում: Փորձի համար մի թղթէ պարկ շինիր և  
մի փոքրիկ ծակ թողելով՝ փչիր, ուսուցրու նորան, իսկ  
յետոյ բռունցքով խփիր այդ փչած պարկին. պարկը  
սասակի կը ճայթի և կը պատռուի: Սա օդն էր, որ գու-  
լցրել էիր նորա մէջ քո բերանից. երբ ձեռքով խփեցիր,  
նա դուրս փախաւ պարկից: Երբ դու վազում ես, զգում  
ես, թէ ինչպէս է խփում օդը քո երեսիդ: Նշանակում  
է նա միշտ քեզ հետ է և դու նորանով ես շունչ քա-  
շում: Առանց օդի դու մի բուկէ էլ չես կարող ասլրիլ:  
Երբ որ դու լողակս ջրի տակն ես անում, քո չորս կողմէ  
ջուր է լինում: Բոլորովին այդպէս էլ օդն է շըջապա-  
տում քեզ ցամաքի վերայ, և դու նորան չես տեսնում  
այն պատճառով, որ նա շատ նուրբ է և թափանցիկ: Օդը  
մինչև անգամ քո ներսդ էլ է մտնում:

**Հ ա գ ն ե լ ի ք:**

Հագնելիքը կարում են քաթանից, մահուղից, զա-  
նազան չժերից և կաշուից:

Քաթանից կարում են սպիտակեղիներ: Քաթանը  
գործում են թելից: Թելը մանում են կանեփից կամ վու-

շեց; կանեփը և վուշը աճում են դաշտերում և պարտեզ  
ներում:

**Զիթը** նոյնպէս թելերից են գործում: Զթի թելը  
բամբակից են մանում:

**Մահուդէ** և բրդէ ապրանքները շինում են բրդէ  
թելից գործարաններում: Բուրդը խօսում են ոչնարներից:

**Մետաքսեղէն** ապրանքները մետաքսից են գործում:

**Մետաքսը** շերամներն են պատրաստում:

**Կօշիկները**, ծուղերը, հողաժամները և միւս ոտնաշ  
մանները կարում են կօշկակարները կաշուից: Մաշկնեն  
ապրանքները պատրաստում են կաշեգործները ձիու, եղան,  
ոչխարի և այծի կաշուից:

**Մուշտակները** կարում են ձօները մաղեղնից: Մազիւ  
ղէնը ստացվում է թաւամուղ գազանների՝ արջի, աղուէսի,  
կղնաքիսի մորթուց:

Գութ ի՞նչ էք հագնում: — Ո՞վ է կարել ծեր շորերը կը ի՞նչից:

**Շապիկն ի՞նչպէս աճեց դաշտում:**

I.

**Փոքրիկ Հայկանուշը** աեսաւ, որ իւր հայրը դաշտու-  
մը բռնով մանր ու փայլուն սերմեր էր ցանում, և հարցրեց:  
«Հայրիկ, այդ ի՞նչ ես անում:» — Վուշ եմ ցանում,  
աղջեկս, որ քեզ ու բարսեղի համար շապիկ դուրս գայ:»  
Հայկանուշը մոտածման մէջ ընկաւ: Նա երբէք չէր տեսուծ,  
որ շապիկներն աճեն դաշտում:

**Երկու շաբաթից** յետոյ յելը ծածկուեցաւ կանաչ  
մետաքսեայ խոտերով, և Հայկանուշը մոտածեց: «Ի՞նչ լու-  
կըլիներ, եթէ ես այսպիսի շապիկ ունենայի:» Մի քանի  
անդամ Հայկանուշի մայրը և քոյրերը դնացին արտը քաղ-

հանելու և ամեն անդամ՝ ասում էին նորան, թէ շատ լաւ  
շապիկ պէտք է ունենաս: Անցաւ էլի մի քանի շաբաթ:  
կանաչը բարձրացաւ, ցողունների զլուխներին կապտազյն  
ծաղիկներ երեւցան: «Իմ եղբայր Բարսեղի աչքերի նման  
են առանք, մոտածեց Հայկանուշը: բայց այդպիսի շապիկ  
ես ոչ ոքի հաղին չեմ տեսել:»

**Երբոր ծաղիկները** վայր թափուեցան, նորանց տեղը  
մնացին կանաչ և կորը զլուխներ: Երբոր զլուխները փոքր  
ինչ կարմիրեան ու չորացան, Հայկանուշի հայրը և քոյրե-  
րը արմատից փետեցին նորանց, խուրձեր կապեցին ու կո-  
թերի վերայ կանգնեցրին, որ չորանան:

II.

**Վուշի խուրձերը** չորացան, նորանց զլուխները կտրե-  
ցին, կալսեցին և պահեցին, իսկ կոթերը թրջոց դրին  
առուակի մէջ, վերան էլ քարեր դարսեցին, որ ջօփ երեսը  
չանեն — Հայկանուշը տիսուր նայում էր, թէ ինչպէս են իւր  
շապիկը ջռումը խեղտում: իսկ քոյրերը նորան նորից ա-  
սացին, թէ շատ գեղեցիկ շապիկ ես ունենալու:

**Երկու շաբաթից** յետոյ վուշը ջրից հանեցին, չո-  
րացրին և սկսեցին առաջ փայտով թակել կալում, իսկ  
յետոյ բագում, այնպէս որ խեղձ վուշի չոփերը բոլորը  
դուրս թափուեցան: Թակելուց յետոյ սկսեցին երկաթէ  
սանդերքով դգել, մինչև որ նա փափէց և դարձաւ իրեւ-  
մետաքս: «Ի՞նչ գեղեցիկ շապիկ ես ունենալու, ասացին  
նորից Հայկանուշի քոյրերը: բայց Հայկանուշը մըտա-  
ծում էր, և այդ ի՞նչ տեսակ շապիկ է: կասես թէ մեր  
բարսեղի շէկ մազերը լինի:»

այս առաջ քեզ ընկոր միջնական նարդա տևակ և այնուն  
: Եթափ վահաց չե իր առանձ ու չ զաքար նիշան  
մորթանուրաց միջնամասուր առանձ առանձնաց պատմար

**Գմեռուայ երկար գիշերներն եկան:** Հայկանուշի քոյ-  
րերը ճախարակները սարքեցին և սկսեցին վուշեց թել մանել:  
«Ոյս թել է, իսկ շապիկը ո՞րն է»— մտածում էր Հայ-  
կանուշը:

**Աշնանը Հայրը ոստայնը սարքեց խրճիթում, նորա վե-  
րայ հինած արեց և սկսեց գործել:** Մաքուքը սատանի նման  
անցուղարձ էր անում թելերի միջով և Հայկանուշը տես-  
նում էր, թէ ինչպէս թելերից քաթան է շինվում: Երբոր  
քաթանը պատրաստուցաւ՝ պրծաւ, նորան ցրտի տակ  
սառցըին և ձիւնի վերայ փռեցին, իսկ գարնանը ձգեցին  
կանաչ խոտերի վերայ, արեւի տակը, և վերան էլ ջուր  
ցանեցին: Քաթանը փոքր առ փոքր սպիտակեց ինչպէս  
ձիւն:

**Էլի ցրտեց,— ձմեռնացաւ:** Մայրը քաթանից շապիկ-  
ներ ձեւեց և Հայկանուշի քոյրերն սկսեցին կարել, այնպէս  
որ ջրօրհնէքին նա և իւր եղբայր բարսելը Հաղան ձիւնի-  
պէս սպիտակ շապիկներ:

Ո՞վ է շիննել մեր շապիկը եւ ի՞նչից:

## Մարդս որքան հմուտ է:

**Գիշատող գագանը իրան համար որջ է շինում ան-**  
**տառում, թռչունը բուն է շինում, միջատն էլ տեղա-**  
**ւորւում է ծառի որեւիցէ Ճեղքում:** Բայց նորանց ամենքին  
ցրտից պաշտպանում է մէկին իւր սեպհական բուրդը, միւ-  
սին փետուրը, իսկ երրորդին—Հաստ վերնամաշկը: Մարդս  
չունի այդ բնատուր զգեստները. բայց նա ունի խելք, որի

**օդնութեամբ ամեն բանին ճար է գտնում:** Նա գնում է  
անտառը, ծառերը կտրատում է և նորանցից իրան համար  
տուն է շինում: Երկրի մէջ նա երկաթ է գտնում, որից  
շինում է իրան համար կացին, բահ, արօր և այլ գոր-  
ծիքներ: Նա կարողանում է կաւից աղիւս պատրաստել և  
իրան համար տներ շինել: Իւր խրճիթի կտուրը, երբեմն  
և պատերի ծակոտիները նա մամառում է, որ անտառում  
բունում է անօգուտ: Տունը տաք է, բայց լոյս էլ է հար-  
կաւոր, և աշանա սարերում դժնում է թափանցիկ պըտ-  
կարդ, կամ հալելով աւազը ապակի է շինում: Պըտ-  
կարդը կամ ապակին լուսամուտի վերայ հաղցնելով, անց  
են կայնում լոյսը, չը թողնելով քամուն, որ ներս մանէ,  
տան մէջ: Բայց անախորժ եղանակին մարդս ինչպէս դուրս  
գայ տանից: Դորա համար նա վուշ ու բամբակ է ցանում,  
նորանցից թել է մանում, քաթան ու չիթ է գործում  
և շապիկներ ու ալպալուխներ է կարում: այծերի և ոչխար-  
ների բրդից նա շալեր ու մահուղներ է գործում: գազան-  
ների մորթուց էլ իրան համար տաք մուշտակներ է պատ-  
րաստում: Այսպէս մարդս ամենատեսակ նեղութիւնների  
ժամանակ կարողանում է օգնել ինքն իրան իւր հմառու-  
թիւնով:

**Յովհաննէսի Հայրն ու մայրը մեռան և նա մնաց**  
**որբ—անտէր:** Ոչոք չ'կար, որ նորան ու տացնէր, խմացնէր.  
ոչոք չ'կար, որ խեղճորբին հաղցնէր, տաքցնէր: Նորա դլու-  
խը գգգլուղւած էր ու չսանրած, նորա շորերը կեզտու-  
թուած ու պատուած: Ո՞վ իսեղճ որբեն կըգգուէ, ո՞վ  
նորան դիշերները կը պարկիցնէ, կաղօթէ ու կըքնացնէ: Ո՞վ

նորան շարից կ'զգուշացնէ, լսելք, զիտութիւն կ'ուսուցանէ  
Ի՞նչ կանէին Հովհաննէսի հայր նորա ծնողները, եթէ կենդամն  
Ալմէին:

## Սեղան և աթոռ:

**ՍԵՂԱՆԸ ՀԻՆՌՄԷ** ատաղձագործը փայտից և ունի  
երեսի տախտակ, արկղ և ոտներ: Երեսի տախտակը քա-  
ռանկիսնի կամ կորոր է լինում:

**Աթոռը** նոյնպէս շինումէ ատաղձագործը կիայտից;  
Աթոռն ունի թիկունք, նատարան և ոտներ: Նատարանը լիւ-  
նումէ կամ հասարակ, փայտէ, կամ հիւսած ծրոտից  
և կամ որպիսի և իցէ պատառից:

## Աղ և սպունգ:

Սի էշ, աղ բարձած, եկաւ մի առուակի մօտ և  
կամենում էր անցկենալ միւս կողմը. բայց անց կենալիս  
գայթեցաւ և ընկաւ ջուրը: Երբ նա դուրս եկաւ առու-  
ից, սաստիկ զարմացաւ, զգալով, որ իւր բեռը շատ թե-  
թեացել է: «Սա լաւ բան է, ասաց նա. Ճզի մէջ համ-  
ինքդ ես հովանում, համ բեռդ է թեթեանում»: Այս  
բանը չենք մոռանալ:» Մի քանի օրից յետոյ պատահեցաւ  
մեր էշին նոյն ջրից անցնել. բայց այս անգամ նա բեռ-  
նուած էր սպունգով: Առուակի մէջ տեղը հասներով,  
էշը ջրումը պառկեց անվերտով, որ նորից թեթեացնէ իւր  
բեռը. բայց հակառակն եղաւ: Եւ մեր էշը շատ էլ չար-  
չարուեցաւ, այնու ամենայնիւ տեղեց կանգնել չը կարս-  
ղացաւ ու խեղդուեցաւ:

**Ամսնեղէններ:**

# Ամանեղիններ

Ամանեղէնները շինում են փայտից, կաւից, ապա-  
կուց, երկաթից և պղնձից:

**Փայտից շինում են փայտէ, գտաթներ, տակառներ, տաշտեր, խոնչաներ, դեփուրներ, շերեփներ և գդալներ։ Տակառները շինում են տակառագործները, իսկ միւս ամենները—խոռաները։**

Բնուածները հասարակ կաւից շինում են խեցեղէններ՝  
ծաղկամաններ, կժեր, սափորներ, հասարակ գաւաթներ,  
թեփշներ, կովկիթներ, կճուճներ, կարասներ . . . Աղ-  
նիւ կաւից գործարաններում պատրաստում են պատռական  
ամանեղէններ՝ թեփշներ, գաւաթներ, պնակներ, թէանոց-  
ներ, (չայնիշներ) սլուտղեր (բլեղներ) . . .

Աղակուց շինում են բաժակներ, շեշտ, գըափին-  
կաներ . . .

Երկաթից, չուգունից և ժեշտից շնորհն մեծ մեծ  
կաթսաներ, սրճամաններ, չափեր, կովկիթներ . . .

Պղնձից պղնձագործները շինում են հեշտաեռներ,  
կաթսաններ, պղնձէ թեփշիներ, գաւալթներ, մեծամեծ  
սինիներ, թաւաններ, կովկիթներ, պղնձէ կժեր, շերեփներ,  
չափեր . . .

Պղնձէ ամանները կը եկաղները կը եկում են: Առաջ կը եթ  
ամանը թիւնաւոր կանաչով ծածկվում է:

— ۲۰ — پیش از آنکه بین نویم این را نبرویم، — پیش از آنکه این را نبرویم فرمایش می‌گیرم، لایحه این را نمایم، برابر با این را نمایم،

Ինչ կըցանես, այն կըհնձես:

Աղուէսը բարեկամացաւ կռունկի հետ և նորան իւր  
Մայր. լեզ. բ. տ. ն. Տ—Պ. 3

մօտ Ճաշի հրաւիրեց. «Ե՛կ, խնդրում եմ, իմ թանկագինքարեկամ, Եկ, տես քեզ ինչ պատիւ եմ տայես:

Կռունկն եկաւ: Աղուէսը եփել էր կերակուրը, մի  
երկու գդալ ածել էր թեփշում մէջ և հրաւիրում էր կը-  
ռունկին. հրամայեցէք, հրամայեցէք, վեր, սիրելի բարե-  
կամ, շատ պատուական ելիած է: Կռունկը խոր երկար  
կտուցով շատ կտկրտացրեց այն տափակ թեփշուն, բայց  
բերանը բան չընկաւ: Աղուէսը, զլու խը կախած, լիզեց ամենը:  
Երբոր կերաւ, վերջացրեց, ասաց կռունկին. ներիր, բարե-  
կամ, որիշ բան չունիմ, որով կարողանայի քեզ պա-  
տիւ տայ:

“Ծնորհակալեմ, բարեկամ—ասաց կոռունիք—լինդրեմ վաղը ինձ մօտ չնորհ բերէք ճաշեւ:”

Անուս օրը աղուէսը գնաց կռունկի մօտ: կռունկը կերակուրը եփել էր և ածել մի նեղաբերան ամանի մէջ, այն-պէս որ միայն իւր երկար կտուցը կըմննէր նորա մէջ: Նա ամանը դրեց սեղանի վերայ և հրաւիրում էր աղուէսին. Դամեցէք, մօտ եկ, աղուէս եղայր, կեր, պատուական կերակուր է: Աղուէսը շատ պարտեց, այս կողմն—այն կողմն ընկաւ, ամանը դրսից լիզեց, շատ ել հոտքաշեց, բայց բերանը ոչինչ չմտաւ: Իսկ կռունկը իւր երակար ու կեռ կտուցով կերակուրը հանում էր և ուտում: Երբոր կերաւ, վերջացրեց, յետ դարձաւ և ասաց իւր հիւրին. Ներիր, պատուկան բարեկամ, սորանից աւելի ուրիշ կերակուր չունիմ, որով կարողանայի քեզ հիւրասիրել: Աղուէսը, քաղցած փորով ու նեղացած, տուն դարձաւ և սուրանով նորանց բարեկամութիւնն էլ վերջացաւ:

**Յովհաննէսը և Վարդուհին:**

Երկու որր, Յովհաննէսը և Նորա քոյր Վարդուհին,  
Հեռու ճանապարհ էին գնում՝ մի ընթարձակ դաշտով : Եւ  
զանակը շատ տաք էր, արեգակը այրում էր նորանց : Յովհաննէսը  
ծափական ծափական էր : Քոյր իմ Վարդուհի, ես ծափակ, եմ,  
ջուր եմ ու զում : — Սպասիր, եղբայր շուտով Ճրշորին կը  
հասնենք : Գնումեն —

Բայց արեն բարձրից կրակ է թափում  
Կայացր Եւ խեղճ որբերին այլում, խորսվում:  
Ձանաւորի Զքչորն էլ, կարծես, դեռ շատ հեռու էր,  
Գնում ինձ գնում, նորան չեն հասնում:  
Յանկարծ Յովհաննէսը տեսնում է մի ձիու ամբակ  
Ճանապարհի մօտ ընկած, անձրեաջրով լիքը: Յովհաննէսը  
կամեցաւ նորանով մեղմել իւր ծարաւը.  
“Քոյց իմ վարդուհի, ահա ջուր, կաց, թողես այս  
սմբակից խմելու ու, եղայր, մի խմիր, թէ չէ, քուռակ  
կըդառնաս: Յովհաննէսն ախ քաշեց և նորից առաջ դնացին:  
Գնում մեն—

բայց արևեն բարձրից կրակէ թափում  
Եւ խեղճ՝ ողբերին այրում, խորովամ էր  
Զրհորն էլ, կարծես, դեռ շատ հեռուէր, իսկ  
զինումն՝ զնումը, նորան չեն հասնում:

Բայց արևն բարձրից կրակ է թափում  
Էւ խեղջ որբերին այրում, խորովում.  
Զրհորն էլ. կարծես, դեռ շատ հեռու էր,  
Գնումեն՝ գնում, նորան չեն հանում:  
Աւերջապէս Յովհաննէսը տեսաւ մի ոչխարի իջղակ  
Ճանապարհի մօտ ընկած՝ անձրևի ջրով լերը: Նա էլ  
չհարցրեց իւր քրոջը, մի փաքր յետ մնաց, վերառաւ կրծ  
զակը և բոլորը խմեց:

Բ.

Վարդուհին յետ նայեցաւ և տեսաւ՝ որ եղբայրը  
չէ երեւում. նա բարձր ձայնով կանչեց; բայց փոխանակ  
Յովհաննէսին նորա մօտ վաղեց մէկ սպիտակ գառը: Վար-  
դուհին իմացաւ, թէ սա ի՞նչ գառն է և սաստիկ արտասուե-  
ցաւ: Բայց էլ ճար չկար: Նա առաջ գնաց գառան հետ:  
Ճանապարհին նորանց պատահեցաւ մի պարոն: Ան-  
րուն աղջիկ, ծախիր այդ գառը ինձ վերայ, “—ասաց նա:  
Վարդուհին պատասխանեց, ո՞չ պարոն, այն գառը ծա-  
խու չէ. սա ոչ թէ իսկական գառն է, այլ իմ: Հարազատ  
եղբայրս է:”

Պարոնը խղճաց նորանց վերայ և երկուսին էլ վերա-  
ռաւ իւր մօտ. յեաց նա պսակուեցաւ Վարդուհու վերայ,  
իսկ գառանը պահեց—պահպանէց: Նորանք շատ երջանիկ  
էին ապրում: Քարի մարդիկը նորանց վերայ նայելով ուրա-  
խանում էին, իսկ չարերը—նախանձում էին: Ամենից աւելի  
նախանձում էր նորանց հարևան մի չար պատաւ: Նա միտք  
ունէր իւր աղջիկը պարոնին կնութեան տալ, բայց իւր  
մտադրութիւնը չկատարուեցաւ: Այս պատճառով պա-  
ռաւը մտածեց Վարդուհուն փորձանքի մէջ ձգել: Իւր  
նպատակին համելու համար՝ նա սկսեց հետեւ նորան

ամենայն տեղ: Յի՞ օր Վարդուհին գնաց գետի ափը զբոս-  
նելու: Պառաւը, որ ծածուկ գնում էր նորա յետեկց,  
բռնեց նորան, կրտեց վզեցը մի մեծ քար և զցեց գետը.  
յետոյ նորա շորերը հազգրեց իւր աղջիան և ուղարկեց  
պարոնի ապարանքը: Նորան ոչոր ըրծանաչեց. նոյն իսկ պա-  
րոնը խարուեցաւ: Միայն գառն էր իմանում ամեն բան.  
Նա ոչ ուտում էր, ոչ խմում, միշտ վազվզում էր գետի  
ափերում և ցաւալի կերպով մայում էր:

Սոր աիրուհին տեսաւ, որ գառը շատ է գորում—  
գոչում. նա վախեցաւ, որ չլինի թէ պարոնը հասկանաց իւր  
խարդախութիւնը այս պատճառով դնաց նորա մօտ և  
խնդրեց, որ գառանը մորթել տայ: Պարոնը զարմացաւ, ո՞վ ի՞նչ  
ի՞նչ բան է—մտածում էր նա—իմ կինը շատ սիրում էր  
այս գառանը. իսկ այժմ խնդրում է, որ մորթել տամ:“  
Այսու ամենայնիւ նա համաձայնեցաւ: Պառաւի աղջիկը  
հրամայեց, որ գանակները սրեն, հնոց պատրաստեն և  
կաթսաներով մոխ համար ջուր տաքայնեն: Գառը հառ-  
կացաւ, որ ինքն էլ երկար ժամանակ չէ կարող առլիւ,  
վաղեց գետի ափը և սկսալի ձայնով երգեց.

Վարդուհի, իմ քոյրիկ, մոար ըստ մասն  
ինձ կամենում են մորթել. զատ զատ: յէն  
Բարձր հնոց են շնել,  
Մեծ կաթսաներ են զրել, գառաւ իստ  
գանակ ու գաճակ սրել:

Վարդուհին ջրի տակից եղբօրը պատասխանում է.

Ան, սիրել Յովհաննէս,  
Ծանր քարը վեզս կարեց,

Ասոյք զիս թաւշեայ խոտ ձերքիս ածեց, : Ինձ մկաննեւ  
ըդմանէ աՄանր աւալ կուրծքս ծածկեց; առաք այն  
• Պահք ըմբ Արդուշին թող զոհ լինի, մարտ ըմբոց  
ըմբարու Քո փոխանակ նա մեռնի,  
Միայն թէ քո լայն ու կոծ,  
Քո մահուան լուրն չըլսի:  
Զար պառան ինձ գետ ձգեց, և նոր մաս  
Փեսաս ու տունրս խեց.

*What would you do?*

Digitized by srujanika@gmail.com

Ո՞ր եղբօրս էլ կըմորթէ .

Պարոնը շատ հեռու չէր. նա լսեց՝ ինչպէս վարդում  
հին և իւր եղբայրը խօսում էին միմեանց հետ, և կանչ  
չեց իւր մարդկանցը.

Մարդիկը հաւաքուեցան, ուռկանները ձգեցին և վար-  
դուհուն հանեցին: Սորա պարանոցի թուլ կորեցին, պարզ  
ջրում լողացրին և վերան մաքուր ասւան ձգեցին: Վար-  
դուհին ուշի եկաւ և առաջուանից աւելի գեղեցկացաւ:  
Նա փաթաթուեցաւ գառանը և կամենում էր համբուրել  
նորան: Բայց գառն էլ գտուր չէր, այլ Յովհաննէս էր դար-  
ձել: Պարոնը տարաւ նորանց տուն և այնուհետեւ նորանք  
երեքը միասին առաջուանից աւելի երջանիկ սկսեցին ասլ-  
րել. իսկ պառաւի աղջկան ծառաները մտրակով տանից  
դուրս արին:

T u b l e

Ապա՛, սիրուն շնիկ, կարդա՛, թէ ի՞նչ է զրած իմ  
զրքումը,—ասաց Հայկը իւր փոքրիկ շանը: Շունը մօտե-  
ցաւ զրքին, հոտոտեց ու հեռացաւ: Անչ իմ բանն է գեր  
կարդալը—ասաց նա—ես տունը կրպահպանեմ, գիշերները  
չեմ քնիլ ու միշտ կըհաջեմ: Պայլերին կրվախեցնեմ, որսի  
կըդնամ, նապաստակ կըբռնեմ, բագեր՝ կըդժնեմ—իմ կողմին  
սա էլ բաւական է:

### 2.3 $\Omega_{\text{UV}} P_{\text{min}}$ :

իմ հօրեղբայրս ունի հրացան, որսի պարկ և շատ  
որսի շներ։ Մօտ օրերումն հօրեղբայրս վերառաւ իւր հրաշ-

ցանը և ասաց «Ե՞կ ինձ հետ որսի գնանք: Աղուէսը  
մեր հաւանոցից դարձեալ երկուհաւ է գողացել. ես կա-  
մենում եմ նորան սպանել:» Մենք գնացինք և վերառանք  
հետներս երկու քերծէ և մէկ որսորդ շուն: Քերծէները  
շուտով գտան գազանի հետքը և մտան անտառը: Մենք  
միայն նորանց հաջելու ձայնն էինք լսում:

«Սստենք այս թվի տակ—ասաց հօրեղբայրս—իմ  
խելօք քերծէներս այս րոպէիս դուրս կըհանեն դէպի մեզ  
աղուէսը:»

Սստեցանք և սպասեցինք: Շները շատ հեռուից էին  
հաջում: Ես կարծեցի, թէ նորանք երբէք չեն յետ դառ-  
նալ: Բայց ահա հաջոցը քիչ քիչ մօտեցաւ . . . յան-  
կարծ թվերի տակից դուրս ընկաւ մի նապաստակ և մի  
շեկագոյն աղուէս նորա յետելից: Հօրեղբայրս հրացանը  
արձակեց և աղուէսը թրսպատաց, խակ նապաստակը վա-  
խեցաւ, ականջները մէջքին կրցրեց, գետնից կտաւ ու տե-  
ղեցը չ'շարժուեցաւ: Մենք նորան ողջ ողջ բռնեցինք և բե-  
րինք տուն: Ես հիմայ էլ կերակում եմ նորան կաղամբով:



### Կատու:

Փիշիւ—փիշիւ, դուչար փոքրիկ, շատ միրուն ես, խո-  
րամանկ ես, մետաքսագատ թաթեր ունիս առւր եղունկով

մատներ ունիս: Ականջներդ շուտ են լսում, մեծ աչքերդ  
միժնում փայլում, երկար բեխերդ ոլորած, խեղճ միներին  
մահ ես նկւթում:

Քո ընկերիդ երբ տեսնում ես, պրչդ այս—այն կողմն  
ես շարժում, մէջքդ ծալում կռացնում, աչքերդ փակ  
մրուցնում, բայց թէ յանկարծ մի խեղճ մուկիկ մի ան-  
կիւնից լոյս է ընկնում, քո պողպատեայ թաթիկներով  
գլխին խփում ես, սպանում:

### Երկու միներ:

Փոքրիկ մուկը մեծին ասաց. Ի՞նչքան չար և ժլտէ  
մեր տանուտէրը. տունը կատուներով լրել է, այս բաւա-  
կան չէ, ամենայն տեղ էլ թակարդներ է դրել և ամեն  
կերպով կամենում է մեզ ջնջել: Միթէ մեզ շատ բանէ  
հարկաւոր, մի կտոր ճարպ, քիչ հացի փշանք, մի քանի  
հատիկներ ինձ բաւական է:

— Ճշմարիտ է, պատասխանեց մեծ մուկը. մեզ ամեն  
մինիս քիչ է հարկաւոր, բայց մենք էլ քիչ չ'ենք:



### Ակներ:

Հաւաքուեցան միները իրանց քնի առաջ, մեծերը  
փոքրիրը: Նորանց աչքերը սե սե էին, թաթերը փոքրիկ,

ատամները սուր սուր, ականջները կիք ցցուած, իսկ աղիները երկար, կախ ընկած:

Հաւաքուեցան, խորհուրդ արխն—մատածեցին թէ, ի՞նչ աղէս անեն, որ չոր հայի կտորը բունը քաշեն:

Ո՛, գգուշացէք, ընկերներ, ձեր բարեկամ վիան ձեզ նից հեռու չէ. նա ձեզ շատ է սիրում. միշտ ցանկանում է իւր փոքրիկ թաթով ձեր մեջը քորել, ձեր պոչեց բռնել, կաշեներդ քաշել:

Ինչի մուկը շարունակ կոծումէ. Ի՞նչ կոծող կենդանիներ գիտէք դարձեալ. Համեմատեցէք մուկը սկիւրի, իսկ սկիւրը նապաստակի հետ:

### Մկան համար կատուն էլ գազան է:

Մուկիկը վազեց մկան մօտ և ասաց նորան. բարեկամ, բարի համբաւ կայ, լսել ես. ասում են, որ կատուն առիւծի ճանկն է ընկել: Փառք Աստուծոյ, մենք այսուշ հետեւ շատ հանգիստ կըլինիք:

Մեծ մուկը պատասխանեց. «Շատ մի ուրախանար, աչքի լոյս և իսուր յոյսեր մի կապիր. թէ որ բանը կռուի հաստ, հաւատա, որ առիւծը կենդանի չըմնայ. կատուից գորել գազան չ'կայ:»

### Գայլը և կատուն:

Գայլն անառից փախաւ գիւղը, ոչ թէ հիւր լինելու, այլ իւր զուլին ազատելու համար. նա ամբողջ մարմուլ զողում էր, որովհետեւ որսորդներն իրանց շներով յետելիցն ընկած հալածում էին: Կա ուրախութեամբ առաջի հանդած դունից կըմնար էին: Կա ուրախութեամբ առաջի հանդած դունից կըմնար էին:

Էւսփիշեկ, իմ բարեկամ, ասա՛ շուտով, այս գիւղացիներից ո՞րն այնքան բարի կըլինի, որ ինձ հիւր ընդունի և չար սատիներից աղատի: Դու լսում ես շների հաջոցը և փողը ձայնը—այդ, ամենը իմ յետելիցն ընկած:»—Շուտով ինդրիք Ստեփանին, նա շատ բարի մարդ է, ասաց կատուն: «Այդպէս է, բայց ես նորա ոչխարը յափշտակել եմ:»—Ուրեմն փորձիք կարապետի մօտ օղնութիւն գըտնել:—«Վախենում եմ», որ նա էլ ինձ վերայ բարկացած լինի, որովհետեւ նորա էլ այծն եմ գողացել:»—Վազիրուրեմն Մարկոսի մօտ: «Ո՛չ, ոչ, չեմ կարող. նա դեռ գարունը կայրացած է ինձ վերայ. ես նորա հորժը լափել եմ:»—Այդ վաս բան է, բայց հաւատացած եմ, որ քեզ սիրակոսը կըպաշտպանէ: «Ա՛ն, կատու եղբայր, նորա էլ գառն եմ կերել:»—Ինչպէս աեսնում եմ, գայլ, դու այս գիւղում ամենըն էլ վնաս ես հացրել—ասաց կատուն—ուրեմն էլ ի՞նչ պաշտպանութիւն ես որոնում այստեղ: Զէ, այս լսու իմանաս, որ մեր գիւղացիք այնքան յիմար չեն, որ իրանց վնասակար թշնամուն պուշին—պաշտպանեն: Եւ իրաւունք ունին. դու ես մեղաւոր. ինչ որ ցանել ես, նոյնը և հնձիր:

### Դեղձանիկը և Ասխակը:

Մի տան պատուհանից կախած՝ վանդակի մեջ երգիւմ էին գեղձանիկը և տիսակը: Հենց որ սոխակը կ'ակսէր երգել, փոքր որգին հօր առաջը կըկարէր, միշտ թռչունին ցցց կըտար, մօտ կըգնար ու կասէր, թէ ամ է, որ երգում է լսու երգեր:

Հայրը վերառաւ երկու թռչունն էլ, տուեց որդւուն և ասաց. «Ապա իմացիր, որն է սորանցից լսու երգողը:»

Մանուկն իսկոյն դեղձամփկլցոց տուեց ուհա սա է լաւ  
երգողը, հայրիկ.՝—ասեց: Եթե ինչ մասքան մզն չկ  
առի և պաշտ դիմէ ունեալ ու պատրաստվածէս  
առջ— ու ծաղկեց ու սպանեց ու ուժան բռն— զօհու ինք  
բռն և բառ պատ առարկան պատրաստ պատրաստ լուս  
մատացման, պատասխան ու պատասխան առարկան  
առջ. ու մատացման պատրաստ պատրաստ պատրաստ պատրաստ



## Թռչնակ:

Երեկ բացի ես դռնակը այն բանտի,  
Որի մէջը լսեղը թուչնակն էր բանտարկուած.  
Նորան տուի աղատութիւն ցանկալի,  
Եւ դաշտերին—իրանց երգիչը կորած:

Թուաւ—անցաւ նա նուրբ օդը ճեղքելով,  
Պայծաւ օրուայ թարմութիւնը զգալով.  
Թուաւ—անցաւ աղատութիւն շնչելով,  
Եւ ինձ համար մեղմ, մնջեկ աղօթելով:

## Յարդախ կատու:

Սի տան բազում միասին ապրում էին կատուն, այս  
ծը և ոչխարը, և ապրում էին շատ սիրով։ Եթէ մի  
փունջ խոտ էին ձարում, այն ու ոչխարը միասին էին  
ուտում, իսկ եթէ միտ էին ձանկում, մրայն վիսօին էր  
մնում։ Բայց սա դող էր և յափշտակող ուր մի բայց բան  
էր տեսնում, դէպի այն կողմն էր նայում։ Միանդամ մը  
լաւան կատուն մօտենում է իւր ընկերներին, մօտենում է

Եւ ողբալով լաց լինում։ Այժմ ու ոչխարը հարցնում  
են նորան։ «Սիրուն փիսօ, ինչի՞ ես լալիս, երեք ոտիդ վեշ-  
րայ ման գալիս, չորրորդ ոտով կազի տալիս։» Կատուն պա-  
տասխանում է. «Նշպէս լաց չլնիմ. ինձ պառիկը շատ  
թակեց, ականջներս պինդ քաշեց, ոտիս մէկըն էլ կոտրեց—  
սա դեռ քաւական չէ. ինձ համար թակարդ լարեց։»  
«Բայց ինչի՞ դու այդպէս խիստ պատճուեցար,» հար-  
ցրին այծն ու ոչխարը։

— Ա՛յս, այս, որովհետեւ պատահմամբ մածնի կծուծը  
տեսայ, վայր դցեցի, կոտրեցի, միջի մածունը կիրայ։

«Գողը պատճի արժանի է. մի՛ գողանար և չես պատ-  
ճուի,» ասաց այծը։

Կատուն նորից սկսեց լալ և ասել. «Ան, պառիկն  
ինձ շատ թակեց. թակեց—թակեց ու ասաց՝ այսօր փեսս  
պէտք է գնյ, որտեղից մածուն ճարեմ, նորան ինչով կե-  
րակրեմ, ել մի ուրիշ ճար չունիմ, այծն ու ոչխարը կը-  
մորթեմ»:

Այսն ու ոչմարը հառաջեցին և ասացին. Ա'ս, դու  
անպիտան կատու, բերանդ կրակ ընկներ, որ մեզ այսպիսի  
վորձանքի մէջ չկցէիր»:

Այս ասելուց յետոյ նորանք երեքն ել սկսեցին խելք  
խելքի տալ — մտածել, թէ ի՞նչ կերպով կարողանան այս  
փորձանքից ազատուել — մտածեցին ու վճռեցին, որ երեքն  
ել միտսին իսկոյն վերկենան՝ փախչեն: Այսպէս ել արին:

II.

Կատուն, այծը ու ոչխարը փախան—գնացին, սարեցակը ու դաշտերով անցկացան, անապաաը թռղին, հովեալ մժան, կանքնեցան ու վճռեցին, որ զիշերն այդ հըն-

ձած հովտում՝ անցկացնեն իսկ այդ տեղ հարիւրաւոր խոսի դէղեր կային։ Այսի մասն անզու մը այս Գիշերը մութն էր ու ցուրտ ի՞նչպէս անէին, ո՞րակե զեց կրակ ճարէին, բայց կատուն շուտ հնաբք գտաւաւ, ծառ ոի ող կեղեներ ճարեց, խուշուր հաւաքեց, այծին ու ոչ խարին էլ հրամայեց, որ ճակատ ճակատի խփեն։ Ոչխարն ու այծը ճակատ ճակատի խփեցին, պողերիցը կաշեր թափուցին և խուշուրները վառեցին։ Այս համար շաւ—ասայ կատուն—հիմա եկէք տաքանանք։ Այս ասաց ու շատ չ'մտածելով՝ կրակը խոսի դէղին մօտեցրեց և ամբողջ դէզը վառեց։

Դեռ նորանք կարգին չէին նստել կրակի շուրջը, մինչ էլ տեխնես, այս կողմիցը մէկը ծանր ծանր մօտ եկաւ, այս այն կողմը նայեցաւ ու մեր ծանօթներին ասաց ։ Յողէր, եղաբք, մի փոքր տաքանամ ու հանգստանամ, ես այսօր մի ո՞նցոր տկար եմ։»

— «Գալուստ բարի, արջ եղայր, ասաց կատուն։ ո՞ր տեղեց ես դալիս։ Այս գնացել էի մեղուատոն, մեղուներին տեսութիւն անելու, առողջութիւնները հարցնելու, բայց չար զիւզաց պատահեցայ և նորանց հետ կոռուցայ։»

Այսպէս խօսելով նորանք ամենքն էլ սկսեցին գիշեր անցկացնել։ ոչխարն ու այծը կրակի մօտ պառկեցան, կատուն բարձրացաւ միւս դէզը զլուխը, իսկ արջ եղայրը դէզը տակը մօտաւ։

III.

Արջը քնեց, այծն ու ոչխարն էլ նմծեցին. միայն զող կատուն չի քնած և բոլորը տեսնում էր։ Կէս գիշերին նա

տեսաւ, որ եօթը գայլ ուղեղ իրանց վերայ են գալիս։ Ժթու—ժթու, այս ինչ մարդիկ են, ասաց գայլերից մինը այծին ու ոչխարին. եկէք, պարոններ, կամ մեղ հնազանցուեցէք, կամ մեղ հետ զօր զօրի տուէք, կոռուեցէք։ Այծն ու ոչխարը միկացին, մայեցին ու երկիւղեց չէին իւմանում ինչ անեն։ Կատուն դէզի զիսից բերանը բացեց և սկսեց խօսել. գայլ բարեկամ, ասաց նա, քեզ խորհուրդ կըսամ, որ մեր մեծաւորին չ'բարկացնես. նա, Աստուած հեռու տանի, այսօր նեղացած է. երբոր բարկացաւ, ոչ ոքի չի խնայիլ. առևնչքին կըկոտորի։ Նայիր նորա երկար մուրուքին, հէնց նորանումէ նորա բոլոր ոյժը։ Բոլոր գազաններին մօրուքով է սպանում, պողերով միայն կաշին է հանում։ Աւելի լաւ է պատուաւոր կերպով և ազնուաբար ինդիքք, թէ կամենում ենք քո վորը եղօր հետ խաղալ, որը դէզի տակ պառկած է։»

Գայլերը այծին դլուխ տուին, գնացին արջի մօտ և սկսեցին խաղալ։ Արջը համբերեց, համբերեց և վերջուիւր ծանր թամբով գայլերի զիսին որ ըբամմիեց, սկսեցին վայ նանի կաչել։ Գայլերը զուրս թափուեցան դէզի տակից և սկսեցին վախչել։

Այծն ու ոչխարն էլ, քանի որ արջը գայլերի հետ խաղում էր, կատուն մէջքների վերայ նստեցրին և դէպի տուն վաղեցին. Յթիմարութիւնէ, ասացին, աննազատակ թափանել և վորձնանքի մէջ ընկնիլ։

Պատաւն ու իւր մարդը շատ ուրախացան, որ այծն ու ոչխարը նորից տուն գտրձան. իսկ զող կատուին էլ, իբրև վարձ, միքանի փափուկ ջիպոտ ուտեցրին։ Խարձան այս մէջ Երանեալարանի մասց ող զուու և իւրը մասնաւ ազու. և զնումու մասնաւ ուղարկաւ։ Ի սարսաւ ըմբի զմու, զմբու, զմբու մասնաւ իւր ու բժանաւ։ Դ



**Q** **P:** Հնաւուցու ըմբ օհեայ  
ա . Ա Խաւուցու Խուացու Վիշտանու

Զին խելացի կենդանի է: Աւ մարդս նորանից ո՞րքան  
օդուտ է սահնում: Դուք նորան ամենայն տեղ տեսած  
կը լինի.ք՝ դաշտերում, երբ նա քաշում է արօրը, — ձանա-  
պարհներում, երբնա ամենայն ջանք գործ է դնում, որ դա-  
րի վայրի տակից վերև հանե բեռնած սայը, — ախոռումը,  
երբ նա ախոռժակով ու առումէ զարին, — արօտատեղեա-  
րում, երբ նա ազատ արածում է ջոկի մէջ: Բարի, չար-  
քաշ, գեղեցիկ կենդանի: Ապա մտաբերեցէք, թէ ի՞նչ  
առանձնութիւններ էք նկատել նորանում — ո՞րպիսի կեն-  
դանի է նա: Նորա զլուխը երկայն է, բայց գեղեցիկ. դնչի  
ծայրը դուրս ընկած է: Ականջները մանր են և դէպի վեր  
են նայում. երբ ձին մի օտարօտի ձայն է լսում, կամ երբ  
քայլերից կամ ձայնից ձանաչում է իւր ակրօնը, այդ  
ականջները խցում, վեր է ցցում: Ականջների մէջ աեղու,  
ձակատի վերայ, նա մի մազէ փռնջ ունի, իսկ նորա գե-  
ղեցիկ և խոշոր աչքերը ո՞րքան իմացականութիւն են ար-  
տայայտում: Ուշադրութեամբ դիտեցէք և նորա ատամնե-  
րը. առաջնից նա ունի թիականման նարդոներ, որոնք վեց-

վեց են իւրաքանչիւր ծնօտի վերայ. սորանցով է նա կծում՝ կտրում խոտը. իսկ յետին կողմումը նա ունի վեց—վեց հաստ ատամներ վերևից և ներքևից. սորանք ձիու սեռա-նապահներն են, որոնք այնպէս լայն են և խորդ ու բորդ, որ կասես աղորիք լինին—և իսկ որ ձին սորանցով աղում, մանրացնում է խոտը, դարմանը, գարին, որ յետոյ ստա-մոքսի համար դժուար չ'լինի նորանց մարսելը:

Զիու պարանոցը կորանում է, որպէս սագինը. պարանոցի վերայ ունենում է երկար բաշ։ Նորա կուրծքը լայն է ու դուրս ընկած, իսկ ամբողջ մարմինը կոլորաւուն, երկարաձև։ Աչքին նստելու տեղը տափակ է։ Եւ ի՞նչ պէս վսեմ, գեղեցկատեսիլ ձիանք են լինում, որոնք արշաւում են այնպիսի թեթևութեամբ, որ շատ անգամ չես խմանում, թէ ինչպէս են փոխում իրանց բարակ և երկար ոտները։ Ձիու յետին ոտներն առաւելապէս ուժեղ են, ում որ նա նորանցով աքացի է տալիս, շատ անգամ հէնց տեղն է մնում։ Գայլերն էլ են վախենում ձիու այդ հարուածից։ Ձին ոտի վերայ սբքակ ունի. սա միևնոցն է, ինչ որ մեր եղունգը, այնպէս որ, եթէ կտրես էլ նորա ծայրերից, նաև ամենելին չե զգալ։ Նա իւրաքանչեւր ոտի վերայ մի եղունգ ունի. նշանակում է մատն էլ մէկ հատ է։ Ձին ընթանալու ժամանակ իւր մատի եղունգը, այսինքն սրմբակն է գետնին կպցնում։ Էլ հարկաւոր չէ յիշել ձիու գեղեցիկ, երկայնամադ պոչը, որով նա սաստիկ զանազան կում է միւս միասմբակներից։

**Ըստանի և վայրենի ձիաններ։ — Միասմբակ  
կենդանիներ։**

Ըստարձակ դաշտելում ազատ վաղում են վայրենի  
(խամ) ձիանների ամբողջ ջոկեր։ Նորանք երկչութեն, մար-  
Մայր լեզ. բ. տ. Ա. Տ—Ղ. 4

զու մօտիկ չեն թողնիլ : Նթէ մէկ տեղ տեսնեն ընտանի ձիւ աններ, նորանց կրշտապատճեն և կըդրաւեն իրանց կողմը — այսինքն թէ մարդուն մի ժառայիր, եկ, մեզ մօտ ապրիր : Ընդարձակ դաշտերում ապրողների համար միակ հարստութիւնը ձիւնը ձին է, որոնց ջոկերը, նթէ փոթորիկներից չեն ցրուած, հեշտոթեամբ է քշվում դէպի ջուրը . այստեղ քուռակներին բռնում են կապում, որ նորանց մօր կաթը կթեն : Կթելուց յետոյ նորից արձակում են անապատը : Այս բանը կրկնվում է ամենայն օր : Կաթը թըլթուեցնում են և նորանից շինում են կուրմա—մի տեսակ՝ խմբէք որ թեթև զինու ներգործութիւն է ունենում : Խամ ձիւ ուն սովորեցնելու համար նորան որսում են երկար պարաններով ու երեք ոտը կապում են, բայց այնպէս, որ կարարանայ կանգնել : Նորա բերանը սանձ են գցում, մէջքին բարձ են դնում, վերայից էլ փորքաշով պինդ կապում են : Զիապանը նստում է մերի մէջքի վերայ ու բարձից պինդ բռն նում է . այդ ժամանակ յետ են անում նորա ոտների կապերը . ձին ցատքում է, սկսում է փախչել ամենայն արագ գութեամբ, ուր որ աչքը կտրում է : Բայց ձիապանը ամոռը նստած՝ դեռ մորակով էլ խփում է, վերջապէս ձին յոդ նում և անձնատուր է լինում : Այն ժամանակ արդէն սանձի օգնութեամբ նորան կարելի է դէպի տուն դարձնել : Զիու տուած օգուտը կովի տուածիցը փոքր չէ . նորա կաթը լսում են ու միսն ուտառում, և ձիու միսը կովի մեջց պակաս չէ : Նորա կաշուից փոկեր են շինում . քուռակ ներինը ստնամնների համար էլ հարկաւորվում է, պոչի և բաշի մաղերից թոփեր և մաղեր են հիւտում : Բացի սուրանից ձին շատ խելօր, շատ բանական կենդանի է, և շատ լաւ յիշողութիւն ունի ; Նա միշտ ճանաչում է իւր տիւ բոջը . երբ տէրը մի խօսք է ասում, կամ մի նշան է տա-

լիս, նա գնում է նորա յետելից. Եթէ ուրիշ մարդ է նո-  
րան հեծնում, խվզյն հասկանում է: Եթէ միանգամ մի  
փարախում եղած է, միշտ աշխատում է ձանապարհից դէ-  
պի այն կողմը դառնալ. Եթէ մուգ գիշերին ձանապարհի  
կորցրել ես, թոյլ տուր քո ձիուն, որ տանէ քեզ, ուր որ  
կամենայ. Նա, համարեա միշտ, քեզ քո ցանկացած տեղը  
կրհացնէ:

Ձիու տեսակիցն է և էշը, որին գուք ձտնաչում էք իւր երկար. ականջներից և անախորժ ձայնից: Նա այնքան բժամիտ չէ, որբան յամառ է, երբեմն ոչ մի տեսակ պատիժ նորան իւր տեղեցը չի շարժիլ: Միապմակների կարգին պատկանում են նաև մուլը և ջորին: Մուլի հայրը ձին է, իսկ մայրը — էշը, իսկ ջորու հայրն էշն է, իսկ մայրը՝ ձին: Էշը, մուլը և ջորին շատ օգտակար են մարդուն. երեքն էլ հասարակ մնունդով բաւականացող, համբերատար և հաստատաքայլ կենդանիներ են. նոյն օդոււտը չափազանց է մանաւանդ քարոտ և լեռնային երկրներում: Մուլը և ջորին իշեց առելի ուժեղ են և աւելի աշխորժ:

Յօղուածը նախ հատուածների բաժանեցէք եւ ապա պատմեցէք կարգով:

կապդ ու փողքաշը չեն արքեշումի.  
Երկզյգ պայտերըդ չեն արծաթաջրած,  
Ասպանդակներըդ ոսկով չեն պատած:

**S**իսուր ճին ինձի՝ այս պատասխանեց.  
Նես նորա համար՝ եմ այսափ տրտում,  
Որ որոտմանքի ձայներ եմ լսում.

**A**հա փողերի թինդ ու դղզգիւն,  
Նետերի ձայթիւնն աշխարհք է լքնում:

**C**ո լորիննջում եմ մորմոքիչ ձայնով,  
Պատճառ՝ զգում եմ, որ հովիտներով  
Երկար չեմ վազել:—Պատուով չեմ ապրիլ.  
Իմ փայլուն սարքով էլ չեմ պձնուիլ:  
**T**իշնամին անգութ՝ ես այս զգում եմ—  
Իմ ողջ սարքերս պիտի կողոպտէ,  
Եւ այս արծաթեայ երկզյգ պայտերս  
Թեթև ոտներից նա պիտի պոկէ:

## Կ ո վ:

**Ս**երս մտնենք գոմը, նայենք, թէ ինչպէս են կաթը  
կթում տանտիկինները: Խմենք այդ թամր և փրփրուն  
կաթնից հէնց իսկոյն, կթելուն պէս: Բայց մենակ խմելոց  
բան չե դուրս դալ, պէտք է մի բան էլ ոսկորենք: Այ,  
մտիկ տանք մեր կովին, թէ ինչպիսի մարմին ունի, ինչովէ  
զանազանվում նա ձիուց: Սա ձիուց քիչ ցածր է, բայց  
հաստ. մէջքն էլ, տես, ինչպէս սուր է. բոլոր ոսկորները  
դուրս են ցցուած, իսկ կողքերը փրուած են: Կովի զլուխը  
այնպէս գեղեցիկ չէ. դունչը բութ է, պարանոցը բարակ, իսկ  
կուրծքի վերայ աւելամիս ունի կախուած: Յետին ան-

դամների մէջ տեղը մեծ կուրծ ունի, ուր առատ կաթն է  
պատրաստվում:

**C**ովի ոտները հաստ են և կարծ, քան ձիունը. նորանց  
վերայ ոչ թէ մէկ—մէկ, այլ երկու—երկու եղունգներ—իւն-  
ունիւեր կան: Պոչը թոկի պէս կախուած է և միայն ծայրին  
ունի մի մաղէ փունջ: Նշանակում է, կովն այսպէս գե-  
ղեցիկ չէ, ինչպէս ձին. նա չէ սիրում վազել, նորա վե-  
րայ նստելն էլ յարմար չէ: Այսու ամենայնիւ եղներին  
գործ են ածում բեռը կրելու համար, որովհետև նորանք  
ուժեղ են և համբերատար:

**A**հա կովը երեսը դէպի մեզ դարձրեց և նայում է քաղ-  
ցրաբար. բայց նորա աչքերը չեն արտայայտում այն խմա-  
ցականութիւնը, ինչ որ ձիունը: Նորա պարանոցն էլ կարծ  
է և չէ կարող այնպէս վեր բարձրացնել իւր լայն դունչը,  
ինչպէս եռանդոտ ձին: Բայց կովը ձակատի վերայ երկու  
մանգաղաձև պողեր ունի, որոնք ոսկրից կակուղ են. նորա  
ականջները աւելի մեծ են և դէպի մի կողմը ուղղուած:  
Կովն էլ, ձիու պէս, բերանում կտրողներ (առաջնատամներ)  
և սեղանատամներ ունի, բայց նորա կտրողներն ութ  
հատ են և դասաւորուած են ստորին ծնօտի վերայ, իսկ  
վերին ծնօտի վերայ, ատամների փոխանակ, հաստ կաշի  
կայ միայն: Սեղանատամները նման են ձիու սեղանատամնե-  
րին թէ թուով և թէ տեսակով: Զիերի ստորին ծնօտը  
կարող է շարժուիլ միայն դէպի վեր ու դէպի ցածր,  
կովերինը, բայցի դորանից, աջու ձախ էլ է շարժվում և  
այդպիսով օգնում է նորան խոսր լաւ մանրացնելու: իսկ  
ինչի՞ են կովին որոճող կենդանի կոչում: Դուք, երեխ, նկա-  
տած կը լինիք, որ երբ նա հանդիսատ նստած է, մինչև ան-  
գամ քնած ժամանակը, շարունակ ծամում է—որոճում է:  
Զին, մարդու նման, մէկ ստամոքս ունի, իսկ կովը—չորս.

Խոսար, որ նա փոքր ինչ ծամելով կուշ է տալիս, առաջ  
մտնում է առաջին երկու ստամբսի մէջ, իսկ յետոյ կու-  
վը գունտ զունտ յետ է ծկոտում նորան դէսի բերանը և  
սկսում է նորից լաւ ծամել և մանրացնել յլաւ ծամելուց  
շետոյ կովը կերակուրն ուղարկում է փորի միւս երկու բար-  
ժանմունքը, նշանակում է, կովի համար ուտեն էլ ինքն  
ըստ ինքեան մի մեծ գողծ է, դորա համար էլ նա ուրիշ  
շատ բան չէ շնուրմ ձիու նման:

**ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԵճՐ:**

Կովը, ձին և շունը վիճում էին միմեանց հետ, թէ  
տանուտէրը նորանցից որին աւելի է սիրում:

“ՀՀարկ է նա ինձ ամենիցդ շատ է սիրում, ասում  
էր ձին. ես նորա արօրը և յաքանդ քաշում եմ՝ անտա-  
ռից նորա համար փայտ եմ բերում. նա շատ անգամ հեծ-  
նում է ինձ և քաղաք է զնում: Նա առանց ինձ բոլորու-  
վեն կորած կը լինէր;”

—Ո՛չ, մեր աէրն ինձ աւելի է սիրում, ասաց կովր. քզ  
արածդ բնչէ, որ մեծ մեծ էլ խօսում ես. դորա մեծ մաար  
իմ եղայր եզն էլ կարող է կատարել. իսկ ես նորա բոլոր  
ընտանիքը կաթնով կերակրում եմ:

— ՞Ո՞չ, դուք երկուսդ էլ սխալվում եք, ունաց շռնկը. մեր տէրն ինձ ամենիցդ աւելի է սիրում, որովհետեւ նորա բայցը հարստութիւնը ես եմ պահպանում: Ա

Կենդանիների տէրը լսեց այս վեճը և ասաց նօրանց.  
Դուք տեղը միմեանց հետ մի վիճէքք: Դուք ամենքդ եւ  
ինձ հարկաւոր էք և ձեզանից ամեն մինը լսու է իւր  
տեղը:

ի՞նչ օգուտ են տպիս մարդկանց ձին, կովը, շնւնը, կատուն։



Պաղոտ ու երկարամորուք այծը հպարտ հպարտ ման էր  
գովիս, պողեցը շարժում, միրուքը տրմբ—տմբացնում,  
կծղակնելով թըլսկ—թըլսկացնում,—մանէր զալս ու մկը-  
կում, փռքը ու լիրին իւր մօտ կանչում։ Խակ ու երր նորա  
ձայնը չէին լսում. նորանք պարակէցն էին-մտել, կանաչ խոտ  
էին արածում, արմատները կըռծ—կըռծորում, մատալ  
ոստերն վշացնում, յետոյ յետ զառնում, պող՝ պող լսը-  
փում—միմեանդ չետ կրկում։

Սպասեցէք, ահա պարտիվ տէրը կրգայ, ձեզ ամենքիդ կարգ չուց կրտամ:

Համբատեցիք այծը շան եւ կովի հետ։

## Աղուէսը և Սայդը

**Աղուէսը** զլու խը բարձրացրած նայում էր ագռաւին  
ու վազում—և վագելիս յանկարծ ջրհորի մէջ զլորուե-  
ցաւ: Ջրհորում այնքան ջուր չկար, որ նա խեղտուէր,  
բայց այնքան ել խոր էր, որ դուրս գալն անհնար էր:  
**Աղուէսը** նստած իւր մե օրը սղբում էր: Յանկարծ, տես-  
նես, մեր խելօք այծը, միրուքը տըմի—տըմբացնելով, անց-  
նում է այնակղից: Բան չ'ունէր, գործ չ'ունէր, ինչ անէր:

Ձրհորին մօտեցաւ, ներս նայեց և տեսաւ աղուէսին ու  
հարցրեց.

**Ա'ղուէս ընկեր,** այդտեղ ի՞նչ ես շինում:<sup>4</sup>  
— Հանգստանում եմ, սիրելիս, պատասխանեց աղուէսը.  
այդտեղ, վրեւ, շոգ է, այդ պատճառով ցած իջայ այս  
տեղ մի փոքր հովանալու: Իսյց որ իմանաս, թէ այս տեղ  
ի՞նչպէս հով է և լաւ: Սառը ջուրն էլ, իչքան կամենաս:

**Այծը շատ ծարաւ էր.** Դմելու ջուր է,<sup>5</sup> հարցրեց  
նա աղուէսին:

Հիմանալի ջուր է, ի՞նչ ես հրամայում, պատասխանեց  
աղուէսը. մաքուր, լաւ: Ներս թռիր, եթէ ուզում ես,  
այստեղ երկուսիս էլ տեղ կրինի:<sup>6</sup>

Յիմար այծը ցած թռաւ ջրհորը և քիչ մնաց ա-  
ղուէսին ջարդէր:

ո Ե՛հ, յիմար կենդանի, թռչելու շնորհք էլ չունիս.  
բոլոր ջուրը շաղ տուիր:

**Այս ասաց աղուէսը ու թռաւ այծի մէջքը, մէջ-**  
քից պողերը և պողերից էլ ցատքեց ջրհորից դուրս:

Քիչ մնաց, որ խեղճ այծը ջրհորի մէջ սատկէր  
քաղցածութիւնից. երկար որոնելուց յետոյ հազիւ գտան  
նորան և պողերից թռկ կապելով դուրս քաշեցին:



**Ո չ խարի:** Ես էլ կարծում եմ,

Սումում են, որ ոչխարը յիմար է. Ես էլ կարծում եմ,

որ այդ ճշմարիտ է: Հրդեհների ժամանակ ոչխարներն իւ-  
րանք իրանց ընկնում են կրակի մէջ, իսկ երբոր գայլին  
տեսնում են, փայտի նման կանգնում են իրանց տեղերը և  
յիմարաբար կալակներով գետինը թակում են: Բայց մեր  
ինչի՞ն է հարկաւոր ոչխարի խելքը. մեզ հարկաւոր է նորա  
բուրդը գուղղայ և մահուդ շնելու համար, նորա ճարպը  
սապոնի և մոմի համար, կաշին—կօշիկների և ծուղերի,  
իսկ միսը խորովելու համար:

Համեմատեցէք ոչխարը այծի հնտ:

**Ընտանի և վայրենի եզներ:** — **Որոճող կեն-**  
**դանիներ:**

**Մեր ընտանի կովն ու եղը ամենահանդարտ և խռ-**  
նարհ կենդանիներ են, բայց վայրենի ցուլից կատաղի գառ-  
զան քիչ կայ: Երբոր նա վայրացած է, ոչնչեց չէ վախե-  
նում, կճղակներով գետինը փորումէ, գլուխը կռացնում  
և ուղղակի յարձակվումէ մարդու վերայ. այս ժամանակ  
աշխատիր շուտով բարձրանալ ծառը, եթէ ոչ մի վայր-  
կենում պողերով դէսի վեր կըդցէ և յետոյ ոտների տակ  
կրտրորէ քեզ: Առաւելապէս նա փայլուն գոյներ չէ սի-  
րում և այդ գոյները տեսնելուն պէս՝ իսկոյն յարձակվում  
է: Նորան սպանեն էլ հեշտ չէ. եթէ ուղղակի ուղղին  
չըհարուածեցիր, շատ դժուար կ'սատկի: Բայց այս կեն-  
դանու օգուտն այնքան մէծ է, որ մարդիկ շատ հին ժառ-  
մանակից նորան ընտանեցրել են: Եղանը, ինչպէս և վայ-  
րենի ձիթուն, ընտանեցնելը շատ էլ դժուար չէ: Թոկերով  
նոցա ոտները և պողերը մծըճելով՝ բռնում են, վզեն  
լուծ են դնում և նա ակամայից խոնարհվում է: Բա-

Նեղուն էլ այսպէս են ընտելացնում . նորան Ծում են առյի գլխին եւ, եթէ աեղք անազատ է, ազատ թրջնում են վագեբու : Տղան, որ նստած է սայլում, խարազանով խփում քշում է նորան, մինչև որ յոդնէ : Մէր Հայաստանում գիւղացիք շատ եղնէր, կոմիր և ոչխարներ են պահում : Նորանց հարածութիւնն էլ դորանք են: Գիւղացին եղնով է խր վարուցանքը անում, եղնով է կրում իւր արտերի բերքը գէպի կալը և շատ անզամ էլ եղնով է կալում նորանց: Եղանու կրվեամբողջ նորիներ նորանք տանում են մօտաւոր քաղաքները ծախելու: Նորանց մօվ մարդիկ կերակրվում են, կաշուից զանազան բաններ են շնում, եղջւրները, կձղակները և ոսկորները զուր չեն կորչում: Մեծ ոսկորներից դանակի կոթեր են շինում, մանրերը այրում են և նորա մրուրից ուն ներկ և կօշկաներկ են պատրաստում, կճզախներից սոսինձ են եփում: Այն էլ յայտնի է ձեզ, որ ամբողջ աշխարհը նորանց կաթնուի է կերակրվում: Կաթը առողջաբար կերակրը է, կաթնից պատրաստած պանիրն էլ նորանից պակաս չէ պանիրն այն յարմարութիւնն ունի, որ նորան կարելի է պահնել հարկանոր ժամանակի համար, կտրելի է ճանառապարհին հետո վերառնելու: Եթէ նորան կարողանային լան և աժան պատրաստել, նա մեծ ազահովութիւնն կրիներ խեղճ մարդու համար, որն կհետեւ հայ ու պանիրը մաս սուրբ փոխարինում է, մինչ:

Որոճողների կարգն՝ բացի կրվեց ու կղնից, պատշ կանում են եղջերուն, այծեամբ, այծը և ոչխարը շինուած, որտեղ սառած ճաշիճներում բացի մամլու որ ոչինչ չէ բուսնում, մարդիկ շատ բարիք են ամանում և և թունային եղջրառներից առանց նորանց այնտեղի բնակիչները չեն կարող պարթիչ չիւսային եղջերուն նման է մեր երկրի

Եղջերումնն կա կերակրվում է մամուռով, որ կճղակներով հանում է ձիւնի տակից: Նորա կճղակները լայն են և հեշտութեամբ ձիւնի մեջ չեն մտնում. նորան լծում են սահնակներում. նորա սերի նման թանձր կաթն ու միսը ուտում են, կաշուից շորեր են կարում, ոսկորներից և եղջիւրներից շինում են նետեր, պատառաքաղներ, ասեղներ . . . ջլերը գործ են ածում թելի փոխանակ:

Այժերն ու օչսարները բուրդ և մազ են տալիս շորի  
համար, և կաշի—ոտնառմանների համար։ Ոչսարի մորթուց  
հասարակ քուրքեր են կարում։ Նորա կաթը ուտում են։  
Այժի կաթը թոյլ կուծք աւեցազներին օգուտ է, բայց միսը  
այնքան համեղ չէ։ Ոչսարի միսը շատ համեղ է և զիւրա-  
մարս։ Այսպէս ուրեմն՝ պէտք է իմանալ այս օգտակար  
կենդանիներին լու պահել։ Պահիր նորանց տաք և լու-  
սաւոր գոմերում, տակները մաքրիր, խմելու ջրի հետ աղ-  
խառնիր, շատ լոռնաւ տեղիր միարածացնիր և աք տա-  
ռաքդ չեն հիւնդանալ։ Հայ մասս է Առաք մայ մենց  
դոց Հապոռածների բաժանեցիր և պահեցիր կարգով։ Ոյսաւո-  
ւազը ի կարև և այս զառաջացները մասմաս չեն

Գառը դայլի մորթով; և առաջապ  
մինամք ցԵլից և Անաց և Խոր ց հիմնայ կրոց  
շաբաթի ցուց Մի օր գառը, չեմ դիտում ինչ էրաւ չ  
լազմի զա Խելքին ինչ տեսակ քամի եր փշել աժմ վրա  
դուր աղոյ Առաւ իւր վերայ մի դայլի մորթին արեց սույ  
աշոյ Գնաց, Խառնուեցաւ Հետր իւր հօտին  
վրայց երբ շների առ քոյն ընկաւ մեծ զբան  
Առաջա Ասին՝ անտառից ահա գայլ եկաւ.  
Գոռում դուռւմավ վերան վերեցին, Տիկ ըստ  
Բերաններն առան ու զրպարզեցին:  
Լաւ եր, որ շուտով հօմիւներն տեսան,

Փայտ - դադանակով շուտ վերայ հասան,  
Ու խեղճ՝ գառնուկին շուտ պրծայրին  
Սուր ատամերից կատղած շներին:  
  
Իսկ խեղճ՝ գառը հազիւ հազ,  
Արիւնթաթախ ու նուազ,  
Թոյլ ոտները քաշտալով,  
Հասաւ գոմը մի կերպով:



100

Շատ կեղտոտ է մեր խողը, կեղտոտ է և շատակեր  
Ամեն բան ուտում է, ամեն բան ջարդում, մուլերի մէջ  
թաւալվում է և ճահիճներում, որպէս թէ պարզ ջրի  
մէջ, ամենայն յօժարութեամբ ձգվում, նազով ել խըռ-  
խուացնում, մրթ—մրթացնում է:

Խողի կնճիթը գեղեցիկ չէ—բութ է, քիթը գետնին  
է հասնում, բերանն ականջներին, իսկ ականջները կեղտա-  
շորի պէս տատանվում են: Նա իւրաքանչիւր ոտի վերայ  
չորս կծղակ ունի, բայց մանգալիս գայթում է: Նորա պոչը  
ոլոր է, ողնաշարը դուրս ցցուած, ողնաշարի վերայ կոշտ  
մազեր են դուրս եկած: Խողը երեքի չափ ուտում է, հինգի  
չափ հաստանում, տէրերն էլ նորան լաւ են պահում,  
բայց եթէ պատահմամբ բանջարանոցն է մանում, տես  
թէ ինչպիսի դագանակներով են այնտեղից դուրս խոկում:

**Խողը կաղնի ծառի տակ:** Հաստարմատ կաղնու տակ կանգնած, կերաւ կաղենը պուխը կախած. մինչև կոկորդը կերաւ, լուեցաւ, ապա կտղնու տակ հանդարտ քնեցաւ: Յետոյ զարթելով բացաւ աչքերը և բութ ինձիթով սկսաւ փորել այն կաղնի ծառի հաստ արմատները, որից այդ ժամին մնունդ էր առել: «Չե որ այդ բանը ծառին վկաս է, նորան վերեկց ագռաւել կասէ. եթէ այդպիսով արմատը բանաս, նա կը որանայ, այս լաւ իմանասս: — Իսկ ինձինչ վկաս, թէ կը որանայ, ցածից ասում է նորան խողն ագահ. ես նորա վերայ իսկի չեմ ցաւում, կաղենն է իմն, նա է գերացնում: Ա'պերախտ, ասաց բարձրից ծառն. ումնից են թափում այդ կաղեններն. գէթ կարենայիր մի վերև նայել և կոյր աչքովդ այդ բանն ստուգել:



**Աքաղաղը և իւր ընտանիքը:** Առաջին բագումն էր ձեմում, զիսի վերայ ուկէ կատարն էր շարժվում, կտուցի տակ կարմիր միրուքն

օրօրվում։ Իւր կտուցը դուրի պէս, պոչը չքեղ ղարդարուած, ոտներն ունի խթաններ, թեհերը սիրուն շերտեր։ Զանկերով հողն էր փորում, հաւին, ձուտին հրաւիրում։ Դջնւ-ջնւ-ջնւ, ջնւ-ջնւ-ջնւ, հաւիլիներ, դուք հովատար մայրիներ՝ չալեր, աևեր, սպիտակմեր, դեղին ու մօխրա գոյններ, հաւաքուեցէք ձաղերով, ձեր քնքոյշ որդինեւ րով։ ձեզ համար ազր քջջեցի, հատիկներ պատրաստեցի։ Հաւ ու ձագ հաւաքուեցան, կըրկըրացին, մօտիկան, բայց փոխանակ ձաշելու, մէկ մէկու հետ կըռւեցան։

**Ա.**քաղաղն այս չըսիրեց, նորանց հաշտեցնել ուղից մինի զլիից, միւսի զանգրից բռնեց, թափիթափի տուեց, բոլորին հեռացրեց, հատիկն ինքը վայելեց, յետոյ կտուրը թռաւ, թեհերը շարժեց, ծուղուղու կանչեց—ճաշը վեր ջացրեց։ Համատեսացներ աքաղաղը հաւի հետ կըս Նոյիին



F w q:

Բարսեղը լցի ավը նստած մոտիկ էր տալս, թէ ինչ  
պէս են բաղերը նորա մէջը թաւաքիում, լայն կտուցները  
ջրի մէջ կոխում, զլու ինսերը ծածկում, դեղին ոտները  
բարձրացնում, կարծես արեւում տոքացնում։ Բարսեղին  
ասել էին, որ բաղերը պահպանէ, բայց նորանք ջրի երեսին

ի աղաղով գնացին, հեռացան, ինչ անէր, նորանց մնչպէս  
տուն դարձնէր: Մի ձար էր մնացել. ակսեց նորանց բարձր  
բաճայն կանչել. ջուշջուշու, ջուշջուշու, իմ շատակիր  
ներ, լայնաքիթ բաղեր, թաղանթառներ, բաւական է ինչ  
կան: որդեր որսացիք, խոտարածեցիք, տիղմը կուլ տուիք  
աքուչորդ լըցընիք, շուտ ինձ լսեցէք ու առն շետ դար  
ձէք: Ամսեմ վաճառ վճառ ևս ամսեմ վիճաբ վճաբ  
ըստ Բաղերը Բարսեղի ձայնը լսեցին, լոզալը թռնին, ափը  
գուրս եկան, գեպի տուն դարձան: Բայց մի տեսնէիր, թէ  
վազլսելիս ինչպէս էին թրմփ-թըմփում, այս կողմ, այն  
կողմ տատանվում:

**Պատմեցէք.** Եւ համեմատեցէք բաղը հուի հետ:

**Ս ա գ ե լ :** Ա պ ա ւ ը զ ո ւ ր ս ե կ ա ւ ու ք շ ե ց ս ա գ ե ր ի ն դ է պ ի տ ո ւ ն .  
Ք ը լ շ ը լ շ ը լ շ , ս և ու ս պ ի տ ա կ ս ա գ ե ր , ա ռ է ք ձ ե ր ձ ա գ ե ր ,  
վ ա գ է ք ձ ե ր բ ն ե ր :

Իսկ չար սագերը հանդարտ պառաւին չուփեցան լը-  
սել, երկար ու բարակ վեղները ձգեցին, կարմիր թաղան-  
թոտ ոտները շարժեցին, լայն թևերը թափ տուին, կտուց-  
ները բաց արին. զառղառղա, ղառղառղա, խիստ վատ գոռա-  
ցին. մենք տուն չենք գնում, այստեղ ենք մնում:

**Պատաւը** տեսաւ, որ իրանց պատուավ տուն չեն  
դառնալու, Ճիպոտը վերառաւ և քշեց նորանց դէպի տուն:  
Համեմատեցէր սազը հաւի եւ բաղի հետ:  
**Սագը և կռունկը:**  
**Սագը լրդում էր լճի երեսին և ինքն իրան խօսում**

բարձրաձայն. «Ճշմարիտ, ինչ զարմանալի թռչուն եմ ես. երկրի վերայ ման եմ գալիս, օդումը թռչում, ջրումը լուղում. ինձ նման էլ թռչուն չկայ աշխարհում»: Աս բոլը թռչունների թագաւորն եմ»:

Կռունկը լսեց սագի խօսքերը և ասաց նորան: «Ա՛յ պարզամիտ սագ, մի՞թէ կարող ես դու լողալ ձկան նման: վագել եղնիկի նման, կամ թռչել արծուի նման: Աւելի լսւ է մեկ բան հիմնաւոր խմանալ, քան շատ բան բայց վատ»:

### Աղաւնիներ:

Սիրուն աղաւնիներ, թաւոտն թռչուններ, կտրին նըստելով, միմեանց նայելով, իրար սիրում են, միշտ համբուրվում են և ձագուկներին մնաս բարով ասելով, դէպի դաշտն են շտապում, հատիկներ են հաւաքում, քուչերում փափկացնում — իրանց քնրուշ ձագերին՝ նախաձաշիկ պատրաստում: Իսկ բնի մէջ ձագերը, տկրոր աղաւնիները, նստած են մնում, ուտել են ուզում: Մայրը տուն է յետ դառնում և պատրաստի կերակրով փոքրիկներին կերակրում:

Համեմատեցէք աղաւնին համի հետ:

### Ուրիշի վերայ չ'պէտք է ծիծառել:

Դեղձանիկը չար թակարդի մէջ ընկաւ. խեղճը նորա մէջ թրբպրտում էր և չարչարվում, իսկ փոքրիկ աղաւնին նորան ծաղը էր անտում: «Ամօթւ չ'— ասում էր — որ օրը կէս օրին ընկար թակարդի մէջ: Աս համարձակ կարող եմ քեզ հաւատացնել, որ ինձ այդպէս հեշտու-

թեամբ չեն կարող որոդայթի մէջ ձգել:» Այս ասած չասած, մին էլ տեսնես իւր ոտներն էլ խճճուեցան ցանցի մէջ: Եւ արժանի էր: Թող այնուհետեւ ուրիշ վերայ չ'ծիծառէր:

### Աղաւնի և մեղու:

Մեղուն ընկաւ ջրի մէջ և խեղավում էր: «Նորանից ոչ հեռու ձղան վերայ նստած էր աղաւնին. տեսնելով խեղուող մեղուին, նա զցեց ջուրը մի չոր տերեւ: Մեղուն բարձրացաւ տերեւի վերայ և ջրի հոսանքը նորան ափը դուրս բերեց: Այստեղ, արևի տակ, նա ցամաքեցրեց իւր թևերը և թռաւ դնաց իւր փեթակը:

Մի քանի օրից յետոյ նոյն աղաւնին նստած էր ծառի վերայ և ննջում էր: Այդ ժամանակ կամաց մօտեցաւ որսորդը և թփի յետեւից նշան դրեց աղաւնուն: Բայց նոյն փայկեանին, երբ նա ցած էր թռնում հրահանի ոտը, նորա ձեռքը ցնցուեցաւ ասատիկ ցաւից և գընդակը անցաւ աղաւնու մօտից, նորան ոչինչ վնաս չըտաւլու: Աս մըջիւնն էր, որ խայթեց որսորդի ձեռքը:

### Պատ:

Մի հարուստ զիւղացի իւր որդու հետ քաղաք էր գնում: «Մտիկ տուր, կարապետ, ասաց հայրը ահա ձանապահի մօտ ընկած է մի պայտ, վերցրու նորան:» — է՛հ, հայրիկ, արժէ՞ այդ շնչին բանի համար կուանալ, պատասխանեց կարապետը: Հայրը ոչինչ չասաց, ինքը վերցրեց պայտը և դրեց պարկումը: Հանապարհին նա պայտը միշտ կոպէկով ծախեց դարբնի վերայ և այդ փողերով Մայր. լեզ. թ. տ. ն. Տ. — Դ.

բայլ գնեց: Նորանք առաջ գնացին: Օրը շատ տաք էր, արեգակը սաստիկ այրում էր, և շքջակայքում ոչ աղբիւր կար ևու ծառեր: Կարապետը առնջվում էր ծարաւ ևութիւնից և հազիւ էր կարողանում գնալ իւր հօր յեւտելից: Յանկարծ հայրը, իբր թէ անզիտակցաբար, ցած զցեծ մի հատ բալ: Կարապեան խկոյն վերժոցրեց, կերաւ. սա մի փոքր զովացրեց նորան: Մի քանի քայլ առաջերդ, հայրը վայրգցեց մի ուրիշը, յետոյ երրորդը, չորրորդը . . . մինչև վերջանալը, իսկ Կարապետը շարունակ հաւաքում էր նորանց և ուտում: Երբ նա վերջին հատիկը վերառաւ, հայրը յետ նայեց և ծիծաղելով ասաց. «Ճեսնում ես, որդի, եթէ դու միանդամ կոնայիր պայտի համար, այսքան անդամ չէիր կուանալ բալըի համար Այս քեզ խրատ, որ միւսանդամ չ'ծոլանաս:

### Հրեղէն ձի:

Ա.

Այի ծեր մարդ երեք որդի ուներ, երկուսը խելօք, իսկ երրորդը յիմար և կեղտոտ: Գիշեր, ցերեկ յիմարը տանը վայր ընկած՝ ոչինչ գործի չէր գնում:

Այս մարդը մի օրավար ցորեն էր ցանել. ցորենը դուրս էր եկել, մեծացել և գեղեցիկ հասկեր բռնել. միւայն զիշերները մէկը գալիս էր ու տրորում արտը: Այս բանին մի ճար անելու համար, ծերը ասաց իւր: «Օրդոցը. Դիմալի որդիք, զիշերները հերժով գնացիք, արար պահապահեք և աշխատեցիք գողին բռնել:»

Առաջին զիշերը մեծ որդին գնաց պահպանութիւն անելու, բայց կէս զիշերին քունը տարաւ և քնեց: Առաւ առեան յետ դարձաւ տուն և ասաց. «Ամբողջ զիշեր

չըքնեցի, սառայ, վայտ գարձայ, բայց գող չ'տեսայ: Դիւռ զիշերը երկրորդը գնաց, ողջ զիշերը քնեց և առաւտեան միւնոյն լուրը բերեց:

Երրորդ գլուխը հերթը միմարին հասաւ: Նա մէկ պարան վերառաւ և գնաց, արտի մօտ նստեց, գողին սպասեց: Կէս զիշերին մօտեցած՝ նորա քունը տարաւ: Յիմարը վերառաւ գանակը, մատը մի փոքր կարեց, մէջը աղածեց, մրմնջայրեց և այսպիսով քունը փախցրեց: Աէս զիշերին, մէկ էլ տեսնես, աշխարհ շարժուեցաւ, քամի վերակացաւ, կարծես, կայծակ էր փայլում: Եւ ձին սկսեց ուտել յորենը—ոչ այնքան ուտել, ինչքան կոխուել: Փորսող տալով մեր յիմարը կամաց կամաց մօտեցաւ ձիուն և յանկարծ թոկը նորա տարանդոյր գցեց—բռնեց: Ձին ամենայն զօրութեամբ ձրգձկեց, յետի ոտների վերայ ծառս եւստ, բայց մեր յիմարի ձերքից չ'ազատուեցաւ: Ապա կանգնեցաւ ու սկսեց աղաչել. «Յովհաննէս, բարեկամ, ինձ արձակիք, ես զօրա փոխարէն մեծ ծառայութիւն կ'անեմ քեզ:»

Հատ լաւ բայց ես քեզ վերջն ի՞նչպէս գտնեմ,» ասաց Յովհաննէսը:

—, Երբոր կամենաս ինձ կանչել, գուրս կըդաս դաշտը, երեք անդամ կը շուացնես և կը կանչես. Հրեղէն ձի, Հրեղէն ձի, շուտով ինձ հասիք, և ես այն ըոպէին քո առաջը կը լինիմ:» Յովհաննէսն արձակեց ձիուն և պատուիրեց, «որ միւս անդամ արար չ'արորէ:»

Յիմարը յետ դարձաւ տուն: «Ի՞նչ տեսար. ի՞նչ շենքիր,» հարցորին նորան եղբայրները: Յովհաննէսը պատասխանեց. «Ես Հրեղէն ձի բռնեցի. նա ինձ խոստացաւ,

որ էլ մեր արտը չըմննէ, ևս էլ նորան արձակեցի» Անացած բաները նա չ'պատմեց: Շատ ծիծաղեցան եղայրները խեղճի վերայ. միայն Շմարիտ, որ այն օրից յետոյ ոչ արտին վնաս չ'տուեց:

**Ա**յս անցքից մի օր յետոյ թագաւորից ամեն զիւղեր ու քաղաքներ մնանեաիներ ու զարկուեցան, որոնք բարձր ձայնով դուռւմ էին և ասում: Ո'վ պարոններ, քաղաքացիներ, աղնուականներ և զիւղացիներ, մեծ թագաւորը տօն է կատարում և ձեզ ամենիդ հրատիրում է. երեք օր պէտք է ուրախութիւն լինի: Լաւ ձիաններդ վերառեք. թագաւորի միակ և արեգակից գեղեցիկ աղջիկը բարձր բռւրդի պատշգամբում նստած կը լինի, ով որ իւր ձիով կարողացաւ թռչել, աբքայուհուն հասնել ու նորա մասից մատանին հանել, թագաւորը նորան իւր աղջիկը կնութեան կը տայ:

Յովհաննէսի եղայրներն էլ գնացին այս հանդէսը. բայց ոչ թէ իրանք թռչելու, այլ ուրիշներին նայելու: Յովհաննէսը խնդրեց, որ իրան էլ հետեւերը տանին: «Դու ինչի՞ համար ես գալիս, յի՞մար, — ասացին եղայրները — մարդկանց վախեցնելու, ի՞նչ է. տանը վայրընկիր:»

Եղայրները ձի նստեցան — գնացին: Յովհաննէսն էլ նորանց յետելից ծածուկ գուրս զնաց դաշտը և իւր հըրեղէն ձիուն կանչեց: Որտեղեց որ էր, ձին խկոյն վագեց, Յովհաննէսի առաջին կանգնեց: Յովհաննէսը ձիու վլխովը ցատքեց, որից յետոյ կերպարանքն էլ փոխուեցաւ և մի այնպիսի քաջ տղամարդ դարձաւ, որ տեսնողն ամեննէն չէր ձանաչել թէ առաջուայ կեղտոտ Յովհաննէսն է: Յե-

տոյ նա հեծաւ ձին ու քշեց գէպի հանդէսը ֆնաց — տեսաւ, որ թագաւորի տան առաջ, ընդարձակ հրապարակում, անհամար ժողովուրդ է հաւաքուած, իսկ բարձր աշտարակի պատշգամբի վերայ թագուհին նստած է. ինքը գեղեցիկ լուսնի նման, մատանին փայլում է արեգակի նման: Բայց ոչ ոք չամարձակվում նորա մօտ ցատքել. ով կրկամենար իւր վեղը կոտրել: Մեր Յովհաննէսը խիեց իւր հըրեղէն ձիու կողերին. ձին մանչաց ու ցատքեց. միայն եւրեք աստիճան մնաց, որ հասնէր թագաւորադն աղջկան: Ժողովուրդը լեզուն կծեց — զարմացաւ, իսկ Յովհաննէսը իւր ձիու բերանը յետ դարձրեց ու փախաւ: Եղայրները ուշ ձանապարհ տուին նորան: Յովհաննէսը նորանց մի լաւ մարակեց և անցայացաւ. երրոր հասաւ նոյն դաշտը, ձիու վերայից թռուաւ, իւր առաջուայ կերպարանքն ստացաւ, ձին արձակեց ու դարձաւ տուն: Եղայրները երեկոյեան յետ դարձան քաղաքից և իրանց հօրը պատմեցին իրանց տեսածը: Խակ Յովհաննէսը քթի տակին ձիաղում էր:

Միւս օրը մեծ եղայրները միւմների նման էլի գնացին հանդէս և Յովհաննէսին հետեւերը չտարան: Յովհաննէսը զուրս եկաւ դաշտը, ձիուն կանչեց, հեծաւ ու քըշեց: Երբոր թագաւորի պալատին մօտեցաւ, առաջուանից աւելի մարդ տեսաւ: Ամենքն էլ թագաւորացն աղջկանն էին մտիկ տակս, բայց ոչոք չէր կամենում ցատքել: Նա խիեց իւր ձիու կողերին: Զին մանչաց ու ցատքեց — միայն երկու աստիճան մնաց, որ աղջկան հասնէր: Ժողովուրդը լեզուն կծեց, զարմացաւ. իսկ Յովհաննէսը իւր ձիու բերանը յետ դարձրեց ու փախաւ: Նորա Եղայրներն ուշ ձանապարհ տուին. Յովհաննէսը նորանց մի լաւ մարակեց, ձանապարհ բացեց, դէպի դաշտ վագեց, իւր ձին արձակեց ու յետ դար-

ձաւ տուն: Յղբայրներն եկան, իրանց հօրը պատմեցին բու-  
լոր. իսկ Յովհաննէսը լսում էր և քթի տակին ծիծաղում:

գ.

Երրորդ օրը Եղբայրները նորից գնացին հանդէս: Յովհաննէսը դուրս եկաւ դաշտը և հրեղէն ձին հեծնելով ինքն էլ գնաց, բայց երբոր աշտարակին մօտեցաւ, ձիուն այնպէս, մօրակից, որ նորա ազգորից կաշի պլոկուեցաւ: Կենդանին մռնչաց, սասատիկ ուժով վերցատքեց և պատշտամիին հասաւ: Յովհաննէսը շտապեց, թագուհու մատից թանկագին մատանին հանեց, ձին յետ դարձրեց և սկսեց փախչել: Թագաւորը, թագուհին և բոլոր ժողովուրիք սկսեցին գոռալ «Հայ», բռնեցէք, բռնեցէք . . . բայց ո՞րոնեղ . . .

Յովհաննէսը տուն դարձաւ՝ ձեռքի մէկը փալասով փախթաթած: Այդի ի՞նչ է եղել ձեռքի, «Հարցրին նորան հարսները»:

— Առջի քաղելիս քարից վայրընկայ, ձեռքս պլոկուեցաւ, ոչինչ բան չըկայ, ասաց Յովհաննէսն ու գնաց, կրակի առաջ վայրընկաւ:

Եղբայրները յետ դարձան և մեծ զարմանքով պատմեցին իրանց հօրը բոլորը ինչոր պատահել էր քաղաքում: Այդ միջոցին Յովհաննէսը կամեցաւ նայել մատանուն. փալասը բարձրացրեց, թէ չէ, բոլոր խրճիթը սկսեց փայլել: «Ցիմար, կրակի հետ չեն խաղալ գոռացին եղբայրները. փաքր մնաց խրճիթը կրակէիր. ամենելին պահէրու պատուղ չես. գաղուց պէտք էր քեզ տանից դուրս անել:»

Երեք օրից յետոյ թագաւորից մաւնետիկ է գալիս և ասում է, «Ո բոլոր մարդիկ, օրոնք բնակվում են նորա թագաւորութիւնում, գնան նորա մօտ խնջոյք անելու և ոչոք չհամարձակութիւնում տանը մնալ. իսկ ով որ թագաւորի այս հրամանը չե կատարիլ, նորա գլուխը կը կտրուի:

Ուղիւ հնարք չկար, ծերունին իւր բոլոր ընտանիւ քով գնաց հրաւերք: Նկան, ժողովուեցան, սփռոցի շուրջ շարուեցան, կերան, խմեցին, շատ ուրախացան: Խնջոյքի վերջում թագաւորի աղջիկը իւր ձեռքով սկսեց ամենքին մեղք բաժանել: Ամենից յետոյ Յովհաննէսին մօտեցաւ: Յովհաննէսն էլ այն օրումն էր, որ թշնամիդ չ'լինի. շորերը պատուտուած, մրուտուած, մաղերը աղտոտ, խճըճուած. իստակ ձեռքի մէկն էլ մի կեղտոտ փալասով փախթաթած. իստակ ձեռքի մէկն էլ կապած, հարցրեց թազգուելիք: «Տղայ, ձեռքի ինչը է կապած, հարցրեց թազգուելիք: Պատորի աղջիկը. բայց արա, տեսնեմ:»

Յովհաննէսը ձեռքի փախթաթանը յետ արեց և մատի վերայ փայլեցաւ թագուհու մատանին, Աղջիկը բոնեց նորա ձեռքից, տարաւ իւր. հօր մօտ և ասաց. «Հայրիկ, ահա իմ փեսացուն:»

Սկսեցին Յովհաննէսին բաղանիք տանել, գլուխը ասներել, մաղերն օծել, շորերը փոխել, և նա այնուհետե այնպիսի գեղեցիկ տղամարդ դարձաւ, որ իւր հայրն ու եղբայրներն էլ չէին կարողանում ճանաչել: Թաղաւորը եօթն օր եօթը զիշեր հարսանիք արեց, մեծ խնջոյք տուեց և Յովհաննէսին փառքով պսակեց:

ՊԱՐՏՅԱ: Եկ ԱՅԻՒ:

Պարտէզ:

Պարտէզները շինում են տների մօտ և չորս կողմից

ցանկ կամ պատ են քաշում։ Պարտէզը մշակում է կամ ինքը  
պարտիզե տէրը կամ պարտիզանը։ նորան աղբով սաստիկ  
բարւոքումեն։ Պարտէզներում մարդեր են շնչառմ. մարդեր  
րում ցանում և տնկում են պարտիզե քոյսեր։ Արժու  
համար ձողեր են ցյում։ Պարտէզին վնաս են տալիս որ  
գերը, թռչունները, հաւերը և ընտանի կենդանիները։  
Շոգ ժամանակը մարդերը ջրումեն։ Պարտիզե բանջարեւ  
զէնները մարդիկ դործ են ածում իբրև կերակուր, իսկ միւս  
անպէտք մասերը տալիս են անասուններին։

### Վաղամբի թիթեռ։

Մանուկը պարտիզում բոնեց մէկ սպիտակ թիթեռ  
և բերեց իւր հօր մօտ։

»Պա ամենավնասակար թիթեռ է, « ասաց հայրը.  
»Եթէ դորանք բազմանան, մեր կաղամբը բոլորովին կ'ոչընա  
չանայ,«

— Միթէ սա այդպէս ագահ է, հարցրեց մանուկը։

«Ու թէ ինքը թիթեռն է ագահ, այլ նորա թըրա  
թուրը,» պատասխանեց հայրը. «այդ թիթեռը ածում է  
շատ մանր ձուաններ, իսկ նորանցից դուրս են սողում որպ  
դունքներ, որոնք անուանվում են Արթուրիներ։ Թրթուրը շատ  
ագահ է. նա ուրիշ բան չունի, բացի ուտելն ու մեծա  
նալը։ Երբ նա մեծանում է, պատենաւորվում է։ Այդ միւ  
ջոցում նա ոչ ուտում է, ոչ խսում, այլ անշարժ լնկած  
է։ Միքանի ժամանակից յետոյ նորանից թիթեռ է դուրս  
գալիս, ինչպէս ահա այդ բոնածդ։ Այդպէս կերպարանաւ  
փոխվում են ամեն թիթեռներ. ձուից դոյանում են թըրա  
թուրներ, թրթուրներից պատենաւորներ և սորանցից թի-

թեռներ։ Իսկ թիթեռները ձու են ածում և մեռնում։  
Կարգով պատմեցէք թիթեռի կերպարանափոխութիւնը։

### Ա. յ գ ի:

Այդիները տնկում են տների մօտ կամ քաղաքից  
դուրս և չորս կողմից ցանկ կամ պատ են քաշում։ Այդին  
երում բումնում են պտղատու ծառեր, թփեր և պար-  
տիզե ծաղիկներ։ Այդիներում գեղեցիկ հասարակ ծառեր  
էլ են լինում. այնուղ շինած են լինում ճեմելիք և  
զբոսարան։ Այդու ճանապարհներում աւագ են ցանում,  
որ խոտ չկանաչի և ցեխ չլինի։ Այդին պահպանում է  
կամ ինքը տէրը, կամ այգեպանը։ Այդիները մարդուա  
շատ օգուտ են տալիս։

Համեմատեցէք այդին պարտիզի հետ։

### Ա. յ գ ի:

Վանաչե՞ր, գեհ կանաչե՞ր,

իմ կանաչագեղ այգի.

Ծաղկեցի՞ք, գեհ ծաղկեցի՞ք,

իմ վարդագոյն ծաղիկներ։

Գեհ, հասե՞ք, շուտով հասե՞ք,

դուք քաղցրահամ պտուղներ։

Ինձ մօտ կըդան, կըհաւաքուին

 ուրախ ուրախ վաղեցի տուն: Մինչև յունվարի ութը մենք  
 ազատ ենք: Այս մեր ուսումնարանական տարուայ առաջին  
 և ամենամեծ եռամասն էր: Սա շարունակուեցաւ ամբողջ  
 չորս ամիս: Բայց այժմ դասից ազատ ենք, այժմ պէտք է  
 ուրախանանք, ձիւնէ խաղալիքներ շնչենք, գնտակներ պատ-  
 րաստենք և նորանցով խաղանք:

### Չմերային երեկոյ:

**Փոթորիկ ու մէզ երկինքն է պատռում, ձիւնաբեր բուքը**  
 սաստիկ շառաչում, և միմնջում է նա իրը երեխայ, և՝  
 իրեւ գաղան աշեղ մռնչում: Կամ խրձիթների հին ծածո-  
 կոցի տակ՝ չոր ծղուներն է խրշխրշացնում, կամ իրեւ մի  
 հիւր գուրսը մնացած, այս, այն լուսամնւտն չըխկչըխ  
 կացնում:

### Չմերային առաւօտ:

**Երեկ, տեսար, սասաից բուք էր, ամազ երկնքում մէզ**  
 էր շրջում: լուսինըն իրեւ մի բիծ աղօտիկ՝ ամպերի տա-  
 կոց նայում էր հեղիկ: Իսկ այսօր, նայիր դէպի լուսամնւտը  
 մրէան պայծառ է երկնքի տակը. ձիւնի շերտերը արելց  
 փայլում և սմբողջ գաշաեր ցոլմամբ զարդարում: Թա-  
 փանցիկ անտառն ողջամբ մերկացած, ուեին է տակս հեռ-  
 ում ձգուած. եղենին նոյնպէս եղեամի միջով, ժպտումնէ

քո դէմ իւր կանաչ տեսքով, առուն սառուցի տակից  
խոխոջում, լուռ շըջակայքըդ կենդանացընում:

**Մանկական յիշողութիւնից:**  
Յունվարի 1-ին

Երեկ երեկոյեան մեր տամնը շատ հիւրեր կային. նու  
րանք սպասում էին, որ զիմաւորեն նոր տարուն: Ես մինչեւ  
տասներկու ժամն արթուն չ'մնացի և առանց շորերս հա-  
նելու՝ քննեցայ: Այսօր ես շատ վաղ զարթեցայ և գնացի  
իմ ծնողներիս նոր տարին չնորհաւորեցի: Համբուրելով  
նորանց ձեռքը, ես վագեցի բարի հօրեղօրս սենեակը, չնոր-  
հաւորեցի նոր տարին և ցանկացայ նորան բաղտաւորու-  
թիւն և առողջութիւն: Հօրեղայրս համբուրեց և տու-  
եց ինձ մի գեղեցիկ պատկերապարգ գիրք: Նա ասաց՝ եթէ  
միշտ լաւ կաշխատեա, այսպիսի ընծաներ շատ կ'ստանաս  
ինձանից: Ես չնորհակալութեամբ համբուրեցի նորա ձեռքը:  
Որքան բարի է իմ հօրեղայրս. նա իմ փոքր քրոջս ու  
եղօրս էլ չ'մոռայաւ ուրախայնել. Շուշանին ընծայեց  
մի գեղեցիկ տիկին, իսկ Գարեգնին մի փոքրիկ թմբուկ:  
Նա ուրախութիւնից այնքան խիեց թմբուկը, որ ձեռները  
թուլացան:

Այսօր ամենքն էլ ուրախ են և չնորհաւորում են  
միմեանց նոր տարին, փոխադարձ բաղաւորութիւն ցան-  
կանարվ: — Մայրս հազցրեց մեզ նոր շորեր: Երեկոյեան  
մենք գնալու ենք հօրաքրոջս տուն: Ես գիտեմ, որ այնտեղ  
կըխաղանք, կ'երգենք և շատ ուրախութիւններ կանենք:

Դուք ի՞նչպէս զիմաւորեցիք նոր տարուն և ի՞նչպէս անցկաց-  
րիք նորա առաջին օրը:

### Մայրենի լեզու:

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,  
Ախորժ, ընտանի իմ հոգու համար՝  
Առաջին դու խօսք ականջիս հասած,  
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,  
Մանկական լեզուիս թռթովանք տըկար,  
Ճնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,  
Այդ ի՞նչպէս քաղցրը հնչում ես ինձ դու.  
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ  
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.  
Ասես թէ ահա կանչում էին ինձ  
Փապեր ու հայեր խօսք գերեզմանից:

Հընչի՛ր դու, հնչի՛ր այժմ և յաւիտեան,  
Մայրենի լեզու, բարբառ սիրեկան,  
Արի՛, բարձրացի՛ր հնութեան փոշուց,  
Դու իմ հայ լեզու, մոռացուած վաղուց,  
Ըզգեցի՛ր նոր կեանք սուրբ գրուածներով,  
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:

Ամեն տեղ վչում է Աստուծոյ շունչը,  
Սուրբ է, այն, միւս այլ ձեն ու ոճը,  
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,  
Իմ սըստիս սէրը յայտնել արժան էր,  
Իմ երանական մտածութիւնքը —  
Ապա կըխօսեմ իմ մօրը խօսքը:

Հայոց գինի:  
Բաժակներ առնունք, եղբարք,  
Վկը լիք բաժակներ զինով,

կարմիր ու ճերմակ գինին  
Մեղ լինի անուշ համալ:  
Բերներիս տանենք անվախ,  
զէ դա խառնած կամ խարդախ,  
Նեկտար է և ոչ գինի,  
Խըմենք, մեզ անուշ լինի:  
**Արաքսայ ջրբով ցողած,**  
Հայոց արեւով հասած,  
Հայոց աղջիկ է քաղել  
Քընքոյշ ձեռներով քամել:  
**Այս բերքն է Հայոց երկրին,**  
Հայաստան տընկած նոյէն,  
Անմահ երկնային գինին  
Նա խմեց, երբ իջաւ սարէն:  
**Այս անոյշ գինին խմողը,**  
Սրտէն թողար հանէ ոխը.  
Ամենքս էլ ասենք ամէն,  
Որ շատ տայ մեզ ամէն:



**Այսօր Երեկոյեան Փրիստոսի**  
Ծննդեան և միրտութեան ճրա-  
գալոյցն է: Ես իմ ծնողաց հետ  
գնացի եկեղեցի, որ լիքն էր ժու-  
ղովուրդով: Եկեղեցին լուսաւոր-  
ուած էր հազարաւոր ճրագնե-  
րով. Տիրացուքը և սարկաւագ-  
ները քաղցր ձայնով շարական-  
ներ և երգեր էին երգում. քա-  
հանան պատարագ էր մատուցա-  
նում, մի ուրիշը կարդում էր  
աւետարանը, իսկ բոլոր ժողո-  
վուրդը աղօթում էր:

Ես էլ աղօթում էի: Ես մտաբերում էի իմ վարժապետի  
պղատմածը, թէ ի՞նչպէս Փրկիչը ծնուեցաւ ոչխարների այրի  
մէջ, ի՞նչպէս հրեշտակը աւետիս տուեց հովիւներին, ի՞նչ-  
պէս այդ հովիւներն եկան երկրագութիւն տուին նորա-  
ծին Մանկանը: Երեխ այն երկիրը, ուր ծնաւ Փրկիչը, մեր  
երկից տաք էր, որ հովիւները կարողանում էին գիշերները  
դուրսը քնել: Իսկ մեզ մօտ ի՞նչպէս ցուրտ է այժմ;  
Ճշմարիտ՝ յունվարը ամենացուրտ ամիսն է: Երկիրը սպի-  
տակ քողով ծածկուել է: Ի՞նչքան լաւ կրլինի, եթէ վաղը  
գոնէ եղանակը մեղմ լինի:

Ի՞նչպէս կատարեցին մեր եկեղեցում ծննդեան նախատօնաբը—  
Պատմոցէք Քրիստոսի ծնունդը:

Յունվարի 6-ին.

**Արդէն քանի օր է,** որ գետի եզերքում Փրիստոսի  
մկրտութեան համար տեղ է պատրաստած: Այսօր կէսօրին,  
պատարագից յետոյ, բոլոր քահանայական գասը ժողո-  
վուրդների հետ մայր եկեղեցուց գեմից դէպի Յորդանան:  
Հանդէսը շատ փառաւոր էր:

**Ճաշից յետոյ քահանան տիրացուի հետ եկաւ մեր**  
տունը օրհնեց: Նա կարդաց աւետարանից, թէ ի՞նչպէս  
Ցիսուսը եկաւ Յորդանան գետը մկրտուելու, ի՞նչպէս ընդու-  
նեց նորան Յովհաննէս Մկրտիչը, ի՞նչպէս բացուցաւ եր-  
կինքը և Աստուծոյ Հոգին աղաւնակերպ իջաւ նորա վերայ,  
ի՞նչպէս լուսեցաւ երկնքից Հայր Աստուծոյ ձայնը:

**Այրտս տրորվում է,** երբոր մտածում եմ, որ միւս օրը  
պիտի գնամ ուսումնարան. Բայց իմ մայրս ասում է, որ եթէ  
միշտ աղատ մննդամ, տօներն էլ այսպէս ուրախալի չեն  
լինիլ: Պէտք է խմացած, արդեօք շատ ժամանակ կայ մին-  
չել բարիկենդան:

Պատմոցէք Փրկչի մկրտութիւնը: Նկարագրեցի Զքօրմնէքի հանդէսը:

Ժամանակայի նոյ գլ և աղջում Փետրվարի 14-ին.

**Այսօր մեծ տօնէ** — Տեառնընդառաջ : Երեկոյեան հայրակարգաց Աւետարանից այն տեղը, ուր գրվում է, թէ ի՞նչ պէս Սիմեօն Ծերունին — Ապուռածքնկալը հանդիպեց Գրկւն տաճարում : Երբ հայրս կարդում էր, մայրս արտասուեց և ամենիս համբուրեց : Ես յետոյ երկար մտածեցի, թէ ինչ չե՞ համար արտասուեց մայրս :

**Չմեռը փոքր առ փոքր աւելի ձանձրալի է դառնում** : Օրերը զգալի երազով երկարեցին : Ոյսու ամենայշնիւ արեգակը դեռ սակաւ է տաքացնում : Բայց այժմ այն պէս սասափի ցուրտ չէ, ինչպէս առաջ : Արեգակի հանդիպակաց տեղերում ձիւնները հարվում են : Երեխ գարունը մտենում է :

Գ Ա Ր Ո Ւ Ն

### Ակնկալութիւն գարնան:

**Չմեռը դաշտերում չոկան ծաղիկներ**. երկիրը ծածկել են ձիւնի հաստ շերտեր : Ծաղկունքը ննջում են տաք ձիւնի տակին . Երբ այս փոքրիկներն կըդարթեն կրկնն : Բայց միշտ չել լինիւ փոթորիկ, ցրտեր. մեղ մօտ կըդան նոյնպէս գեղեցիկ օրեր : Գարունն դաշտերի երեսից կանցնի, բոլոր բնութիւնն նորից կըդարթի : Նա կոտրատելով սառցակեղեններ, վերկառնի երկրից սառը ծածկոյներ . կարթնան ծաղկունքըն երկար խոր քնից . Դգարուն է, կըլսուի ամենի բերնից :

### Պասի առաջին երկուշաբթին:

Բարիկենդաններիս մենք շատ ուրախութիւններ առինք . խաղացինք, իւղաբլիթ կերանք : Ամենայն կողմից ուշ

րախութեան ձայներ էին լսվում . . . Այսօր էլ մարդիկ մեծ շարժութեան մէջ են, բայց յայտնի երեռում է, որ այդ շարժողութիւններն այն զուարթութիւնը չունին, ինչոր երեկ, ամենքը զգում են, որ այժմ պաս է: Մեղմ զանգահարութիւնը օրը երեք անգամ և փառաբանութիւնները եկեղեցիներում — ահա պասի միակ զարդարանքը : Մարդիկ համեստութեամբ օրը երեք անգում ժամ են գընում : Երեկ նորանք ուրախանում են, այսօր աղօթում և պատրաստվում են հաղորդուելու :

**Այժմ օրերն էլ փոխուել են**: Օդի մէջ գարնաննշանները երեռում են: Միջօրէի արեգակը բաւականին տաքացնում է: Կտուրներից բնուրեղեան շիթեր են կախվում: Զընծաղիկը դեղնած խոտերի միջց իւր զլուխը բարձրացնում է, ի՞նչքան ուրախալի է մտածել, որ զատկին երկիրը կաշնաչ խոտով ծածկուած կըլինի: Սենք միայն վեց շաբաթներ կարգալու, և օթներորդ շաբաթն ազատ ենք :

Դուք ինչպէս անցկացրիք բարիկենդանը: Ի՞նչ դիտէք դուք մեծ պասի մասին :

### Ամենկական յիշողութիւնից:

Ծաղկալարդ կիւրակի.

**Ահա պասի վեց շաբաթն անցկացաւ**: Երեկ մեզ ուստումնաբանից արձակեցին : Երբոր տուն եկայ, հայրահարցրեց, թէ երեկ ի՞նչ տօն էր: Ես այդ չգիտէի, բայց ինձ հասկացրին, որ շաբաթ օրը Ղաղարոսի յարութեան տօնն էր. իսկ այսօր Քրիստոսի գալստեան տօնն է — ես այս գիտեմ :

**Այսօր մեր տանըցիք բոլորը, բացի մանուկները, շատ շուտ ժամ գնացին**: Երբ մայրս վերադարձաւ տուն, ձեռքին

ուռ ունէր: Մենք դեռ անկողնի մէջ էինք: Մայրս ուռով  
մէդ կամաց խփեց և ծիծաղելով ասաց. ովերկացէք  
այսօր ովոր շուտ վերկենայ, շնորհըով տղայ կը լինի: Մենք  
ամենքս տեղներիցա վերթուանք: Մայրա համբուրեց ամենին  
և մի մի ուռ տուեց:

Տես, ի՞նչ գեղեցիկ է: Ուռի վերայ բրդու կոկոնները՝  
դառնուիներ կան. — սա գարնան նշան է. երեխ շուտով  
ծառերի ծաղիներն եւ կը բացուին:

Այսպէս անցկացրիք զուք ծաղկազարդ կիւրակին: Ի՞նչ տօն է  
կատարվում այդ օրը:

**Հրաւեր գարնան:**  
Վասկաց գույն գույն գույն գույն գույն գույն գույն  
Գարուն, զու զարուն, սիրուն եղանակ: Ա  
Արէն, մօտեցիր, ուրախ ժամանակ: Խոսուն գույն  
քեզ հետ մեզ համար բեր հաղար տեսակ  
բարիք բնութեան. — վուշ, պտուղ, ցորեան:

### Աւագ Հինգշարթի:

Այսօր ես խոստովանուեցայ: Ես երկիւղով մօտեցայ  
քահանացին, չոփեցայ նորա առաջ և խոստովանուեցայ  
իմ երեխայական պակասութիւններս: Քահանան խրատեց  
ինձ, և երբ ես խոնարհաբար խոստացայ, որ կաշխատեմ  
միշտ աշխատասէր, բարի և ճշմարտախօս լինել, նա ձեռքը  
դրեց իմ դլխիս և քրիստոսի անունով օրհնեց ինձ:

Պատարագը սկսուեցաւ, բայց վարագոյրը դեռ ծածա  
կած ունէր սեղանը և քահանան կարդում էր այդ օրուան  
աղօթքը: Եկեղեցին լիքն էր մարդկանցով, նորանք բոլորը  
աղօթում էին: Ես եւ աղօթում էի, ես աղօթում էի, որ

ԴԱՍՏՈՒԹԻՒՆ ինձ կարողութիւն տայ կատարելու իմ խոստ-  
ովանքներս: Ես զիտեմ, որ խոպանունիք չ'կատարելու մեծ  
մապակասութիւն է: Քահանան վերջացրեց աղօթքը: Յան-  
սկարծ վարագոյրը բացուեցաւ. սարկաւագները և դավիճները  
գեղեցիկ ձայնով երգել սկսեցին: Սրբութիւնը վերաբերե-  
ցին ժողովով միջով չաղորդութեան ժամանակ ասրկա-  
բաւագը երգեց. ունըկիւղով և հաւատով առաջ եկէք և  
սմբքութեամբ հաղորդուեցիք: Ես խոնարհութեամբ և  
աշերկիւղով մօտեցայ սեղանին և հաղորդուեցայ:

**Այսօր ես ամբողջ օրը չեմ վագել, այլ նատած էի**

**տատիս մօտ և սաղման էի կարդում:**

Աւագ ուրբաթ զիշեր մենք գնացինք սպիս: Քա-  
հանան կարդաց եկեղեցում, թէ ինչպէս էր աւանդում  
մեր քրիչը իւր աշակերտներին իւր վերջն պատուէրները,  
և թէ ինչպէս զգում էր, որ ինքը արդէն մատնուած է և  
պէտք է բռնուի: Իզուր չէր, որ ամեն մի աւետարանից  
յետոյ գավիճները ողբաճայն երգում էին . . . Ակրջն ա-  
ւետարանը կարգացին, ուր զբուած էր, թէ ինչպէս չար-  
շարեցին քրիստոսին անգութ հրէաները:

Այս գիշեր տասներկու գլուխ աւետարան կարդա-  
ցուեցաւ իհարկէ գժուար էր կանգնել այդքան երկար,  
բայց ես կանգնեցայ:

Այդպէս հաղորդուեցաք եւ զուր. Այդպէս զնացիք զուր սպիս:

### Աւագ ուրբաթ:

Երեկոյեան.

Այսօր քրիստոսի թաղման օրն է և մենք գնացինք  
եկեղեցի: Ժամերգութիւնը դեռ չէր սկսուել: Ես սկսեցի  
պտըտել եկեղեցու շուրջը: Շատ պայծառ օր էր. արեգակը

Երեկոյեան վերջալուսի ճառագայթներով կայլեցնում էր եկեղեցիների դմբէթները։ Թուշուններն ուրախ ուրախ թուշկատում էին եկեղեցու կոսուրի վերայ և երեկոյեան վերջալուսի տակ մեղմօրէն ծլլիացնում էին։ Զնայերպայս բոլորին, ես կարծես տխուր էին։ այսօր մեր Փրկչի թաղման օրն է, եկեղեցու մէջ զրած է Քրիստոսի դափաղը, որի չորս կողմը հանդարտ այրում են մոմերը և իրանց շուրջու կատաֆոյն շառաւելուներ են արձակում։ Կարծես նորանը էլ տխուր են։ Միայն ուրախալի է լսել, ինչպէս բարի Յովսէփիր սուրբ կոտառվ պատեց մեր Փրկչի մարմինը և չ'թողեց նորան չարագործների ձեռքը։

Ճամերգութիւնից յետոյ մենք՝ յետ դարձանք տուն:  
Ճանապարհին տեղ տեղ դեռ ևս ձիւն էր երկում, բայց  
շատ տեղերում էլ արդէն հալուել էր: Հալուած տեղերը  
կանաչ նորափթիթ խոտով ծածկուել էին: Պարտէզներում  
էլ հոտաւէտ վորքիկ մանուշակն արդէն բաց էր արել  
իւր կապոյտ աչերը: Ծառերի կոկոնները ուռել ու լցուել  
էին, իսկ նշենիները արդէն քանի օր է զարդարում են այ-  
գիները իրանց սպիտակ ծաղկիներով: Ահա մերձակայ ձու-  
րում խոխոջում է ձիւնի ջրերից գոյացած առուակը: Գե-  
ղեցիկ արե, գործիր ջանասիրութեամբ. մի՛ մոռանար, որ  
երկու օրից յետոյ զատիկ է լինելու:

Պատմելք, ինչպէս զնացիք դուք եկեղեցի: — Ի՞նչ յառաջադիմութիւններ է արել զարունը:

## Գարնանային ջրեր:

**Պետ արերում ձին է վայրում:** Ամբով  
**Բայց գարուն է, այդ պատճառով** Անոնք

**Ամեն կողմից ջռւր է հստոմ, բոլոր ընտվթիւնն արթնացնում:**

Ա Յասոնց Ամեն կողմից ջռւր է հռտում,  
Ա Եմ որդ Եղի Մելիսոնջռւմ ու կարկաչում,  
Ա Եթևոր Ռւրախութեան վրփուր բերմին  
Ա Եթ ունի Քաղցր աւետիս է մեզ բերում. Ա ուր զի՞ն  
Ա Երեկ գարնան աւետարեր Ա Երեկ ըստ  
Ա Երեկ Ենք մենք եկել, ով մանուկներ.  
Ա Երեկ Նա ուղարկեց մեզ իւր առաջ.  
Ա Երեկ Եկաւ դարուն, Եկաւ ծաղկած: Ա Երեկ արայիշաց  
Ա Երեկ Հանի Անունան քոյժուն Ա Երեկ Սոսովից աջ  
Ա Երեկ Հանի Անունան քոյժուն Ա Երեկ Սոսովից աջ

## Սուրբ Յարութիւն:



A black and white illustration of the Transfiguration of Christ. On the left, Jesus stands on a mountain peak, radiating light, flanked by Moses and Elijah. Below them, Peter, James, and John are shown in awe. The scene is framed by a decorative border.

ինձ էլ արթնացնէ առաւօտեան ժամին ներկայ դանուելու:

Կէս գիշերին մայր եկեղեցու զանգակը որոտաց: Ենոքա ձայնից անձամբ զարթեցայ: Ժամի մէկն էր, երբ միւս եկեղեցիների զանգակներն սկսեցին մեղմաբար ղողանջել: Մենք դուրս եկանք տանից: Փողոցները շատ մութն էին, բայց եկեղեցին հազարաւոր ճրագներով փայլում էր: Եկեղեցում այնքան ժողովուրդ կար, որ մենք հազեւ տեղաւորուեցանք: Ժամերգութիւնն սկսուած էր, ես անչափ ու բախացայ, երբ սարկաւագները երգեցին քաղցր ձայնով. »Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց: Ես յարութեամբ իւրով մեղ զիեանս պարզեեաց:« Ահա իսկապէս ամենամեծ տօնը:

Պատարագը վերջանալուց յետոյ մենք վերադարձանք տուն: Արդէն լոյս էր: Ես շտապեցի համբուրել իմ հօրն ու մօր ձեռքը, կրկնելով ինձ շատ սիրելի խօսքը՝ Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց: Նորանք ինձ համբուրեցին: Ապա ես մօտեցայ իմ փոքրիկ եղբօրս ու քրոջս և մենք քաղցրութեամբ համբուրուեցանք:

Ո՞ի քանի ժամից յետոյ եկաւ քահանան տիրացուի հետ: Նորանք օրհնեցին մեր տունը և երգեցին Քրիստոսի հրաշափառ յարութիւնը:

Ես և եղբայրս դուրս եկանք, որ դնանք մեր բարեկամների զատիկը շնորհաւորելու: Ա՛ս, ինչպէս գեղեցիկ առաւօտ էր, փայլուն արել սփոռում էր իւր արծաթազոյն ձառապայթները: Մեր պարտէզի բոլոր նշենինները ծաղկել էին. մանուշակը խոտերի մեջ փոռուել էր ինչպէս մի կապատապոյն սփռոց և անուշահամութեամբ լոնում էր աշխարհաց Ահա միւս կաղմից ծիրանի ծառերն էլ երանց կիսաբաց

կոկոնների տակից համեստաբար ժապումեն: Ա՛ս, ի՞նչքան պայծառ է օրը. բոլոր լնութիւնը կարծես զարդարուած լինի: Կուռնկների երամներն ահա շղթայաձե ընթանում են փառաբանելով գեղեցիկ գարունը. իսկ նորանցից ցած, երկրի վերայ, մանուկները միասին ժողովուած ուրախ զուարթ ձու են խաղում: Ահա մատաղ գառների փոքրիկ հօտերն էլ մայելով շրջում էն փողոցներում: Ամեն մարդ աշխատումէ գառն ունենալ իրան տանը: Սա Զատկի նըշ շանն է: Հայրս գնեց՝ մեղ համար մի գեղեցիկ գառը. ես նորան շատ եմ սիրում և նորաբոյս կանաչ խոտով կերպիրումեմ:

Այսպէս անցկացրիք դուք Զատիկը: Ի՞նչ յառաջադիմութիւն է արել գարունը:

### Քրիստոս Յարեաւ:

Ամենայն տեղ ուրախ խնդրում,  
Մարդիկ ամեն են աղօթում.

Արշալոյն էլ շուտ բացուեցաւ . . .

Քրիստոս յարեաւ, Քրիստոս յարեաւ:

Դաշտերի ձիւնը հալուեցաւ.

Գետերի ջուրը բարձրացաւ.

Մօտիկ անտառն կանաչեցաւ . . .

Քրիստոս յարեաւ, Քրիստոս յարեաւ:

Ահա երկիրը արթնացաւ.

Դաշտը սիրուն զարդարուեցաւ.

Գեղեցկագոյն գարուն եկաւ . . .

Քրիստոս յարեաւ, Քրիստոս յարեաւ:

Մայր. լեզ. բ. տ. ն. §—Ղ.

**Գարնանամուտ:**

Քեզ ողջոյն զուարթուն,  
Առուգահասակ գարուն,  
Քեզ օղջոյն բիւր անբուն  
Տալիս է Հայոց տուն:  
Անուշաւանի սօսիք տերեւով,  
Ծխտերն ծառից իրանց ծըռվողը՝  
Օրհնում են գալդ, երկնքի դեսպան,  
Դու ես մեր կեանքի պաշար ու պաշտպան:  
Երբ հեղիկ մօտեցար Մասիսի դաշտերին,  
Բքածին ամպերը տարադիր գնացին.  
Հին լեռը բացեց իւր խաւոտ կուրծքը,  
Քեզ կանաչ զիսպայ սփուեց հովիտը.  
Սիրահար սոխակը իւր վարդի յետքից  
Վաղեց Արարատ շինել իւր բունը . . .

**Վերջին գարուն:**

Գարօւնն է եկել նախշուն թերով,  
Նախշուն թերով պէսպէս ձեւերով,  
Գոյն գոյն ծաղիկներ՝ կամիր ու սպիտակ,  
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով:  
Երկինք ու երկիր քեզ տօնեն, գարուն,  
Զի ես քան զամեն եղանակ սիրուն.  
Նա անձրւ ցողէ առատ ի վերէն,  
Դա օրհնել տայ քեզ եկոր հաւերուն:  
Ոսկի արևը փայլէ քեզ վերէն,  
Կենսաբեր հովը փրչէ ՚ի լեռնէն.  
Ա՚ս, ազնիւ գարուն, եղանակ սիրուն.

Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տէրէն:

Գլխաքարշ երթամ ՚ի պարտէզ այգուն,

Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն ՚ի բռւն.

Չ'կայ ինձ հանդիսա, ցնձութիւն սրտիս,

Ես վաղ եմ մոռցել զի՞նչ արդորը է քուն:

**Մեռած-պատանքած գետնին կեանք տուիր.**

Տերեթափ ծառին ստուերախիտ արիր,

Քեզ թռչնոց երամք հանդէս կանչեցիր,

Ինձ մենակ խեղձիս էսպէս մոռացար:

**Առաջ գնա, գարուն, դէպ' հիւսիսն ՚ի խոր:**  
Գնա՛, կանաչացնուր դու անդ սար ու ձոր.

Որոց անհամբեր քեզ կան՝ տուր բարե,  
Գո ուրախ գալստեամբ նոցա զուարձացնուր:

**Կուգաս գալ տարի, դու ինձ կու գտնես**  
Ոչ ՚ի մեր այգին և ոչ ՚ի պարտէզ,  
Այլ անզարժ քընով հողի տակ պառկած,  
Գերեզմանաքար մի վրաս կու տեսնես:

**Մեղու:**

Հինց որ գեղեցիկ գարնան հետ երեւցան առաջին  
ծաղիկները, իսկոյն մոմեղէն թագաւորաւթիւնից, հոտաւէտ  
մեղրախրճիթից դուրս թռաւ սուածին մեղուն: Նա թռչւ  
կոտաց նորաբաց ծաղիկների վերայ և հարցրեց նորանցից  
տեղեկութիւն նորեկ գարնան մասին՝ արդիօք շուր  
տով կրկանաչեն մարգագետիները, կըքացուին տերեւաբեր  
կոկոնները, կըծաղկէ հոտաւէտ յամիկը:

**Ծիծեռնակ:**

Խոռը կանաչում է, արևը փայլում,

Ծիծեռն գարնան հետ մեզ մօտ է թռչում .  
Գեղեցիկ արև եւ քաղցր գարուն,  
Իւր ծըլվարով է նա մեզ բերում:  
— նս քեզ կուտ կըտամ, իսկ դու մեզ երգիր,  
Ինչ հեռու երկու մասար, լսեցիր:

**Մանկական յիշողութիւնից:**  
**Սեռելոցը.**

Զատիկ երկու շարլթի ծնողքո ինձ, քրոջս և եղբօրս  
տարան հանգստարան: Այն տեղ, զերեզմանաքարերի տակ,  
Հանգստանումեն մեր ազգականներից շատերը, այնուեղ է  
և իմ քոյր Եղիսարէթը: Քահանան ներկայ էր: Հայրս  
օրհնել առուեց քրոջս զերեզմանը: Դնչքան խոտեր են կաշ  
նաւել նորա փոքրիկ բնակարանի վերայ: Գերեզմանատունն  
էլ է նորողուել: Ամեն կողմում ծաղկումեն գեղեցիկ ծա-  
ղիկներ: Շատ զերեզմանների վանդակապատերի մէջ իրանց  
ազգականները զանազան ծառեր են տնկել: Գարունը չէ  
մոռացել հանգստարանն էլ գեղեցկացնել. ծառերը զար-  
դարուած են կանաչ տերեով. թռչունները նորանց վերայ  
թռչկոտում են և ծըլվըլում. մինք ծզօտ է տանում,  
միւսը փետուրներ—երեւումէ, որ նորանք սկսել են իրանց  
համար բուներ շինել: Հանգստարանի միւս կողմում գիւ-  
ղացիք արդէն հերկում են իրանց վարելահողերը:  
Ի՞նչ է մեռելոցը: Ի՞նչ է արել զարունը հանգստարանում:

**Երկրագործի երգը:**

Դէ՛չ քաշեցէք, իմ զոյգ եղներ, օրավարը վարեցէք:  
Խոփու ձեկչ ժանգտել են, հողում պէտք սպիտակացնենք:

Առաւօտեան արշալոյսր արևելքում ծագեցաւ,  
Փայլուն արեն ոսկիսիայլ ճառագայթները բացաւ:  
Կեանք է երկրագործին դաշտումը լինել,  
Իւր զոյգ եղներովը գետինը հերկել:  
Դէ՛չ քաշեցէք, տեսնեմ, իմ սիրուն եղներ:

Ես ինքս ձեզ համար ծառայ եմ և աէր,  
Ուրախութեամբ արօր, ցաքան եմ սաբքել, մաս մաս նաք  
Սայլակը պատրաստել և սերմը կրել:  
Միշտ կալիս ու թեղիս ուրախ եմ նայում,  
Զուարժ երդ երգելով թեղս եմ քամում:  
Դէ՛չ շարժուեցէք, իմ քաջ եղներ, ձեղնից եմ խնդում:

Արտերս ես ձեզ հուտով ախ, հերկեմ,  
Ատոկ հատիկներին օրքան պատրաստեմ.  
Նորան կ'սնբնդէ մայր հողը խոնաւ,  
Գուրս կըգայ արտումն կանաչ սէղ անրաւ:  
Դէ՛չ քաշեցէք, եղներս, օրը բացուեցաւ:

Կըբունին խոռերը, ընձիւ զներ կըտան,  
Նորանց կատարներին հասկեր դուրս կըգան,  
Կուռչեն ու կը փեռին լիք պտուղներով.  
Ես նորանց կըհնձեմ իմ սուր մանգաղով.  
Տանեակների տակը հանգիտը կառնեմ:  
Դէ՛չ, իմ քաջ եղներս, քաշեցէք, տեսնեմ:

Քանի ժամից յետոյ ես ձեզ կ'արձակեմ,  
Լաւ կըկտացնեմ ու կուշտ կը ջրեմ,  
Աղօթելուց յետոյ մաճը ձեռք կ'առնեմ,  
Աստուծուն փառք տալով դործս կ'սկսեմ.  
Դիմ հարատցւթիւնս արտն է, Ցէր, դու յաջողեր,  
Իմ եղներիս ոյժ տուր, վաստակս օրհնիր:

## Արծիւը և Ագռաւը:

Լինում է, չէ լինում մի ագռաւ: Նա ունենում է հայր, մայր, ձագեր և հարևաններ: Այդ ագռաւը մի վատ սովորութիւն է ունենում. միշտ աշխատում է սագերի, բաղերի և ուրիշ թռչունների ձուանը գողանալ: Միանգամբ բուն անցնելիս տեսաւ այս գողութիւնը, գնաց արծուին գանդատուեցաւ և ասաց. «Մեր հայր ու թագաւոր արծիւ, արդար գատաստան արա գող ագռաւին, որ ել մեր ձուերը չ'գողանայ:

Թագաւոր արծիւը ուղարկեց ագռաւի յետեկոց իւր թեթևաթոիչ գեսպան Ճնճղուկին: Ճնճղուկը թռաւ և բռնեց ագռաւին. նա կամենում էր ընդդիմանալ, բայց ծիտը կտցահարեց նորան և քաշտուեց արծու մօտ:

Արծիւն սկսեց դատել ագռաւին: «Ա՛յ չարաւ գուշակ ագռաւ, քեզ վերայ գանգատվում են, որ դու աչքերդ ուրիշի ունեցածի վերայ ես մանածում. պատուաւոր թռչունների ձուանը գողանում ես»:

— Զբարարութիւն է, չէր թագաւոր, զբարարութիւն է: Այդ բոլորը կոյր բուի արարքն է. նա սուտ է ասում:

«Քեզ վերայ գանգատվում են, թէ երբ դիւղացին դուրս է գալիս իւր ցելը սերմելու, դու իսկոյն քո բոլոր խումբով ցած ես գալիս ու ցելը քջրջում»:

— Զբարարութիւն է, տէր իմ, զբարարութիւն է:

Ասում են նմանապէս, որ երբ հնձողները խուրձերը դիզում են, դու քո բոլոր խումբով դուրս ես գալիս և այդ խուրձերը ցրվում ես»:

— Զբարարութիւն է, տէր իմ, զբարարութիւն է:

Արծիւը վճռեց, որ ագռաւին բանտ դնեն:

## Գարնանային առաւօտ:

Գարնան արել հպարտ բարձրացաւ,  
Երկրագործն իրան մաճը ձեռք առաւ.  
Արօրի ետքից հանդարտ գնում է  
Եւ ուրախ—զուարթ, բարձր երգում է.  
ուրկրագործի պէս ովլ է կեանք վարում,  
Գարնան սկզբից ուրախ աշխատում:

## Երկրագործը և ծաղիկը:

Համեստ ծաղիկ դաշտային, վատ ժամի հանդիպեացար. երբ արօրը քշեցի, նորա առաջը ընկար:

Գեղեցկութիւն դաշտերի, քեզ վրկել չ'կարացի. սրտի ցաւով, ակամայ քաղցր կեանքդ կարծեցի:

Խոնարհար փայլելով իրեւ գոհար խոտերում,  
միամիտ կ'սպասէիր արեգակի ծագելուն:

Յանկարծ արօրս սրածայր անգթաբար քեզ կտրեց,  
և այսպիսով քաղցր կեանքիդ դժբաղտաբար վերջ տուեց:

## Արծիւը և կատուն:

Գիւղից դուրս՝ կատուն իւր ձագերի հետ ուրախ աւրախ խաղում էր: Գարնանային արեգակը տաքայնում էր և փոքրիկ գերդաստունը շատ բաղտաւոր էր: Յանկարծ, մին ել տեսնես, անապատային մեծ արծիւը կայծակի նման ցած նետուեցաւ երկնքից և կատուի ձագերից մէկը բռնեց: Բայց քանի որ նա կամենում էր բարձրանալ,

մայրը կախուեցաւ նորանից և արգելեց: Յափշտակողը թռողեց ձագը և մեծ կատուեն բռնեց: Կոփեն սկսուեցաւ:

**Զօրեղ թեկրը,** ամուր կտուցը, ուժեղ ճանկերը, երկար ու կեռ եղունկներով զինուորուած, արծուին մեծ առաւելութիւն էին տալիս: Նա պատուտորեց կատուի կաշին և նորա աչքի մէկը քոռացրեց: Բայց կատուն չ'վհատուեցաւ. նա չանկերով պինդ կպաւ արուծից և նորա աջու թեկը կծեց, կոտրեց: Այժմ յաղթութիւնը կարծես կատուի կողմն էր թեքլում, թէւ արծիւը զեռ էլի շատ ուժեղ էր, իսկ կատուն յոգնել էր համարեած թէ. այսուամենայնիւ նա ժողովեց վերջին ոյժը, ճարպիկաբար վեր ցատքեց և արծուին գետին գցեց: Այդ բոսկէին սաստիկ կծեց նորա զլութը և մառանալով խւր անձնական ցաւը, սկսեց լիզել իւր վիրաւորեալ ձագին:

Չեր խօսքերով պատմեցէք բոլորը: Համեմատեցէք արծիւը կատուի հնտ:

### Քո երեսի քրտինքով ուտես քո հացը:

**Երկերը** կերակրումէ մարդուս, բայց ձրի չէ կերակրում: Մարդիկ շատ պիտի աշխատեն, որ երկերը, փոխանակ խոտի, որ միայն անասուններին է պիտանի, ցորեն, հաճար, կորեկ, գարի, բրինձ և ուրիշ հացաբոյսեր տար:

**Երկլազործը** առաջ հերկումէ երկերը: Եթէ շատ խոր չէ հարկաւոր, նա արօրովէ հերկում, իսկ եթէ խամ հող է, կամ խոր է հարկաւոր ցելել, նա հերկումէ գուշ թանով: Արօրը գութանից թեթև է: Նորանում լծում են երկու ձի կամ երկու ջուխտ եղն: Գութանն արօրից շատ ժանր է և նորանում լծում են միքանի ջուխտ եղներ կամ չիաններ:

**Օթավարը** հերկեցին, պրծան, նա պատաճ է մեծամեծ կոշտերով: Բայց սա բաւական չէ: Եթէ երկերը նոր է, կամ հողն ուժեղ, ապա աղք չէ հարկաւոր, բայց եթէ արտը մի քանի անդամ սերմուած և թուլցած է, այն ժամանակ նորան պէտք է աղքով բարւոքել:

**Գիւղացիք** աղքը կրում են իրանց վարելահողերը աշնանը կամ գարնանը և տեղ տեղ դիպում են: Բայց այս գէղերը փոքր օդուտ կրտան: պէտք է նորանց փուել խառնել հողի հետ: Ահա աղքն էլ ցրուեցին—փանց, բայց դարձեալ ցելը կոշտ է և չէ կարելի սերմել. սերմի համար փափուկ անկողին է հարկաւոր: Եթէ ամառուանից ցելը լաւ այրուած է և անձրեկց փափկացած, գիւղացիք համարձակ սերմ են զցում. բայց եթէ տեսնում են, որ կոշտերը չեն փշուել—ցելը չէ փափկել, դուրս են գալիս դաշտը իրանց ատամնաւոր փոցիկերով, փոցխում են, մինչեւ որ բոլոր կոշտերը փշում են, և յետոյ սկսում են սերմը զցել:

**Գիւղացիք** ցանում են կամ աշնանը կամ գարնանը: Աշնանը աշնացան են անում և ցանում են դիմաւորապէս ցորեն և հաճար: Շատ անդամ աշնացանի ցելերը արդէն ամառուայ սկզբից հերկած են, որ արեգակի ներդրծութիւնից լաւ փշուեին: Երբ գալիս է սեպտեմբերը և խոնաւ օրերը սկավում են, գիւղացին սկիզբն է անում աշնացանի: Գարնանը գարունքավար են անում և դիմաւորապէս վարում են գարի, վարսակ, կօրեկ և գարնան ցորեն:

**Աշնացանը** կանաչում է հէնց աշնանը և երբ դաշտերում խոտերը վաղուց արդէն զեղնել են, աշնանային արտերը ծածկում են թաւշեայ կանաչով: Ցաւալի է տեսնել, ինչպէս ձիւնը ծածկում է այդ մետաքսապատ դաշտերը: Աշնացանի մատաղ բոյսերը ձիւնի տակ շուտով են

Թառամում, բայց արմատներն աւելի լաւ են աճում,  
ծիւեր են արձակում և հողի մէջ աւելի խոր են գնում:  
Աշնացանը ամբողջ ձմեռը պառկում է ձիւնի տակ, իսկ  
գարնանը, երբ ձիւները հալվում են և արևը տաքացնում  
է նորանց, սկսում են նորանոր թերթեր և նորանոր ցու-  
զուններ արձակել, որոնք աւելի հաստ և պինդ են լինում  
առաջններից: Վատ է միայն, եթէ աշնանը, ձիւնը նստե-  
լուց առաջ, սաստիկ ցրտեր է անում, այն ժամանակ աշ-  
նացանը կալող է ցրտատար լինել բոլորովին: Ահա թէ ինչ է  
պատճառը, որ գիւղացիք վախենում են անձիւն ցրտից և  
չեն արամում, այլ ուրախանում են, երբ աշնացանը ձիւնի  
հաստ կեղեռվ ծածկվում է:

Ի՞նչպէս են մշակում երկիրը եւ ցանում:

### Շինականների առաւօտեան երգը:

Ա՛յ մարդ, այսօր շատ քընեցար — նընջեցիր,  
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.  
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,  
Զերմութիւնը ձորն ու դաշտը փրուեցաւ:  
Ընկերներդ վաղ արտերը դընացին,  
Ցորեն, գարի գերանդիով հընձեցին,  
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,  
Նըստան հանգչել կաղնիներու հովումը:

Ա՛յ մարդ, վեր — կաց սառը ջրով լուացուիր,  
Գօտիդ կապէ, գերանդիդ առ, դաշտ համիր.  
Քանի հով է հունձըդ արա արտումդ,  
Հունձըդ հընձէ, մի՛ ծուլանար գործումը:  
Հունձըդ կապէ՛, բարդըդ բարդէ՛, տուն արի,  
Հանգստացիր, երբ քո հունձըդ կատարուի.

Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,  
Ես իրիկուան կըպատրաստեմ սեղանը:

Ա՛յ մարդ, հերիք ինչոր այսօր քընեցար,  
Աչքըդ մէկ բաց, անս թէ ո՞րչափ ուշացար.  
Մեր դըրացին վաղ անց-կացաւ կամուրջէն,  
Վաղ լըռել է մեր գըզերը ձայնելէն:

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քընել, սիրական,  
Արեգական շողը հասաւ մեր դըրան,  
Մի՛ ծուլանար, ժամանակրդ խընայէ,  
Այն պիտի մեզ բոլոր ձմեռ կերակրէ:

### Դաշտ և ուսումնարան:

Ա՛յ արդիկ հերկում են դաշտը և հացահատիկներ են  
ցանում: Մանուկները գնում են ուսումնարան և Աստուծոյ  
խօսքը սովորում են: Հատիկները ծածկվում են փափուկ  
հողի մէջ: Աստուծոյ խօսքը մանում է մանուկ սրտերի մէջ:  
Անձրեկց երկիրը փափկանում է, արեկց տաքանում: Խե-  
լացի խօսքերով ու քնքուշութեամի հոգին եռանդ է ընկնում:  
Հողի տակ խաւարումը չեն ննջում սերմերը: Չէ ջնջվում  
սրտիցը բարի ուսմունքները: Սերմերը բումնում են կանաչ  
ընձիւղով: Ուսումն աւանդվում է խելօք խօսքերով: Ար-  
տերը ծածկվում են ոսկեգոյն հունձով: Տիրոջ խօսքը  
պսակվում է բարի գործերով: Ա՛ստուծ, ժամանակին տուր  
անձրեւ, արեւ: Հայր, ամեցրու մեր սրտի մէջ բարութեան  
սերմերը:

Ան, ինչ որ անփում է արտերում, համեմատեցէր նորա հետ:  
Ինչոր անփում է ուսումնարանում:

### Կ ա պ ի կ:

Առաւօտեան արշալոյսը բացուելուն պէս, գիւղացին

գութանը քշեց դէպի զաշտը և սկսեց իւր օրավարը  
ցելել. Նա այնպէս աշխատում էր, որ քրտինքը կաթիլ  
կաթիլ գլորվում էին նորա ճակատից. գլորվացին արժա-  
նաւոր բանւոր էր: Այս պատճառով, ով որ նորա մօտից  
անցնում էր, գովում էր նորան և յաջողութիւն էր ինդ-  
րում: Կապիկն այս բանի վերայ շատ նախանձուեցաւ: Գո-  
վասանքը խաբուսիկ է, ի՞նչպէս չ'ցանկանաս նորան: Կա-  
պիկը մաածեց, որ ինքն էլ աշխատէ, կարելի է դորանով  
ուրիշներից գովասանք ստանայ: Նա գտաւ մի կոճղ և սկը-  
սեց նորա վերայ չարչարուիլ: Կապիկը կոճղն այս ու այն  
կողմն է գցում, երբեմն նորա ծայրը իւր դնչին է խփում,  
քրտունքը նորա ճակատից աղքիւրի պէս թափվում է, այն-  
պէս որ խեղճը չարչարուելուց հաղիւ է կարողանում շունչ  
քաշել, բայց ոչքից ոչինչ գովասանք չէ լսում:

**Ե**ւ զարմացը չէ, իմ աչքի լցո, թէ կու շատ ես  
աշխատում, բայց դորանով ոչինչ օդուտ չես բերում:

### Գարնանային փոթորիկ:

Գարնան փոթորիկն ես շատ եմ սիրում,  
երբ բարձր օդի մէջ ամպեր են գուռում,  
եւ կարծես պայծառ, կապոյտ երկնքում,  
ուրախ սատիւնով առաջ են խաղում:

Գլորվում են, գուռում, անձրեներ թափում,  
եւ կաթիներից յօղ է բարձրանում.  
Անձրեի շեթերն երկնքից կախուեցան,  
Աէզապատ արտերն սկիեզօծուեցան:  
Զորերի միջով անթիւ առուտակներ  
ուրախ քրքիջով յած են գլորվում,

Տւ անտառներում երդող հաւերի  
երդի փոխանակ ժայռերն են թնդում:

### Այիսուայ առաւոտ:

Ի՞նչքան թարմ և գեղեցիկ է մայիսուայ առաւոտը:  
Դաշտերը ծածկուած են կանաչ խոտերով ու ծաղիկներով:  
Կարծես բնութիւնը օրէցօր աւելի քաղցրանում է և  
գարնանային մէդի միջից ժպտում է ամառը:

Երբ ես գնում եմ անտառը, այնտեղ, թփերի ստու-  
երների տակ, ծաղկապատ հովիտներում փոռուած եմ տես-  
նում մայիսուայ որդին, սպիտակ և անուշահոտ շուշանը:  
Ամենայն տեղ, ուր որ նայում ես, աչքիդ առաջ կանաչ  
գորդեր է ափուուած, որոնց վերայ առաւոտեան յօղը յա-  
նել է իւր մարգարտեայ կաթիները: Արևի առաջին ճա-  
ռագայթները ընկնելով ծառերի տերեւների և յօղապատ  
մարգերի վերայ, փայլեցնում են նորանց ինչպէս անդա-  
մանդեայ անկունքներ: Թռչունները ծըլվում են չորս  
կողմդ. իսկ ահա այն կողմից, վարդի կիսարաց կոկոններով  
ծածկուած թփերի մէջ, լսում է մի զմայլելի ձայն.—դա  
սոխակն է: Առաւոտեան արշալուսին նա կանգնած է բա-  
ցուող կոկոնների վերայ, աչքերը կիսախուփի, կարծես ինքն  
իւր երդից յափշտակուած, երգում, շրվացնում և հա-  
զար տեսակ խաղացնում է իւր քաղցր ձայնը: Նա երգում է,  
սպասելով վարդի սիրուն կոկոնների բացուելուն:

### Ա Մ Ա Ռ:

Ատեղծողն իւր առատ ձեռքը բացարեց,  
Արտեր, անտառներ հարստացրեց.

Ծառեր ու թփեր զարդով ծածկուեցան.  
Ամենայն կողմում ծաղկունք փայլցան:  
**Ազատ շրջում** են հօտերը դաշտում.  
Ազատ լողում են ձկները ծովում.  
Այգում պտուղներն դեղնիլ սկսան.  
Արտերում հարուստ ցանքերը հասան:  
Դաշտում մանդաղներն սկսան փայլել.  
Եւ անտառներում թռչնակներն երգել.  
Դինչքան սիրուն է այս ստուերներում,  
Ե՛կ, հաղստացիր, մանկիկ, հովերում.  
Ականջ դիր, ինչպէս մենք երգ ենք երգում,  
Առատ ամառուան փառք վերընծայում:  
— Ու թէ ամառուան, ասաց, փառք տուեք.  
Ով ամառ տուեց, նորան օրհնեցէք:

### Լուսատրտիկ:

**Ա**մառն սկսուեցաւ և լուսատրտիկը վառեց իւր փռք-  
րիկ լապտերը: Ինչպէս մի կանաչ աստղ փայլում է նո-  
մթութեան մէջ և մի խոտից միւսի վերայ է ընկնում:  
Բոնենք նորան և խոտի հետ դնենք բաժակի մէջ:  
Ինչի՞ լուսատրտիկը հանգըրեց իւր լապտերը: Զ'իւ-  
նի թէ ջարդեցինք մենք խեղճին: Ո՛չ, նա միայն վախե-  
ցաւ. բայց ահա նորից վառեց իւր լապտերը առաջուան  
պէս: Հանգիստ թողենք նորան այս դիշեր և վաղը մի լաւ  
նայենք նորա վերայ:

Ինչպէս տղեղ է այս կինդանին ցերեկը. իսկ գիշերը  
մարդ կարծում է, թէ նա անդամնդ է: Նորա շագանա-  
կագյն մարմինը վերեւից տափակ է, իսկ ներքեւից դուրս

ցցուած. ամբողջ մարմինը կազմուած է տասն և մէկ խա-  
ղերից: Խաղերը կարծես հազյրած են միմեանց մէջ: Վե-  
րին օղակի տակ, ինչպէս վահանի տակ, պահպում է գլու-  
խը, աև բեխերի և մեծմեծ սեռակ աշերի հետ Ուրեմն  
սա միջատ է և ոչ թէ որդ: Նա ունի վեց սև ոտներ:

**Տեսնում** էք դուք այս սպիտակ բծերը վերջին երեք  
ողների վերայ: Ահա այս բծերն են փայլում մթնումը:

**Մեր** լուսատրտիկը թեւեր չունի—սա էգն է. բայց  
արուն թեւեր էլ ունի, մթագոյն պինդ վերնաթեւեր էլ  
ինչպէս բոլոր բուկները: Արուն նմանապէս լոյս է տալիս  
գիշերները, բայց որովհետեւ շատ լաւ է թռչում, այդ պատ-  
ճառով նորան բռնելը հեշտ չէ:

**Եգ** լուսատափիկը իւր մանրիկ ձուանները կացնում է  
խոտերին: Չուերից դուրս են գալիս թրթուրներ, որոնք  
իրանց մօրը շատ նման են և որոնք մի քանի ժամանակից  
յետոյ վառում են իրանց լսափերները:

Ի՞նչ միջատներ գիտէք, որոնց թրթուրները պատենաւորվում են,  
Որոնք չեն պատենաւորվում (մորեխը, ծղրիղը, ճպուռը): Ինչո՞վ են  
գանաղանվում միջատները որդերից:

### Մանկական յիշողութիւնից:

Յունիսի 23-ին.

**Ա**յսօր ես մէկ տօն չեմ կատարում, այլ շատ տօներ.  
այսօր իմ ծննդեան օրն է. երեկ մեր ուսումնարանում  
հրապարակական հանդէս էր և բարգևաբաշխութիւն ե-  
ղաւ. ինձ մի գեղեցիկ գիրք ընծայեցին. այսօր սկսուեցան  
արձակուրդները. վաղը մենք դիւղ ենք գնում—իսկ գիւ-  
ղում կան արտեր, ծաղիկներ, արօտամարգեր, անտառներ,  
պտուղներ, թռչուններ . . . Հիանալի է գիւղը մանաւանդ  
առաւօտեան և երեկոյեան. այդ ժամանակ տաւարածը ա-

րոտառեղից քշումէ գէպի զիւղը իւր կուշտ տաւարը:  
Ծնած կովերը բառաջում են, հորթերը նորանց պատսառա-  
խանում են իրանց մանկական ձայնով: Ահա աշխատասէր  
տանտիկնը վերառաւ էթէլել և տես ինչ առասութեամբ  
իսթը հոսում է կովի ուռած ծծերից: Շատ ուրախալի է  
նմանապէս նայել, թէ ինչպէս աշխատասէր զիւղացիք գե-  
րանդին ձեռներին վեր են տալիս մարդագետիների բարձր  
խոտերը: Ես շատ սիրում եմ հոտաւէտ խոտերի մէջ  
զլօքութիւն:

### Ամառը մարդագետիներում:

Մանկական յիշողութիւնից.

**Տղայքը** վաղը մենք ամենքս կրգնանք հնձատեղ, ա-  
սաց մեր հայրը, և մենք այնպէս գոռգոռացինք և վաղ-  
վեղեցանք, որ զօրով կանգնացրին մեզ: Ես ձուկը բունե-  
լու կարթեր եի պատրաստել, իսկ քոյրերս վերառան  
իրանց կողավերը, որ պտուղներ հաւաքըն, և առաւօ-  
տեան լուսարացին մեր բոլոր ընտանիքը, սայլերի վերայ  
նստած, ձանապարհ ընկաւ:

**Մի** ժամից յետոյ մենք շեղուեցանք լայն ձանապար-  
հից և գնացինք նեղ շաւիղներով, իսկ վերջումը բուրու-  
վին ձանապարհից դուրս եկանք և վերջապէս հասանք  
մեր փափագելի մարդագետիներին: Երբոր մենք տեղ հա-  
սանք, արեի ռակիվայլ ձառագայթները դեռ նոր ծա-  
ծանվում էին մեծ Մասիսի ձիւնապատ գագաթի վերայ,  
բայց հովիտը արդէն հնձողներով լիքն էր: Հնձողները  
չուխաները հանած, շապկանց զոյդ զոյդ առաջ էին քայ-  
լում բարձր խոտերի մէջ և իրանց յետերից ձգում էին  
կանաչ խոտերի շերակը: Նորանցից փոքր ինչ հեռու-

միւս կողմը, նորանց ընկերները փողխով հաւաքում էին  
չորացած խոտերը և փոքրիկ գէպեր էին կազմում: Հովտի  
այս և այն կողմերումն էլ սարի նման բարձրանում էին  
մեծամեծ գէպեր: Մէկ մարդ կանգնած էր գէպեր զլսին և  
ծարտարութեամբ գարսում էր խոտերը: Գիւղացի մա-  
նուկները փոքրիկ կցատերը կրում էին մեծամեծ գէպերի մօտ:  
Ուրախութեան աղաղակը սարածվում էր օղի մէջ. աշ-  
խատասէր մշակները գործում էին զուարձութեամբ. եր-  
գեր, ծիծաղ, բարձրաձայն խօսակցութիւն, շների հանջելը,  
գերանդիների զընդզընդոցը, բեռնակիր ձիաների խըր-  
խընջոցը, եղների բառաշխնը, անիւների մեղմ շառա-  
չիւնը — այս բոլորը խառնուելով բնութեան երգիների  
քաղցր դայլայլիների հետ, յափշտակում էին մարդու  
միոքը:

**Ես** շտապեցի ձուկը բոնել այն գետակի մէջ, որ  
հոսում էր այդ հովիտների միջով. իսկ քոյրերս սկսեցին  
պտուղներ ժողովել: Յետոյ մենք շատ ուրախութիւններ  
արինք, թիթեռներ բոնեցինք, ծաղեկներ ժողովեցինք և  
քոյրերիս հաւաքած մորու գեղեցիկ կարմրախառն հա-  
տիկներից փունջեր կազմեցինք:

Փոքր առ փոքր սկսեց մօւթն ընկնիլ. արեգակն ար-  
գէն ծածկուել էր հորիզոնի յետեւը: Մշակները գագա-  
ւեցրին իրանց գործերը, ցած զրին գերանդիները և խա-  
չակներով գոհացան Աստուծուց: Մի քանի բոպէից յե-  
տոյ բանուորները, գերանդիները ուսներին, ուրախ ուրախ  
ձանապարհ ընկան գէպի զիւղը: Փոքր աղաները խումբեր  
կազմած գնում էին առաջից, նորանցից մի քանիսները  
սրինդ էին ածում, միւսները երգելով ու պարելով հե-  
տևում էին նորանց:

Մայր. լեզ. թ. տ. ն. 8—Ղ.

**Յ**ս և քոյրերս խառնուեցանք այլ երգող դասի հետ  
և ամենեին չեմացանք, թէ ինչպէս տուն հասանք:

Հատուածների բաժանեցէք եւ պատմեցէք կարգով, ինչոր կար-  
դացիք: — Ինչի՞ն ենք ասում հորիզօն:

### Խոտի հունձ:

Դաշտի վերայ խոտ է բուրում.

Բանւորները քաղցր երգով,

Կարդ կարդ, գերանդին ձեռքերում,

Երգում են խոտը վերտալով:

Այնտեղ չոր խոտ են հաւաքում.

Միւս կողմը առողգ գիւղացին

Կեռ եղանով սայլն է բարձում.

Բարձրանում է սայլն ահազին:

Ապասելով դանդաղ սե ձին,

Ինչպէս մեխուած, տեղն է կանգնած,

Ականջը կախ, ոտը ծռած,

Կարծես քնած է, քարացած:

Միայն բգէզն հեռանալով

Չոր խոտի մէջ է ոստոստում,

Մերթ թռչելով, մերթ ցած դալով,

Ուրախ և անհոգ բըզըզում:

### Հնձողի երգը:

Թաջացէք, ուսեր, շարժուեցէք, կռներ, ցարկեցէք,  
Զարկեցէք դէմքիս, կէսօրեան հողմեր.

Եկէք, թարմացրէք անսահման դաշտը.

Թող հնչէ մանգաղն և փայէ շուրջը:

Ծաղկունք դաշտերի, ցած գլորուեցէք,

Հնձած խոտի հետ դուք ել չորացէք.  
Ես ձեզ կըժողվեմ, խուրձեր կըկապեմ,  
Կէսը տաւարիս, կէսն էլ կըծախեմ:

### Զ ու կ ը:

Տաք է . . . խկ գետումը, եղերքի ստուերների տակ,  
առոյդ ձկները խմբովին շարժվում են, նորանոր առուակնե-  
րում նորանք համարձակ կերակուր են որտնում կամ ա-  
զատօրէն զբօնում են: Ահա, նայեցէք, ինչպէս ձուկը ու-  
րախ խալում է ջրի յատակում:

— Զնուկը, այ ձուկը, խաղաղ որքան կամենումէս, միայն  
զգուշացիր պողպատեայ կեռերից. ահա մանուկը կարթը  
ձեռին նստած է ուռենու տակ և զգուշութեամբ նայում  
է հետքիցդ:

Զուկը չէ տեսնում մահաբեր կարթը. նորա ծայրին  
հազցրած է քաղցրահամ որդը: Չուկը ագահաբար յար-  
ձակուեցաւ նորա վերայ և իւր փոքրիկ բերանի մէջ առ-  
նելով ցած գնաց մինչեւ ջրի յատակը: Մանուկն արա-  
գապէս քաշեց մազէ քուղը . . . խեղճ՝ ձուկը, կիսնա-  
քըդ կարծեցաւ:

Նկարադրեցէք կարթը եւ մինորտւելինը:

### Ուռենի:

Ուռենի կանաչ, ուռենի պիրուն,  
Ինչի՞ դու այսօր ուրախ չես ժպտում.

Միթէ քեզ սասատիկ արեն է այրում,

Արե՞ն է այրում, անձրել ծեծում.

Արմատիտ մօտից սառ ջուր չէ վաղում:

\* \* \*

Հայոց աշխարհից իշխաններ անցան,  
Ուսին կտրեցին — կեանքից զօկեցին.

Նորան տաշեցին, տաշուշորեցին  
Եւ իրանց համար թիեր շնեցին,  
Նաւակ կազմեցին, մէջը նստեցան,  
Մէջը նստեցան ու տուն յետ դարձան  
Եւ ինձ, փոքրիկիս, հետները տարան:

### Ագռաւը և խեցգետինը:

Ագռաւը թուշում էր լճի վերեկց և տեսաւ խեցգեսնին, որ լողում էր ջրի երեսին: Ագռաւը խիեց նորան իւր կտուցով, բռնեց և կանդնելով ուսւենու վերայ, կամենում էր ուտել: Խեցգետինը տեսաւ, որ իւր օրը սեանում է, ասաց. «Այս ագռաւը, բարի ագռաւ, ես քո հօրն ու մօրը շատ լաւ էի ճանաչում. ինչ պատուական թըռչուններ էին — ընչը — ասաց ագռաւը, առանց բերանը բաց անելու: — Քո քոյրերին ու եղայրներին էլ ի ճանաչում. ամենապատուական թըռչուններ էին:» — Ընչը — կրկնեց ագռաւը: — «Այս, շատ լաւ թըռչուններ էին, բայց քեզ նրտեղ կը համեին:» — Պհած, ոհած, դռաւեց ագռաւը՝ բերանը բացանելով, և ցած զցեց խեցգետինը ջրի մէջ:

### Առիւծը և գորտը:

Առիւծը լսում է գորտի կրկռալը և ասում է ինքն իրան: «Այս գուռղը մեծ գաղան պէտք է լինի հա:» Բայց

այս խօսքերն ասելու ժամանակ, մէկ էլ է ահսնում, որ գորտը ճահճի միջից դուրս թռաւ: Առիւծը յանկարծ ջարդում է նորան իւր ուժեղ թաթով:

### Գորտը և եղը:

Մի գորտ գաշտում մի եղ տեսաւ մեծ ու գեր: Զես ասիլ, որ գորտն էլ նախանձ է ունեցել. մաքից անցրեց, թէ արե մի փորձ փորձեմ, տեսնեմ կարող եմ եւ զանը հավասարուեմ: Գորտը ուռչել սկսաւ. փքուեցաւ, արուղեցաւ, դարձաւ, ընկերին ասաւ. «Նսցիր, կը քիան ընկեր, արդեօք եղան չեմ հասել:» — Չէ, սանամայր, ասաց նա. դու ուր տեղ ես և նա ուր. ձեր մէջը մեծ սարեր կայ: «Հապա հիմա, նորից նայիր», աես, թէ որքան փքուեցայ: Դէհ, ինչպէս եմ, ասիր տեսնեմ, այժմ այդ եղանը կընմանեմ:» — «Չէ, հողի, չէ:»

«Հապա հիմա:»

— Տարբերութիւնը ոչինչ է. ինչոր էիր, էլ այն ես: Բայց մեր դորտը նորից այնքան փքուեցաւ ու փքուեցաւ, որ վերջապէս շատ ուռչելուց ճարեցաւ:

### Գայլի արտասուքը:

Գայլը լսեց, որ հովուի բոլոր հօտը կոտորուել են. նա արտասուալից աչքերով եկաւ հովուի մօտ և ասաց. «Յաւումեմ քեզ վերայ, ովք բարի մարդ, շատ ու շատ ցաւումեմ:» Հովիւր նայեց գայլի արտասուքին և պատասխանեց. «Ենորհակալ եմ, բարեկամ:» Բայց ովք գիտէ, թէ ինչի՞ ես լայ լինում. արդեօք այն պատճառով, որ ցաւ

ւում ես ինձ վերայ, թէ նորա համար, որ զու ինքդ  
այսուհետև ապրելու միջոց չես ունենալ:»

### Ամարային առաւօտ:

**Ա**մառուան պարզ գիշերը անցաւ. առաւօտեան հովը  
տարածուեցաւ օդի մէջ. մուժ մէգերը բարձրացան ձու  
րերից. աստղերը մինը միւսի յետեից շիջան. լուսաստղն  
էլ թառամեցաւ և շիջանելուն մօտ էր. նա երկնակամա-  
րից նկատումէր, որ ամպերը վագումեն գեղի արևելք և  
տեսնելով արեգակին՝ ոսկիփայլ և արծաթագոյն շերտե-  
րով զարդարվում են:

**Ա**հա և նա երևեցաւ: Ուրախ, զուարժ բարձրա-  
նում է երկնքում ոսկէճաճանչ արևը: Նա իւր փայտուն  
ճառագայթներով արթնացնում է գետակները, գաշտերը,  
հովետները և անտառները: Արթնացնում է ծառերի վերայ  
թառ եղած թռչուններին և անտառի գաղտններին, որ-  
պէս և բզէզին, որ մի փոքր հանգստացել էր իւր մամնա-  
պատ անկողնում: Ոսկէնման արևը կարճ խօսքերով ա-  
սում է ամենին. «Ճանգստացաք, բաւտիսն է, այժմ ժա-  
մանակ է գործ շինելու:»

Գիշերն ամենքը հանգստացել են ցերեկուայ գործե-  
րից: Դաշտերը և արտերը զովարար ցօղով նորոգուած նոր  
ոյժ են ստայել և ոսկէնման փայտում են առաւօտեան ճա-  
ռագայթների տակ: Ծառերի տերեւները, մարգերի խոտերը,  
արտերի հասկերը—բոլորը նորոգուեցան, զուարժացան:  
Թռչունները արթնացան և սկսեցին ուրախ երգելով իրանց  
նախկին գործը ձեռք առնել: Ամսուուայ իգշերը թէն  
կարճ է, բայց կենդանուցոցիչ է:

**Ա**մսուկները զարթեցան և յետ դժեցին վերմանկները.

Նորանց մանուկ անդամները բաւական հանգստացել էին.  
ոտները կամենում էին վաղել. ձեռները գործ էին խընդ-  
րում, գանգրապատ զլիներում նոր նոր մաքեր էին ծըն-  
վում: Աղջկերը հագնուեցան, սառը ջրով երեսները լու-  
ացան, Աստուծուն աղօթք արին և գնացին ուսումնարան:  
Ահա վագումեն նորանք, ծլվում են ինչպէս թռչունները  
գաշտերում և ուրախ—զուարժ սկսում են գործել: Արե-  
գակը երկնքից նայում է աշխատասէր մանուկներին և ա-  
սում է քննքաբար. ոֆո՞ղ Աստուած օգնէ ձեզ:»

### Օրի ճանապարհորդութիւնը:

1. **Ա**րգեօք ում հարկաւոր չէ ջուրը: Բոյսերին, գա-  
ղաններին, թռչուններին և մարդկանց հարկաւոր է նա:  
Ահա թէ ինչի Աստուած լցրեց ծովերը և ովկիանոսները  
ջրերով:

Բայց ծովի ջրերն աղե են և դառն: Այդ վնաս չու-  
նի, որովհետեւ ամենքը ծովի մօտ չեն բնակվում: Եւ  
ի՞նչպէս մաքրենք ջուրը, ի՞նչպէս տանենք մենք նորան ծո-  
վերից հազարաւոր մղոն հեռու, ի՞նչպէս բարձրացնենք նո-  
րան սարերի զլուխը:

**Ա**ստուած այս գործը յանձնել է աշխատասէր արևելն:  
Իւր տաք ճառագայթներով արել ջուրը թեթև գոլոր-  
շիների է գարճնում. ջրի գոլորշիներն իրանց միջի աղային  
մասերը թողում են ծովերում ու իրանք բարձրանում են և  
թանձրանալով երեսում են արծաթափայլ ամպի կերպա-  
րանքով, կապոյտ երկնակամարի վերայ:

2. **Գ**ոլորշիները բարձրանալով թանձրանում են և  
ամպ են դառնում. բայց նորանք չեն կանգնում ուղղակի  
ծովի վերայ: Այստեղ քամին սկսում է իւր գործը և ա-

հազին ամպերը թեթև փետուրի նման քշում է դէսլի լոյս  
աշխարհի ամեն կողմերը: Ամեն մէկ ամպի մէջ այնքան  
ջուր կայ, որ եթէ նա միանգամից ցած թափուէր, կը-  
ծածկէր քաղաքներ, գիւղեր, մարդկանց և կենդանիներին:  
Բայց Աստուած գործը ուրիշ տեսակ է կարգադրել. ամ-  
պերից կաթկաթում է անձրեսի փոքրիկ կաթիլները, ինչ-  
պէս ալեւրը մաղի միջից, կամ սառչում ու թափփում է  
ինչպէս ձիւն:

3. Չուրը թարմացնում է հովհաններն ու արտերը և  
հողը նորան իւր ներսն է ծծում: Հողի տակ աւելորդ կա-  
թիլները միմեանց յետեփց հաւաքվում և կազմում են սառ-  
երկրեայ փոքրիկ գրկաները. մի քանի գոհակներ խառ-  
նվում են միմեանց հետ և մի ճանապարհ գտնելով՝ դուրս  
են բղասում երկրի երեսը սառն աղբիւրի ձեռվ: Աղ-  
բիւրը բղխում է և առուակ կազմելով առաջ է խաղում:  
Առուակը իրան համար ճանապարհ է պատրաստում. փոքր  
առ փոքր հողը քանդում է և սկսում է քարերի վերայ  
խոխոջալով առաջ գնալ: Պատահաւմ է, որ նա ճանա-  
պարհին հանդիպում է մի իւր նման շատախօսի և նորա  
հետ եղայրանալով, ձայն ձայնի տուած, առաջ են խա-  
զում: Նորանք միմեանց հետ առաջ են գնում. իսկ նորանց  
պատահում են ճանապարհին երրորդ, չորրորդ և հինգե-  
րորդ առուակներ . . . Նորանք ամենքը խառնվում են մի-  
մեանց հետ և բարեկամաբար առաջ են հոսում: Նայում—  
տեսնում ես, որ ահա այս եղայրական միութիւնից մի  
կանոնաւոր գետակ է կազմուել: Այդ գետակը ջուր է առ-  
լիս մարդկանց, կենդանիներին, թարմացնում ու զովաց-  
նում է դաշտերի ծարաւ բոյսերին, պտացնում է ջրաղաց-  
ների երկամները, կրում է իւր վերայ լասակը և թեթև  
սաւակներ. իսկ նորա սառն գոհակների մէջ խաղում են

ուրախ ձկները, վայլելով իրանց արծաթագոյն թեփերը:  
4. Գետակը վազում — խառնվում է ուրիշ գետակի  
հետ և միասին առաջ են գնում: Ճանապարհին նորանց  
հետ խառնվում են ուրիշները և այսպիսով կազմում են մի  
ահազին գետ, որ ունենում է բազմաթիւ վտակներ և  
անցնում է մի թագաւորութիւնից միւս թագաւորութիւն.  
Երբեմն միւնոյն գետը անցնում է շատ մանր տէրութիւն-  
ներով և նորանց ամենին էլ բաշխում է իւր առաս ջրից:  
Լողում են գետերի վերայ ծանր նաւեր, որոնք բարձած են  
լինում զանազան ապրանքներով: Անցնում են նորանց վե-  
րայով առագաստաւոր նաւեր, իսկ եղերքների մօտ շինվում  
են արուեստագործուած գիւղեր և առեւտրական քաղաք-  
ներ, մինը միւսից հարուստ: Գետը մեծամեծ հարսաւու-  
թիւներ է տանում մէկ երկրից միւսը կամ դէսլի հե-  
ռաւոր ծովեր և իւր լայն բերանով ոչ թէ փոքրիկ նա-  
ւակներ, այլ մեծամեծ նաւեր, թեւանման առագաստնե-  
րով զարդարուած, ծովն է մոցնում:

Գետերից շատ ջուր է թափփում ծովերի մէջ. բայց  
արեգակն էլ հանդարտ չէ մնում. նա նորանոր գոլորշեներ  
է բարձրացնում, ամպեր է կազմում և ամբողջ աշխարհին  
անձրես է բաժանում:

Գետերը դարերով թափփում են ծովերի մէջ և նո-  
րան երեք չեն լցնում. արեն էլ յաւիտեան գոլորշեներ  
է բարձրացնում ծովերից, բայց երբեք նորան չէ ցամաքեց-  
նում: Այսպէս ամենիմաստ կերպով է կարգադրել Աստ-  
ուած այս բանը:

Կարգով պատմեցիք, թէ ինչպէս է ճանապարհորդում ջուրը:

**Գիւղացիք և գետը:**

Վ տակները և գետակները սաստիկ վսաներ էին տա-

լիս գիւղացոց. նորանց վարուցանքը փչացնում էին իրանց յորդանալու ժամանակ, այնպէս որ խեղճ գիւղացիք էլ չ'կարողացան համբերել և գնացին գանգատելու այն գեւաին, որի մէջ այդ վտակները և գետակները թափվում էին: Եւ շատ գանգատելու բաներ կար, մի տեղ աշնացանն էր հեղեղը տարել, միւս տեղ ջրաղացն էր քանզել, քարուքանդ արել. շատ ու անթիւ անասուններ ջրի կերակուր էին դառել: Խոկ այն գետը, որի մօտ գանգատ էին գնում, թէ և փարահեղ, բայց հանգարտ առաջ էր հոսում. նորա մօտ շինած են շատ մեծամեծ քաղաքներ, բայց այդ քաղաքների մարդիկը ու մի անգամ նորանից չեն գանգատուել, որովհետեւ նա մարդկանց ոչնչէ վնաս չէ առուել: Այսպէս մոտածելով՝ մեր գիւղացիք մօտեցան մեծ գետին: Բայց ի՞նչ . . . Երբ որ գետին մօտկից նաշյեցին, տեսան, որ իրանց հարատութեան մեծ մասը նորա երեսին էր լողալով գնում:

### Արաքսի արտասուբը:

Ապրակաքսի ափերով քայլամոլոր գնում եմ, չինշին դարուց յիշատակ ալեաց մէջը պըտրում եմ. Բայց նորա միշտ յեղ—յեղուկ պըտրոր ջորով եղերին դարիւ դարիւ խրիելով փախչում էին լալագին: „—Արաքս, ինչու ձրիանց հետ խաղ չես բռնում մանական, դու գեռ ծռվը չը հասած՝ սըգաւո՞ր ես ինձ նման: Ինչու արցունք ցայտում են քո սէդ, հըպարտ աշերից, ինչու արագ փախչում ես այդ հարազատ ափերից: Մի պղասորիլ յատակ, հանդարտ հոսէ խայտալով, Մանկութիւնը քո կարճ է. — շուտ կըհամիս դէպ 'ի ծով: Վարդի թվիր թող բուսնին քո հիւրընկալ ափի մօտ,

Սոխակները նոցա մէջ երգեն մինչեւ առաւօտ: Մըշտաղալար ուուիներ, սառ ծոցի մէջ քո ջրին, Ճըկուն ոստն ու տերեւ թող թաց անեն տապ օրին: Ափերիդ մօտ երգելու հովիք թող գան համարձակ, Գառն ու ուլը քո վծիտ ջուրը մըտնեն միշտ արձակ: Մէջքը ուոցուց Արաքսը, փըրփուր հանեց իւր տակից, Ամպի նըման գոռալով՝ էսպէս խօսեց յատակից. — Պականիս, անմի՛տ պատանի, նիրհը ինչու դարեւոր Ալրդովումես, նորոգում իմ ցաւերը բիւրաւոր: ՇՍիրելիի մահից յետ երբ ես տեսել, որ այրին Ոտքից զըլուխ պըճնուի իւր զարգերով թանկագին: Պրի՛ համար զարդարուիմ, որի՛ աչքը հրապուրեմ, — Շատերն՝ ինձ են ատելի, շատերին՝ ես օտար եմ: Դկար ժամանակ, որ ես — էլ շըքեղազարդ հարսի պէս Հազար ու բիւր պըչըրանքով փախչում էի ափերիս: ԴՅատակը պարդ ու վըճիտ, կոհակներըս ոլորուն: Լուսաբերը մինչեւ այդ ջըրիս միջին էր լողում: Դի՞նչըս մընաց այն օրից, որ ջըրամ՛տ գիւղերըս, Ո՞րը իմ շէն քաղաքից, ո՞ր բերկրայի տեղերըս: Դջուրքը ջըրի ամեն օր իր սուրբ ծոցէն Արարատ Մայրակընամ ինձ սընունդ պարգեռում է լիառատ. ԴԲայց ես այն սուրբ ջըրերով, սուրբ-Ակօբի աղքիւրին, Պիտի ցողեմ արտօրայք իմ ատելի օտարին: Դկամ կինսատու իմ ջըրով, ափերիս մօտ կըկրպած՝ Իւր նամազը կատարէ թուրք կամ պարսիկը հոտած: ԴՄինչ իմ որդիք — ով գիտէ — ծարաւ, նօթի, անտերունչ՝ Օտար աշխարհ յածումնեն, թոյլ ոտքերով, կիսաշունչ . . . Դկեռու, հեռու քըշեցին բընիկ աղջը իմ Հայկեան, Նորա տեղը ինձ տուին ազգ անկրօն, մօլեկան: Դոցա համար զարդարեմ իմ հիւրընկալ ափերը,

Եւ կամ՝ դոյցա հրապուրեմ ձըպոստ, սլլշած աչերը:  
ո՞քանի որ իմ զաւակունք այսպէս կու մընան պանդուխտ,  
ինձ միշտ սրգուոր կըտեսնէք, այս է անխար իմ սուրբ ուխտ:  
Եւ չե խօսեց Արաքսը, յորձանք տուեց ահագին,  
Օղակ օղակ օձի պէս առաջ սողաց մոլեգին:

### Սագեր և կոռունկներ:

Սագերը և կոռունկները միասին արածում էին դաշտում: Հեռուից որսորդներ երևեցան: Թեթև կոռունկները բարձրացան և թռան, իսկ ծանր սագերը մնացին և որսորդները նորանց կոտրեցին:

### Ամառը դաշտումը:

Ուրախ և ազատ է լինում մարդ ընդարձակ դաշտում: Մինչև հեռաւ որ անսառի կալոյտ եղերագիծը բլրակների վերայով, հարձես օրօրուելով, արածվում են գոյնզգոյն արածեր: Ուկէգոյն հաճարը ծածանվում է, ներս ծծելով կենսատու օդը: Կապում է դեռահաս գարին. սպիտակում է ծաղկած սեմինուրը (եղիպատացորեանը) զարդարուած կարմիր ցողունով և վարդակարմիր մեղրաբեր ծաղկներով: Ճանապարհից փոքր ինչ հեռու կարծես թախ է կացել գանդրաւոր սիսեռը. նորա միւս կողմը տարածուած է բաց կանաչ վուշի արտը իւր կողորիկ զլուխներով և կապուտակ աչեկներով: Բայց ահա ճանապարհի միւս կողմը տարածուած են ցորենի ճոխ արտերը և բարեկամաբար ողջունում են իրանց միւս եղբայրակիցներին:

Արտուտը դայլայում է արտերի վերայ բարձրանալով, իսկ սրաթե արծուին իւր հեռանկատ աչերով նայում է

կրինքից. Նա տեսնում է շատախօս լորին խիտ արտերի մէջ և գաշտային մկանը, որը հատիկներ է կրում իւր բունը, որոնք արդէն հասած հասկերից թափում են:

**Ամեն կողմից** հազարաւոր զմայլելի ձայներ են լսվում, իսկ մեծ ճանապարհով, երկու ջուխտ եղը լծած, ճրձրուալով առաջ է գնում չոր խոտով բարձած սայլը և օդը լցնում է անուշահոտութեամբ:

### Արտ:

Իմ արտ, սիրուն արտ,	Ամալը դոռալով
Դու արտ ոսկէզարդ,	Գլխիցդ է անցնում:
Արևում ես հանում,	Հանում ես, կարմրում
Հասկերդ լցնում:	Հասկերդ լցնում,

Երբ հանդարտ քամին	Բայց քեզ ցանողի
Վերադ է փչում,	Հոգսը չես զիտում:
Աջ, ձախ ճօձալով	Քամի, դու քշի՛ր
Ծով ես ձե աշնում:	Կարկտաբեր ամալեր.
Քեզ վերայ երգելով	Ա'ստուած, պահպանի՛ր,
Արտոյտն է թռչում.	Մեր յոյսը—արտեր:

### Արծիւ:

Թիւապթեւ արծիւը բոլոր թռչունների թագաւորն է; Նա շինում է իւր բունը ժայռերի և մեծ կաղնիների վերայ: Նա շատ բարձր է թռչում, հեռու է տեսնում և արեին նայում է, առանց աչքերը թոթափելու:

**Արծուի կտուցը** մանգաղաձե է, ճանկերը կարթաձե, թևերը երկար են և սուր, կուրծքը հակայական—դուրս ցցուած:

Արծիւը ամպերի մէջ է սլանում, և շատ բարձրից  
նկատում է իւր որսին: Նա յարձակվում է սրապոչ բագերի,  
կարմրաթաթ սագերի և խաբեքայ կ'կուների վերայ, և միւ  
այն վիետուրների ցրուիլն ես տեսնում:

Համեմատեցէք արծիւը հաւի հետ:

### Շահնը վանդակում:

Ողբում է, լաց է լինում երիտասարդ շառատ շահնը,  
նստած վանդակի արծաթէ թառի վերայ: Շառատ շահնը  
գանգատվում է իւր թևերի, իւր հիմնական փետուրների  
վերայ: Եյ, դուք թևեր, իմ թևեր, իմ հիմնական փե-  
տուրներ, դուք ինձ պահպանեցիք քամուց ու փոթորկից,  
ցրտից ու անձրեխց, միայն, ով թևեր, դուք ինձ չ'ազա-  
տեցիք տխուր գերօւթիւնից—ոսկէ վանդակից, արծաթէ  
թառից:

### Երաշտ:

Ամսուը չորեին էր: Արեգակը օրէցօր բարձրանում էր  
պարզ երկնքի վերայ: Ճանապարհին թողը ամպի նման  
տարածվում էր: Երկիրը քարի նման պնդացել ու ճաք-  
ձըքոտելէր: Առուակները ցամաքել էին: Ծաղեկները տխու-  
թեամբ կախել էին իրանց զլուխները. խոտերը դեղնել էին.  
Նորահաս արտերը թառամել էին: Երկրագործը տխրու-  
թեամբ նայում էր իւր արտերին և ասում: Ա՛ստուած իմ,  
ինչոր ինձանից կախուած էր, արեցի, հողը որքան կարելի  
էր խոր ցելեցի, ուշադրութեամբ փոցեցի և ընտիր սեր-  
մով սերմեցի—այժմ թող լինի քո սուրբ կամքդ:

Խ՞նչ արեց երաշտը:

### Բոյսերի կերակուրը:

Պայծառ երկնակամարի վերայ ամպեր երեեցան. վաքր  
առ վոքր նորանք թանձրացան և սկ կեղեռվ ծածկեցին  
կապոյա երկինքը, իսկ երեկոյեան կենսատու անձրել ջրեց  
արօտամարգերը և արտերը: Դաշտային թառամած բոյսերը  
զուարթացան. նորանք անտեսանելի կերպով ծծեցին իւ-  
րանց բարակ արմատներով թաց հողի սննդարար հիւթը:  
Խոտը կանաչեցաւ. ծաղիկները բարձրացրին իրանց թառա-  
մած զլուխները. ծառերի փայլուն տերեները աղահաբար  
ներս ծծեցին խոնաւ օդը: Ուրախ զուարթ տառանուիլ  
սկսեցին ցորենի, գարու և վարսակի արտերը և աւ-  
րագ արագ լցրին իրանց քստալի հասկերի նիհար հա-  
տիկները:

Ի՞նչով են կերակրվում բոյսերը, ի՞նչ հարկաւոր է նորանց անձրեւը.

### Հունձ:

Կերթամ կըսենեմ  
Եւ կուրախանամ,  
Ինչոր Տէր Աստւած  
Մարդկանցը տուաւ:

Գօտիցս բարձր  
Ցորենի արտը  
Այս ու այն կողմը  
Ճօնում է հասկը:

Կարծես հրեշտակը  
Ամենայն կողմում  
Ուրախ ու զուարթ  
Ծիծաղ է շնորհում:

Քամին արտի վրայ  
Մեղմիկ է փշում,  
Ալեքանման Ճեմով  
Առաջ է զնում:

### Ով է քիթը ցից պահում:

Որդին ասաց հօրը. ոչայրիկ, խնդրեմ տսես ինձ, թէ

ինչի՞ մի քանի հասկեր կռացել են մինչև դետին, իսկ  
միւսները գէպի վեր են ցցուել:

— Ինչ հասկ որ լիքն է, կռանում է գէպի դետին.  
իսկ որն որ դատարկ է, նա զլուխը վեր է պահում:

### Թամաժայ Հաց:

Կիւրակէի արեւը ծածկուեցաւ անտառի յետեւ: Միւս  
առաւոա զիւղացին իւր որդոց հետ զուրս գնաց գէպի  
գաշտը և ուրախ ուրախ նայեց մարգաղետինների և արշ  
տերի վերայ: Մարգաղետիններում կանգնած էին արդէն  
մեծամեծ խոտի գէղեր. իսկ արտերում գեռ տատանիում  
էին հասած ցորենի հասկերը: Գիւղացին խաչակնքեց և  
ասաց. «Օրհնենք Աստուծոն, ո՞րդիք, այս տարի մեր տա-  
ւարը խոտ կունենայ և մենք էլ հաց:» Գիւղացին պոկեց  
մէկ հասկ, տրորեց իւր ափի մէջ, նայեց և տեսաւ, որ հա-  
տիկները մզացել են, յետոյ ատամի տակ փորձեց, և տեսաւ  
որ արաքում է: «Ո՛րդիք, ժամանակ է հնձելու. ձեր մայրն  
երեկ ամբարի վերջին ալիւրը մաղեց:»

Միւս օրը, թէ մեծ և թէ փոքր, բոլորը գուրս թաշ-  
փուեցան գէպի արտերը: Խորձերը արագութեամբ շա-  
րուեցան միմեանց յետեից. իսկ երեկոյեան արդէն բարձր  
տասնեակներ և երեսնեակներ կարգով կանգնած էին ար-  
տումը:

Դեռ հունձը չէր վերջացել, որ կամը սկսեց պտը-  
տել կալի վերայ: Հայրը մի բեռը ցորեն տարաւ ջրաղացը  
և այնտեղեց ջերմակ ալիւր բերեց: Մայրը խաշ ճարեց,  
խոր հունցեց, իսկ միւս օրը երեխայքը արդէն ուտում էին  
նոր ցորենից պատրաստուած անուշահոտ հացը:

Ի՞նչպէս են իմանում թէ ցորենը հասել է եւ իմանալուց յետոյ  
ի՞նչ են անում.

### Վար ու ցանք:

Որդին տեսաւ, թէ ի՞նչպէս է հայրը արտերը բարւո-  
քում, ինչպէս է զետինը հերկում—ցելում, ցելը փոց-  
խում, սերմնում ու ցաքանում. յետոյ ինչպէս է ցանած  
արտը կանաչում, կանաչը բարձրանում, հասկ զցում. հաս-  
կը ի՞նչպէս է ծաղկում և պտուղ տալիս: Յետոյ երբ ժա-  
մանակը գալիս է, ցորենը հասնումէ. հասած ցորենը հըն-  
ձում են մանդաղներով, չիներով: Հնձած ցորենը խուրձեր  
են կապում, ատասնեակներ և երեսնեակներ են կազմում,  
յետոյ սայլով կրում են ու կալապանի տակ զիզում: Գիւ-  
ղացիք առաջ կալը քաղհանում են, ջրում են, ապա մա-  
քուր կալում հաշտով փուռմ են, կամներով կալսում,  
եղանով եղանում, հղանով մղանում, կոլտալով սրբում  
ու կալի մի անկիւնում սարի նման թեղ են դնում: Ու-  
րախալի է տեսնել, թէ ինչպէս են աշխատասէր զիւղացիք,  
թեղի վերայ բարձրացած, հինդ մասնանի հռուկնով թեղը  
քամնում—դարմանը ցորենից ջոկում: Գիւղացին դարմանը  
ածում է մարազը իւր տաւարի համար, իսկ ցորենը լցնում  
է իւր հորերը և ամբարները: Ինչքան իրան ամրող տա-  
րին հարկաւոր է, զիւղացին վերցնում է, իսկ մնացածը  
ծախում է:

Պատմեցէք կարգով, թէ ինչպէս են մշակում արտը եւ պատ-  
րաստում ցորենը:

### Ամառը անտառում:

Անտառում այն ընդարձակութիւնը չ'կայ, ինչոր  
Մայր. լեզ. թ. տ. ն. Տ.—Ղ.

դաշտումը, բայց ամառուայ շոգ օրերին անտառը շատ առ խորժելի է. Եւ ի՞նչ չ'կայ անտառում: Բարձր կարմրաւ գոյն մայրիները կախել են իրանց փշոս դագաթները: Կայ նատերեւ և հսկայակաղմ սօսիները իրանց կոծոծների և թաթաձև տերեւների սօսափիւնով անցողի ուշքը զբաւում են: Մոխրագոյն բարդի ծառը շարժում է իւր վնջաձև գագաթը. իսկ հաստարմատ կաղնին իւր վրանաձև ճղները տարածում է իւր շուրջը: Չորս կողմղ բարձրանում են շատ հաստարակ ծառեր. հացի, բոխի, թխի, հաճարի: Այս չէ բոլորը: Շատ փոքրիկ, բայց պաղատու ծառեր էլ կան անտառում. ահա հունը կարմրին է տալիս հեռուից. նոյնպէս վայրերի տանձ ու խնձորը զարդարում են ծառ ու բը: Խոտերի միջից մորու սպիտակ ծաղիկն է փայլում, իսկ նորա մօտ արդէն կարմրել է գեղեցիկ համեղ պտուղը: Անտառային շուշանի սպիտակ զինաերը օրօրվում են երկար ու հարթ տերեւների միջից: Միւս կողմից կարծրաւ կտուց վայտփորը կտկրտում է ծառերը. սև սարեակները թնդացնում են օդը իրանց երգերով, իսկ անտուն կկուն համարում է իւր կեանքի օրերը: Մոխրագոյն նապաստակը ահա թփի տակը մտաւ. իսկ սկիւռը շարժեց իւր խաւոտ պոչը Ճիւղերի միջից: Ահա հեռուից էլ մի ձայն է գալիս. մինը ծառերի ճղները ջարդում— փշրում է. սա թաթեղ արջն է, որ իւր համար պտուղներ է պունկում:

Ի՞նչ բոյսեր, դաղաններ եւ թռչուններ էք տեսած ինքներդ անտառում:

### Դառերի վէճը:

Ծառերը վեճեցին միմեանց հետ, թէ նորանցից որն է լաւ: Կաղնին ասաց. ես բոլոր ծառերի թագաւորն եմ. իմ արմատս գետնի մէջ խորն է մտած, բունս հաստ է,

գագաթս երկնքին է նայում. իմ տերեւներս կտըրատուած, իսկ Ճղներս կարծես երկաթից ծուլած լինին: Ես վութորիկների առաջ չեմ խոնահվում, կայծակների առաջ չեմ ընկճվում:“

Սոսին ժապաց այս խօսքերի վերայ. «Շատ ես պարձենում— ասաց նա— դու մոռանում ես, որ ինձ նման ծառ ողջ Հայաստանումը չկայ. արմատներս անդունդն են հասնում. զագաթս ամփերի մէջ է խաղում. ես հարիւրաւոր Ճղներ ունիմ, ամեն մի Ճիւղս քո բունիցդ հաստ: Իմ թաթանման տերեւներիս նայիր, որոնց մօտ քո աերեւներդ այնպէս են, ինչպէս ձանձը ուղտի մօտ: Իսկ իմ բունս . . . նորա փչակում կարող է մարդս կարիք օրը տեղաւորուիլ: Համեստութիւն արեցիր, պտու զներդ չ'յշեցիր. բայց նորանք էլ խողերին են քեզ մօտ հրաւիրում. իսկ իմ կոծոներս թէւ մնուցիւ չեն, բայց տերեւներիս հետ ձեռք ձեռքի տուած սօսերով, յոգնած և արեից տոչորուած անցորականին իրանց ստուերի տակն են առնում— արեից, անձրեւից պաշտպանում:“

Խնձորենին լսեց այս երկուսի խօսակցութիւնը և ասաց. “Դուք երկուադ էլ շատ էք հպարտանում, բայց ասացէք, դուք տալիս էք մարդկանց այն, ինչոր նորանք ինձանից են ստանում: Նայեցէք իմ կարմրախառն խնձորների վերայ. նորանք մինչև անգամ թագաւորի սեղանն էլ զարդարում են:

Լսում է մայրին, շարժում է իւր փշոս գլուխը և ասում է. “Սպասեցէք, շուտով կրգայ ձմեռը և դուք ամենքդ էլ կըմերկանաք, իսկ ինձ վերայ միշտ կըմնան իմ կառնաւ փշերը: Առանց ինձ ցուրտ երկիրներում ապրել չէ կարելի, ես նորանց վառարանները տաքացնում եմ, և նո-

րանք իմ փայտից իրանց համար խրճիթներ են շնոռւմ։  
Համատեցիք կաղնին սօփ ծառի հետ, մայրին խնձորենու հետ։

### Պնկոյզ և դդում։

**Ամառուայ շոգ եղանակին՝** գիւղացին ընկուզենու  
տակ ձգուած հովանում էր. վերև նայելով նա տեսաւ  
ծառի վերայ շատ ընկոյզներ։ «Զարմանալի բան է, մոռա-  
ծում էր գիւղացին. այս ծառի մեծութեանը մակի տուր  
ու իրան պառւղներին։ Բունը ահազին, ճղները բաղմաթիւ  
և լայնատերե, կասես մի կատարեալ բլուր լինի. բայց  
պառւղներն այնքան մանր են, որ եթէ նորանք ջուխտ  
ջուխտ, կամ երեք երեք չըլինէին. տերեւների արանքներում  
պահուելով, դրժուարութեամբ կըտեսնուէին. մինչ զեռ-  
դգումը, որ աւելի մեծ է, քան թէ մարդու դրուխը, ա-  
ճում է այնպիսի բարակ և քնքոյշ ցողունների վերայ։ Չէ,  
եթէ ես Ասոռուած լինէի, բանն ուրիշ տեսակ կ'ստեղծէի։»  
**Այս խօսքերն ասած չասած,** յանկարծ մի ընկոյզ ցած  
ընկաւ և այնպէս սաստիկ դիպաւ գիւղացու քթին, որ  
սկսեց արիւն գնալ։

**«Արեղայ Ասոռուծոյ,** բացկանաչեց գիւղացին. լաւ հայի  
կը հասնէի, եթէ այդ բարձրութիւնից դղում վայր ընկ-  
նէր իմ գլխին։ Չէ, Ասոռուած ամեն բան իմաստութեամբ է  
ստեղծել, և ես, մեղաւորս, չըպիտի համարձակուիմ նորա  
ստեղծածի մէջ սխալ գտնել։»

### Կապաստակի գանգատը։

**Դողդողում,** լաց էր լինում մոխրագոյն նապաստակը  
թփի տակը նատած, լաց էր լինում և ասում էր։  
«Աշխարհում իմ վիճակից վատ վիճակ չկայ։ Եւ

ով կայ, որ չ'սրէ իւր ատամներն ինձ վերայ։ Որսորդները,  
շները, գայլը, աղուեսը և գիշատող թռչունները, կորակ-  
տուց բազէն, խոշարակն բուն, մինչև անգամ յիմար ագ-  
ռաւն էլ իւր ծուռ ձանկերով յափշտակում է իմ սիրուն  
ձագերը։ Ամեն կողմից ինձ վտանգ է սպառնում, իսկ պաշտ-  
պանուելու միջոց չունիմ. ես սկիւռի նման չեմ կարող  
ծառերի վերայ բարձրանալ, ձադարի նման որջեր փորել  
գետնի մէջ։ Ճշմարիս է, թէև իմ ատամներս յաջողապէս  
կոծում են կաղամբը և արմատեղնները, բայց նորանցով  
ուրիշներին կծելու համարձակութիւն չ'ունիմ։ Վագելում  
ես վարպետ եմ և վատ չեմ թռչուառում. բայց լաւ կրլնէր,  
եթէ միշտ յաջողուէր ինձ ուղիղ դաշտի վերայ կամ գա-  
րիվեր վագել, բայց եթէ դարիվայր վագելու ստիպուիմ, այն  
ժամանակ զլիվիվայր եմ գալիս և զլորվում, որով հետեւ ա-  
ռաջին ուներս կարծ են։»

**Լին մի կերպով կարելի էր ապրել, եթէ այս անիւ-  
ծած երկշոտութիւնը չ'լինէր։ Հէնց որ մի շնչոց եմ լսում,  
ականջներս դիք գիք են լինում, սիրտս արոփ—տրոփում է.**  
**Դեռ լրյացը չ'ձագած գուրս եմ վախչում թփի տակից, բայց էլի**  
**ուղղակի կամ թակարդի մէջ եմ ընկնում, կամ փռվում եմ**  
**որսորդի ուրքի տակը։**

**Ա՛և, վատ է խեղձ նապաստակիս վիճակը։ Խորաման-**  
**կութիւն ես անում, ծածկվում ես թփերի տակ, կաղամբի**  
**տակն ես պառկում, հետքերդ մոլորում ես, բայց էլի, վաղ**  
**թէ ուշ, փորձանքից չես ազափում, և երկար ականջնե-  
րիցդ բոնած, խոհանոց է տանում քեզ խոհարար։**

**Ո՞ի միմիթարութիւն միայն ունիմ, որ պոչս շատ**  
**կարծ է, շունը բռնելու տեղ չի ունենալ։ Եթէ ես այն-**  
**պիսի պոչ ունենայի, ինչպէս աղուեսը, ի՞նչ կըլինէր իմ**

Ճարը: Այն ժամանակ, անպատճառ, կերթայի և կը խեղտուեի:

Համեմատեցէք նապաստակը կատուի հետ:

### Սանահայր աղուէսը:

Սանահայր աղուէսի ատամները սուր սուր են, դունչը բարակ, ականջները դիք զիք, պոչը ուղղաձիգ, քուրքը տաք—փափիլիկ:

Լաւ է զարդարուած մեր սանահայրը. բուրդը փափուկ է և ոսկիփայլ, կրծքին ունի լաւ կրծկալ, իսկ պարանոյին փողպատ ունի կապած:

Աղուէսը ման է գալիս կամաց կամաց, կռանում է զէպի գետին, կարծես թէ քեզ զլուխ է տալիս, իւր բրդոս պոջ զգուշութեամբ է պահպանում, նայում է քնքուշ կերպով, ժապաւմ է իւր սպիտակ ատամները ցոյց տալով:

Աղուէսը խելացի է. խոր խոր որջեր է փորում, նուրանց մէջ շատ մուտքեր է պատրաստում, ներքնատուն և ննջարան է շինում և յատակը փափուկ խոտով ծածկում է:

Աղուէսը լաւ տուն կառավարող կրլինէր, եթէ փոքր ինչ գող չ'լինէր: Նա սիրում է բագեր, վարպետութեամբ ծալում է չաղ սաղերի պարանոցը և ճագարներին էլ չէ խնայում:

Համեմատեցէք աղուէսը նապաստակի հետ:

### Գող:

Երկու գիւղացի մի արջ էին տանում ցոյց տալու: Միանգամնորանք երեկոյեան հասան մի գիւղ և մնացին մի իջևանում գիշերելու: Իջևանի տէրը հէնց նոր էր ծախել իւր չաղացրած խոզը, ուստի և խողանոցը դատարկ էր: Արջին տեղաւորեցին այնտեղ: Գիշերուայ կիսին մի

գող եկաւ, որ խոզը գողանայ: Խոզանոյի դուռը հանդարտ բանալով, նա ներս մտաւ, բայց հէնց ձեռքը ձգեց, որ շօշափելով դանէ խոզը, արջը գոռալով գրկեց նորան իւր ուժեղ թաթերով և այնպէս սաստիկ հուպ տուեց, որ խեղճ գողը ցաւից և երկիւղից սկսեց գոռալ: Մարդիկ զարթեցան և վաղեցին դէպի գոմը. բայց մեծ դժուարութեամբ կարողացան աղատել անբաղան զայրացած գաշպանի ձանկերից:

### Արթուած արջ:

„Տղայք, տղայք, կանչեց մայրը. եկէք, արջին նայեցէք:“

Մանուկները դուրս վաղեցան սրահը, որտեղ արջին ժողովուած էին շատ մարդիկ:

Մօրուսաւոր ոռւս զիւղացին, մէկ մեծ երկաթէ ցից ձեռքին, արջի շրթունքից շրթայ անցկացրած՝ պար էր ասծում. մի փոքրիկ տղայ էլ թմբուկ էր թակում:

— Հապա, արջ, ասաց զիւղացին, ձբդճրգելով շրթացից. կանգնիր, բարձրացիր, այս ու այն կողմ տատանուիր, պատուելի պարոննելին զլուխ տուր, շնորհքդ ամենին ցոյց տուր:“

Արջը մռնչաց, ակամայից կանգնեց յետին թաթերի վերայ և սկսեց օրորուելով առաջ գնալ, աջ ու ձախ զլուխ տալ:

— Հապա, արջ, շարունակեց գիւղացին, ցոյց տուր, թէ փոքր երեխաններն ինչպէս են սիսեռ զողանում. ուր որ չոր է փորսող տուր, իսկ ուր չոր չէ, չոքիչոք գնա:“

Արջը սողաց, փորի վերայ վայր ընկաւ, թաթով զլուխը քորեց, մազերից քաշեց, իր թէ սիսեռ է պոկում:

— Այս ցոյց տուր, թէ պառաւներն ի՞նչպէս են  
գործի գնում:

**Արջը** գնում է, գնում ու էլ գանգնում, դէպի յետ  
կայում, թաթով ականջի տակը քորում, մուծում:

**Մի** քանի տնգամ արջը զայրացաւ, դոռաց, չ'ուզեց  
վերկանգնել. բայց շղթայի երկաթէ օղակը, որ անց էր  
կացրած նորա շրժունքի մէջ, և գիւղացու ձեռքի երկաթէ  
ցիցը խեղճ գաղանին ստիպում էին հնազանդուիլ: Երբոր  
արջը իւր բոլոր հնարագիտութիւնը ցոյց տուեց, գիւղա-  
ցին ասաց.

— Հապա՛, արջ, երկու ոտիդ վերայ առաջ գնա՛,  
պատուելի պարոններին զլուխ տուր. միայն մի՛ ծուխնար,  
ցած խոնարհուիր, զլսարկդ վերառ, եթէ հաց գնեն մէջը,  
ինքդ կուտես, իսկ եթէ փող—ինձ կըսերես:

**Արջը** զլսարկը վեր առած, յետին ոտների վերայ  
օրօրուելով առաջ գնաց, մէկ մէկ անցկենալով բոլոր նա-  
յողների առաջով :

**Երեխանները** զլսարկի մէջ կօպէկանոցներ զցեցին.  
բայց նորանք շատ խղճացին արջի վերայ. խեղճի շրժունք-  
ներից արիւն էր կաթկաթում:

### Կապաստակը և ողնին:

**Ապիտակ** ու քնքոյշ նապաստակն ասաց ողնուն. Ե՛ղա-  
բայր, ի՞նչ ծակիծրկող ու տգեղ զգեստ ունիսա—ձշմարիտ  
է—պատասխանեց ողնին—բայց իմ ծակիծրկող փշերը առ-  
զատում են ինձ շան և զայլ ատամներից. նոյն ծառայու-  
թիւնն անում է քեզ քո գեղեցիկ մուշտակը:

### Փայտփոր:

**Խոր** անտառի մէջ սև փայտփորը ծառերի վերայ

հիւսնութիւն է անում. թըլիսկ-թըլիսկ-թըլիսկ, չանկերով  
պինդ կպչում է, պոչը զիմհար է տալիս, կտուցով թըլիսկ—  
թըլիսկացնում և մրջիւներ ու միջատներ է դուրս քշում  
կեղեկի տակից, բնափայտի չորս կողմն էլ արագութեամբ պը-  
տոյտ պտոյտ է անում և ոչ մէկ միջատի աչքից չէ գր-  
ցում: Միջատները վախեցան. այս լաւ բան չէ, ասացին:  
“Նորանք երկիւղից խոր մտան, լաւ պահուեցան կեղեկի տակ  
և չ'կամեցան գուրս գալ: Փայտփորն սկսեց. թըլիսկ-թըլիսկ-  
թըլիսկ. ծառի կեղեւ ծակեց. երկար լեզուն ներս մացրեց  
և մրջիւններին ձիներին նման դուրս քաշեց:

### Կ Կ Ո Ւ:

**Պոխրագոյն** կկուն անտուն և ծոյլ թոչուն է. նա  
ինքն իրան համար առանձին բուն չէ շինում. ուրիշների  
ըներաւմն է ձու զնում, իւր զաւակներն ուրիշներին է յահճա-  
նում մննդելու և հեռու կանգնած նորանց վերայ ծիծա-  
ղում է ու հպարտ հպարտ կըրկըչում իւր որձակի առաջ.  
հա՛, հա՛, հա՛, նայիր, սիրելի ընկեր, ես զրախտապանի հա-  
մար ձու եմ ածել: իսկ նորա հպարտ արուն ծառի  
վերայ նառած իւր պոչը չոեց, թեկերը ցած թողեց, վեզը  
ձգեց, զլուխն այս կողմն, այն կողմը շարժեց և սկսեց եր-  
գել—իւր օրերը համարել:

Համեմատեցէք կկուն փայտփորի հետ:

### Արձականք:

Թէ գազանն է անտառի մէջ մհնչում,  
թէ եղջերուն—կամ ամպերը որոտում,

Թէ այս կամ այն կողմերից երդ են երգում—  
Ամեն ձայնի  
Իւր արձականքը ընդարձակ օդում  
Կըպատճախանի:

### Մանկական յիշողութիւնից:

Օգոստոսին.

Շատ ժամանակ է ես իմ յիշատակարանումն ոչինչ  
չեմ դրել. ամբողջ ամառ ես դորա համար ժամանակ  
չ'ունէի: Այժմ մենք էլ այնքան չենք խաղում, որովհետեւ  
շուտ անձրևում է և աշնան հոտ է գալիս:

Այսօր, Աստուածածնի վերափոխման տօնին, մեծ  
ուրախութեամբ եկեղեցի են տանում այդիների և արտերի  
պտուղները: Աստուածածնին պտուղներն օրհնումեն: Գիւ-  
ղական փոքրիկ եկեղեցին լիքն էր մարդկանցով: Բարի գիւ-  
ղացին ջերմեռանութեամբ վերառաւ մի փոքրիկ խաղողի  
ճիռ և մի բուռը ցորեն: Խաղողը նա կերաւ, պասը լու-  
ծեց, իսկ ցորենը տարաւ, իւր սերմացուի հետ խառնեց:  
Հայրս և մայրս այսօրից սկսեցին պտուղներ ուտել, իսկ  
մենք վաղուց լուծել էինք:

Դաշտերում արդէն շարուած են ցորենի տասնեակները.  
շուտով զիւղացին կրերէ նորանց իւր կալը, որ անձրեների  
տակը չ'մնան: Ահա աշխատասէր զիւղացին ջանասիրութեամբ  
կալում է. իսկ նորա փոքր որդին խուրձն է կրում հնձաւ  
տեղերից:

Խուրձը կրելուց յետոյ նա պարապ չէ մնալու. ա-  
րեգակի տաքութիւնը պակասում է. երկները շուտ շուտ  
ամպում է և անձրեներ է գալիս. զիւղացու ցելերը փափ-  
կացել են. շուտով ցաքը կակուի: Ճանձերն էլ սկսել են

զգալի կերպով կծել. երեսում է, որ ամառը վերջաննում է:

### Ճանձ:

Շատ գեղեցիկ է Ճանձը խոշորացոյց ապակու տակ,  
այնպէս չէ: Նորա թեւերը հիւսած են չափազանց Ճար-  
տարութեամբ և ծիածանի դոյնով փայլում են: Նորա  
գլուխ վերայ կայ երկու մեծ աչքեր, բայց խրաքանչեւր  
աչքը կազմուած է բազմաթիւ փոքրիկ աչքերից: Բրդոտ ոտ-  
ների ծայրերին մածուցիկ մաշկ կայ, որ օգնում է Ճան-  
ձին մանգալ կոկ ապակու և տուատապահերի վերայ:

Ճանձը ձու է ածում խոնաւ տեղերում, աղբի մեջ:  
Միւս օրը ձուերից որդեր են դուրս գալիս (թրթուր).  
Երկու շաբաթից յետոյ որդը կոկոն է գանում: Էլի երկու  
շաբաթ անցնում է և կոկոնից դուրս է գալիս փոքրիկ  
Ճանձ: Այս Ճանձը միևնոյն տարին կարող է ձու ածել.  
Բայց որովհետեւ Ճանձը տարին չորս անգամ է ձու ածում  
և ամեն անգամ 80 կամ 90 հատ, ապա մտածեցէք, թէ  
ինչքան կրբազմանային, եթէ նորանց ցուրտը, թռչունները  
և տուաւելապէս սարգերը չ'կոտսորէն:

Նկարագրեցէք նաննը եւ նորա կերպարանափոխութիւնը,

### Ս ա ր դ:

Աստիկ տաք ամառ էր. անթիւ ու անհամար մո-  
ծակներ, Ճանձեր ու մժեղներ էին ժողովուել. նորանք  
սկսեցին մարդկանց կծել, նորանց տաք արիւնը ծծել: Այս  
բանն իմացաւ. սարդը—զաղեմի զօրականը. նա սկսեց իւր  
ոտիկներով նիւթել, լարեր արձակել և այն Ճանապարհ-  
ները կտրել, որտեղից մոծակներ ու մժեղներ էին անցնում:

Ասորա ոստայնի մէջ ընկաւ լալկան ձանձը. սարդը  
յարձակուեցաւ և կամենում էր սպանել նորան։ Այն ժամ  
մանակ ձանձն աղաչեց. ոՊարոն Սարդ, դու ինձ մի՛ սպա-  
նիր. ինձանից յետոյ իմ որբերս անտէր կը մնան։ Սարդը  
խղճաց ձանձի վերայ և նորան աղատեց: ձանձը թռաւ,  
հեռացաւ, բզզացրեց և ասաց. ոէ՛յ, դո՛ք լալկան ձան-  
ձեր, մոծակներ ու մժեղներ, իմացէ՛ք՝ սարդը լոյս է ընկել.  
Նա սկսել է ոտիկներով նիւթել, լարեր արձակել և ու-  
զում է ձեղ ամենքիդ էլ սպանել: Թուան—փախան մա-  
ծակներն ու մժեղները, մասն տաշտերի տակ և սուտա-  
մեռնուկ տուին:

Սարդը շատ սպասեց, բայց երբ տեսաւ, որ ոչոք ի-  
րան մօտ հիւր չէ գալիս, այն ժամանակ գտաւ բե-  
խաւոր բզէզին և ասաց նորան. ու՛յ բզէզ, գնայ, թմբուկդ  
զարկիր և ամեն զեռուներին յայտնիր, որ սարդը վախ-  
ձանուել է, նորան տարել են քաղաք և զլուխը կտրել են  
տուել։

Բզէզ գնաց, թմբուկը զարկեց, բարձրացաւ տաշտի  
վերայ և բարձր ձայնով զուեց. ոի՞նչ էք դուք այդ տեղ  
մեռածի նման վայրթափուել. չէ՞ որ սարդն էլ կենդանի չէ.  
նորան քաղաք են տարել ու զլուխը կտրել են տուել։

Մոծակներն ու մժեղներն ուրախացան, դուրս եկան  
տաշտի տակից և ընկան սարդի ցանցի մէջ: Իսկ նա, ա-  
ւազակը, սկսեց խեղտել նորանց և խեղտելիս էլ ասում էր.  
ոի՞նչ մանր էք դուք: Ինչի՞ ինձ մօտ շուտ շուտ չէք հիւր  
գալիս. ես ձեղ շատ եմ սիրում։ Այս ասելով՝ ամենքին  
խեղտուեց և միայն կաշիները թողեց:

Ա Շ Ո Ւ Ն

### Աշնան նշանները:

Ծառերի կանաչ տերևների մէջ դեղնագոյն տերե-

ներ են շոշապում. մանդաղն իւր գործը վերջացրել է ոս-  
կիանման արտերում. միւս կողմբ հեռուից կարմրին են  
տալիս հովիտների երբեմն կանաչ գորգերը, ստուկրախիտ  
այգիներում հասած պատղները կախուած են:

Աշնան նշաններն ամեն կողմից մարդու աչքի են  
զիազըռ. այնուեղ, արևել տակ վայլելով, տատանվում է  
սարդի ոստայնը, այստեղ, արտերի տեղը երեսում են մերկ  
ծղօսներ, իսկ այզիներում որթը ոստերի վերայ կախել է  
սե, սպիտակ և կարմրախառն ողկոյզներ. հնձած խողան-  
ները տիրացնում են դաշտերը, իսկ աշնացանը զմրուստի  
նման վայլումէ: Կալերում հնձած հացաբոյակը կալում են.  
մէզը առաւօսեան սպիտակ քաթանի նման ծածկում է  
կապոյա ընակը:

Ամբողջ օրը սայլերը ձռնչում են. նորանք դաշտերից  
խուրձ են կրում կալը: Կալերում կամների չըխկալչըխկոցը  
հեռուից լսվումէ. կռունկների խումբերը շղթայաձեւ թըռ-  
չում են բարձրից, զարդարելով բնութիւնը իրանց ներ-  
դաշնակ կրոկուալով:

Ի՞նչ նշաններից էր խմանում դուք, թէ աշունն սկսվում է:

### Փորձանքից պրծան, պատուհասի մէջ ընկան:

Գիւղային ցորեն էր տանում ջրաղացը: Զուալը ծակ  
էր և մի քանի ցորենի հատիկներ թափուեցան ձանսապար-  
հին: Ծտերը խմբվին ցած եկան և սկսեցին ուտել հատիկ-  
ները, բայց աքաղաղը մօտ վաղեց և ծտերին հալածեց:  
Ծտերը գանգատուեցան ցինին: Ցինը իւր օրէնքով դատեց  
նորանց. առաջ պատրուտեց աքաղաղին, իսկ յետոյ խեղ-  
տուեց ծտերին:

**Դաշտեցի մուկը:**

Ախսկոտ, մօխրագոյն գաղաճ,  
Շատ մեծ է քո երկիւղը.  
Ոտներդ զգոյշ ես փոխում,  
Սիրտդ սաստիկ է շարժվում:

Քիչ վախեցիր,  
Ես չար մարդ չեմ,  
Գեղ չեմ հալածիլ,  
Միամիտ կացիր:

Դու գող ես, բայց ի՞նչ անես,  
Խեղձ, ինչով պիտի ապրես,  
Ինչով կեանքդ ապահովես  
Քանի մի հասկ որ վերառնես  
Իբրև պաշար  
Չմեռուայ համար,

Ի՞նչ կըլինի, երբ դաշտերում  
Նոքա առատ են վայրթափում:  
Քո խրճիթդ քար ու քանդ եղաւ,  
Եւ հողի հետ հաւասարուեցաւ:  
Դու նոր հողը պիտի փորես,  
Փափուկ մամուռ պիտի ճարես,  
Նոր տուն շինես,  
Մէջը ապրես,  
Չորս կողմումդ վչող քամուց,  
Խիստ ներգործող սառնամանուց  
Ազատ լինես:

**Մանկական յիշողութիւնից:**

Երեկ ես շատ ուրախ էի. մեր այգին քաղում էինք:  
Առաւօտեան շատ վաղ մեր բոլոր ընտանիքը հաւաքուեցան այգին. խաղողի գեղեցիկ ողկոյզները փայլում էին տերևաթափ որթերի վերայ:

Այսօր մեր այգին իւր առաջին գեղեցկութիւնը չունի, միայն տեղ տեղ երեռում են մի հատ պտուղներ կամ ճիռեր:

Վանաչ անտառներն այժմ փայլում են զանազան գոյնով. քարդենին կարծես ոսկէզօծուած զողզողումէ քամու առաջ. քամին պոկումէ ծառերի դեղնած աերեները. ամեն բան փոխվումէ. դաշտերի խոտերը թառամում են. բնութիւնը զրկվումէ իւր կանաչ զարդարանքից. առաւօտները երկիրը ծածկվումէ սպիտակ եղեամավ, որը արևի ճառապայմբների տակ անդամանդի պէս փայլումէ:

**ԶՀնձած արտ:**

Աշունն սկսուեց, ծիծառն թռաւ.

Անտառն է գատարկ, դաշտը մերկացաւ.

Միայն դաշտումը անհունձ մնացած

Տիտուր ու տրտում մի արտ կայ կանգնած:

Կարծես հասկերը ասում են միմեանց.

Ի՞նչպէս մրտում ենք մենք այս ցրտի տակ:

Շատ տիրալի է գետին խոնարհուել

Եւ ատօք պտուղդ հողում թաթախել:

Ամենայն զիշեր մեղ մօտ իջնում են

Անցնող թռչուններն ու մեղ ուտում են.

Գաղաններն տրորում, քամին մեղ ծեծում:  
Ուր է մեր տէրը, ի՞նչ է սպասում:

Քամին տալիս է նորանց վատ համբաւ.  
ԱՄԱՀԸ ձեր տիրոջ երկրից վերառաւ:

### Աշուն:

Երեկոյեան վերջալուսին  
Ծիծեռնակները չքացան.

Սարեակները խումբեր կաղմած  
Սեր կողմերիցը հեռացան:

Ամեն բան հանդարտ քնած է.  
Դուրսը խաւար է տիրում.  
Չոր տերեր խշխշում է,  
Եւ քամին դուռը ծեծում:

### Անկական յիշողութիւնից:

Դեկտեմբերին.

Այսօր մենք զարթեցանք և տեսանք, որ մեր սենեկակը<sup>1</sup>  
շատ լցու է, թէւ դեռ արեգակը չէր դուրս եկել: Մենք  
վազեցինք դէպի լուսամուտը և ուրախութիւնից աղաղա-  
կեցինք:

Փափուկ փայլուն ձիւնը հաստ կեղեռվ ծածկել էր  
մեր բագը: տան կտուրները, հաւանոյը, սրահը—բոլորը  
ձիւնով ծածկուած էր: Իմ հօրեղայրս վեր առաւ հրա-  
ցանը և գնաց հանդը, իսկ մեր փոքրիկ շունը դուրս վա-  
զեց խոհանոցից և թաթիկներով հաստ ձիւնը ձղերով  
վազվացում էր:

Զմե՛ռ, ձմե՛ռ, աղաղակեցինք մենք և ծափահարեւ-  
ցինք. շուտով հագնուեցանք, շուտով նախաձաշիկ արինք,  
իսկոյն վազեցինք դուրս և սկսեցինք ուրախ ուրախ ձնա-  
գունտով խաղալ:

### Կախարդ ձմեռը:

Եկաւ կախարդ ձմեռը,  
Եկաւ, աշխարհ բռնեց,  
Ծառերն բիւրեղով պատեց,  
Դաշտերում գորգեր սփռեց—  
Ողջ աշխարհ ծերացրեց:  
Գետի ափին ու երեսին  
Միորինակ սաւան ծածկեց:  
Ցուրան սկսեց:—Մենք ուրախենք,  
Ծերուկ ձմեռը կըսիրենք:  
Միրուն ու սպիտակ կտաւով,  
Ծածկուել է գետը սառուցով:  
Երեխայքը շատ ուրախ են,  
Սղղաններով միշտ սղղում են:  
Փայլում է նոր ձիւնն ու թափվում  
Աստղի նման, աշխարհ լցնում:  
Մայր: Լեզ. բ. տ. Ն. Տ—Ղ.

## զանիք պատմութեան

## ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

## Կրութեան օրինակներ:

§ 1. Փանց պուտը կարմիր չկայ, որ ճղես սիրտը  
և և է: Խելին խրատը, սելին սապոնն ի՞նչ անիի:—Խողը  
ասեց. ի՞նչ ճուտերս աւելացան, պարզ ջուր չ'կարացի  
խմել:—Կարմիր ճուն զատկին կ'սաղի:—Ապիտակ  
շունը բամբակ ծախողին մնաս է:

**Առարկանների գոյնը:** Ի՞նչն է լինում սե, սպիտակի, կանաչ, դեղին, կապոյտ, կարմիր, մոխրագոյն: Ի՞նչ գոյնի են լինում մարդկանց աշքերը, մազերը. ի՞նչ գոյնի են լինում ձիերի մազերը: Ո՞ր ծաղիկներն են կապոյտ: Որո՞նք են դեղին, վարդագոյն, սպիտակի:

§ 2. Ամեն կուլոր խնձոր չէ. — Բողելը որբան սեհս  
բակ ըլեի, էնքան գլուխը մեծ կ'բռնի: — Է՞նչանք, հաս-  
տը կ'բարակի, բարակի ջանը դուրս կ'գայ: — Խոփդ սուրա,  
հանդը բաժանովի ա:

Առարկաների ձեւը: Ի՞նչն է կողոր և ի՞նչը  
տափակ: Ի՞նչը կարծ և ի՞նչը երկար. ի՞նչը բարակ և ի՞նչը  
հաստ. ի՞նչն է ուղիղ և ի՞նչը ծուռ. ի՞նչը մեծ և ի՞նչը  
փոքր. ի՞նչը կոկ և ի՞նչը կոշտ. ի՞նչը սուր և ի՞նչը սութ:

§ 3. **Անուշ խօսքը** տուն կրշինի, դառը խօսքը  
տուն կ'քանդի:—Թունդ քացախը իր ամանը կրծաքաց-  
նի:—Հացը համով բլի, թէ չէ թխողը հաջաթ-  
չի:—Քարը իր տեղը ծանր կրիինի:

Պնդութիւն, ծանրութիւն և համ:  
ի՞նչն է հեղուկ, թանձր, պի՞նդ, փափուկ, քարթո՞ւ,  
փո՞ւխր, ջի՞լ, դի՞ւբաբե՞կ, ծա՞նր, թե՞թև: Ի՞նչն է թթու,  
քաղցր, դա՞ռն, ա՞ղի:

§ 4. Վանոնը ուղեղ է, իսկ գերանդին . . . և աւ թուղթը կոկ է լինում, իսկ վա՞տը . . . Մեղքամիմը փափուկ է, իսկ երկա՞թը . . . Արձիճը ծանը է, իսկ փետո՞ւրը . . . Թրժնջուկը թթու է, իսկ օշի՞նդը . . . Պողպատը ջել է, իսկ ապակի՞ն . . . Խոտը կանաչ է, իսկ երկի՞նքը . . . Ոսկին զեղին է, իսկ արծաթը . . . Կաթը սպիտակ է, իսկ թանա՞քը . . .

§ 5. Խնձորները լինում են. (Ճեկ կողմից) կողոր կամ եկարաձե. (Պոյնի կողմից) դեղին, կանաչ, սպիտակ, կամիր, վարդագոյն, (պնդութեան կողմից) պինդ, փափուկ, փուխը. (Համի կողմից) թթու, վաղցր, թթուաշ:

Ի՞նչպէս է լինում տանձը ճեկ, Պոյնի, պնդութեան և համի կողմից:

Ի՞նչպէս է լինում կեռասը ճեկ, Պոյնի և համի կողմից:

Ի՞նչպէս է արծաթ փողը ճեկ, Պոյնի, պնդութեան և ծանրութեան կողմից:

Ի՞նչպէս է հինգ կոպէկանոցը ճեկ, Պոյնի, պնդութեան և ծանրութեան կողմից:

§ 6. Պստիկ է, բայց Ճստիկ է:—Անը անը  
բան շինելիս հիւանդ է, հաց ուտելիս առողջ:—Անը  
հուն ար մարդու լեզուն երկար կըլինի:—Խելօս  
քին մին, յիմարին քանի կուղես:—Խօսքը մեծին,  
ջուրը պստիկին: Սուտ ասողե տունը կրակ ընկաւ,  
ոչոքչաւատաց:—Փիսմարդը զատկին էլ փիս կըլինի:

Մարդիկ լինում են. բարձրահասակ և  
կարձահասակ, նիհար և պարարտ, վայելակազմ և կորակազմ, ուժեղ և թոյլ, առողջ և հիւանդ, երիտասարդ և ծերունի, հեռանկատ և մերձանկատ, աղքատ և հաւրուստ:

Մարդիկ պէտք է լինին. Բարի, արդարացի, ազնիւ, ջանասէր, քաղցրաբարոյ, քաղաքավարի, կարեկից, համբերատար, խնայող, առատ, ճշմարտախօս, համարձակ, ներողամիտ, խոնարհ:

Մարդիկ չպէտք է լինին. չար, խաբեբայ, հպարտ, կոռարար, վուժինդիր, ագահ, ժլատ, յամառ, երկչուս, ծոյլ:

§ 7. Հակառակ յատկութիւններ: Յովշ հաննէսը ջանասէր է, իսկ Մկրտիչը ծոյլ: Վարդուհին հնագանդ է, իսկ Մանուշակը . . . Հայկը համարձակ է, իսկ Արշակը . . . Յովհաննէսը և Մկրտիչը բարի են, իսկ Մանուշակը և Գրիգորը . . . Չպէտք է ծածկամիտ լինել, այլ . . . Թոնդ հարուստը մասը տայ . . . (ում): Փոքրերը պիտի պատիւ տան . . . (ում): Չպէտք է լինել շոայլ, այլ . . . Չպէտք է լինել ժլատ, այլ . . . Չպէտք է լինել կրպիտ, այլ . . . Մի լինիք երկրուտ այլ . . .

§ 8. Գարէ հացը, ցորեն հացի աղքատ եղբայրն է: Փայտէ ամանով կերակուր չեն եփիլ: Գարէ տոռնը հիմնաւոր կ'լինի:

Ի՞նչ ամաններ են շինում փայտից: Փայտից շինում են փայտէ ամանեղիններ: Ի՞նչ ամաններ են շինում պղնձից և կաւից: Ի՞նչ փողեր են կտրում ոսկուց, արծաթից, պղնձից: Ի՞նչ շորեր են կարում մահուդից: Ի՞նչ պսակներ են հիւառամ ծաղիկներից: Լուսամիւտի վերայ ի՞նչ շրջանակներ և ինչ փեղկեր կան:

§ 9. Իսօրուայ փուշը, է գուցուայ նուշը:—Էսօրուայ գործդ վաղուան մի զցիր:—Առաւոտապուայ շառը լաւ է, քանց իրիկուայ խէրը:—Ջին ընտանի կենդանի է, իսկ արջը վայրենի գաղան է:

Այսօր դու ՞ր օրուան դասերդ ես սովորում։ Ես սովորում եմ վաղուան դասերս։ Ի՞նչ դաս պատրաստեցիր զու երեկ։ Ո՞ր օրերն են երկար լինում և որո՞նք կարծ։ Ո՞ր գիշերներն են աւելի ցուրտ լինում և որո՞նք տաք։

Ի՞նչ կենդանիներ է պահում գիւղացին։ — Գիւղացին պահում է ընտանի կենդանիներ։ Ի՞նչ կենդանիներից է զգուշանում գիւղացին։ Ո՞ր թռչուններն են տանը ապրում և որո՞նք դուրսը։

§ 10. Երկաժը ծանր է. իսկ արձիճը աւելի ծանր է։ Զին բարձր է, իսկ ուղարք . . . Սկիւուր խորամանկ է, իսկ աղուճը . . . Արձաժը թանկ է, իսկ ոսկի՞ն . . . Պղինձը պինդ է, իսկ երկաժը . . . Թելը բարակ է, իսկ մազը . . . Թոկը հաստ է, իսկ քո՞ւղը . . . Եղևնին պինդ է, իսկ կաղնի՞ն . . . Տանձը քաղցը է, իսկ մե՞ղը . . . Մեղուն փոքր է, իսկ ձանձը . . . Կաժը հեղուկ է, իսկ ջո՞ւրը . . . Դանակը սուր է, իսկ ածելին . . . Գետը խոր է, իսկ ծովը . . . Մեհք ունինք մեծ այդի. Դուք ունիք աւելի մեծ այդի. Նորանք ունին ամեն ամեծ այդի։ Ես ուշնիմ գեղեցիկ գիրք. զու ունիս . . . Նա ունի . . . Դուք ունիք սպիտակ թռողի. մենք ունինք . . . Նորանք ուշնին։

§ 11. Ի՞նչ է լինում առաւօտը. Արեգակը դուրս է գալիս, լուսանում է։ Թռչունները արթնանում են, թռչում են, կերակուր են գտնում և բուն են շինում։ Գիւղացիք վեր են կենում, հագնվում են, աղօթում են, նախաձաշեկ են անում և գնում են բանելու։ Տանտիկները հնոցները վառում են և կերակուր են եփում։ Երեխայքը վեր են առնում իրանց գրքերը և գնում են ուսումնարան։ Ի՞նչ եղաւ երեկ առաւօտ։ Ի՞նչ կըլինի վաղը առաւօտեան։

§ 12. Ի՞նչ եղաւ երեկ երեկոյեան. Արեգակը մայր մտաւ։ Թռչունները լուցին և իրանց բները մտան։ Տաւարը և ոչխարը յետ գարձան գիւղը։ Գիւղացիք գործերը թռչուցին և գնացին տուն։ Երեխայքը քնեցան։

Ի՞նչ է լինում այսօր երեկոյեան։ Ի՞նչ կըլինի վաղը երեկոյեան։

§ 13. Այժմ գարուն է։ Զիւնը հալվում է։ Գետերը բացվում են։ Նոր խոտը բուսնում է։ Տաւարը գնում են արածելու։ Գիւղացիք արօրը պատրաստում են։

Ի՞նչ եղաւ անցեալ գարնան։ Ի՞նչ կըլինի ապագայ գարնան։

§ 14. Ի՞նչ եղաւ անց եալ ամառ։ Օրերը երկարեցան, տաքացան։ Արտերը հասան։ Գիւղացիք հունձ արին։ Երեխայքը գնացին անտառը պտուղ քաղելու։

Ի՞նչ է լինում այս ամառ։ Ի՞նչ կըլինի եկող ամառ։

§ 15. Ապագայ աշուն։ Աշունը կրգայ, օրերը կրկարձանան, գիշերները կ'երկարին։ Մեղմ անձրևներ կրգան և ցրտեր կրլինին։ Գիւղացիք ցորենը կ'աղան, կանայք թել կրմանեն։ Լուսամնաւաներն ու դռները կրպնդացնեն։ Վառարանները կրվառեն։ Հաստ շորեր կրհագնեն։

Ի՞նչ են անում ներկայ աշնան։ Ի՞նչ արեցին անցեալ աշնան։

§ 16. Այժմ ձմեռ է։ Ցրտերն սկսվում են։ Երկիրը ձիւնով է ծածկվում, իսկ գետերը սառուցով։ Մարդիկ հագնում են մուշտակներ և քուրքեր։ Ճանապարհներին կարաւանները շարժվում են։ Մանուկները ձնագունադի են խաղում։

Անցեալ ձմեռ ը, Ապագայ ձմեռ ը,

§ 17. Ասել են՝ առ ու տներ և ոչ թէ առ ու կուլ։ Բանն արած, յետոյ պարձեցիր։ Դուռող փակ պահիմ, հարեւանիդ գող մի ը ոնիր։ Երեխին բան դիր, հետր դնաւ ամաստունի հետ քար կրիր, յիմարի հետ փլաւ մի ուտիր։ Ինձ տես, քեզ լաց, որտեղ որ ես, զայիմ կաց։ Ի՞նչ տեղ հաց, էնտեղ կաց։

Ա՞ր ծուլանսր, աշխատի՛ր: Ցերեկը գործիր, իսկ զիշերը . . . Քո ունեցածը պահպանիր, իսկ ուրիշն ունեցածի վերայ աչքդ մի՛ . . . Մանդալու ժամանակ մահեկ, գործի ժամանակ գործդ ։ . . . Շուտ վերկացէք, ձեռներդ և երեսներդ լուացէք, մաղներդ ։ . . . Աստուծուն գաներդ ։ . . .

Ի՞նչ է հրամայում հինգերորդ պատուիրանքը. Ի՞նչ է հրամայում երրորդը. Ի՞նչ վեցերորդը:

§ 18. Որ գործ շինես, միշտ կը պարձարուես: Քանի փոքրի ես աշխատիր, որ մեծանաս: Որ ծերանաս, ծերի պատիւը կ'իմանաս: Ինչ որ ցանես, այն կրհնձես: Ի՞նչ որ աշխատես, այն կուտես: Ագռամին, որ մնայ, իրան ձագից սիրանը չկայ:

§ 19. Յովհաննեսը կ'արեց մէկ ժամ: Գիշացին կ'արատ ատեց շատ ժամեր: Ես մի կտոր հաց կ'արեց իշխանի վերայ: Մայրս կ'արատեց հացը և դարսեց սեղանի վերայ:

Հայկը ուներ երկու ընկոյզ. նա մինը կոտրեց: Ես իմ բոլոր ընկոյզներս կոտրատեցի: Ես աշխատում եմ չպատռել իմ տեսրակը: Զար աշակերտները պատը ուտում են իրանց տեսրակները:

Գայլը ընկաւ հօտի մէջ և բոլոր ոլխարներին խեղատ առատեց:

§ 20. Բարձրսար; Բարձր սարը հեռուից տեսնվում է: Ձմեռը . . . (ի՞նչի) զլիին շատ ձիւն է լինում: Ես տեսայ . . . (ի՞նչ): Ուրախալի է նայել ձիւնապատ . . . (ի՞նչին): — Շատ աղբիւրներ բղխում են . . . (ի՞նչից): — Դժուարէ անցնել . . . (ի՞նչով): — Մեծամեծ ծառեր չեն բուսում . . . (որտեղ):

Հայաստանում կան շատ բարձր սարեր: Բարձր . . . (ի՞նչերի) ձիւնը ուշ է հալվում: Ես տեսել եմ շատ (ի՞նչեր): — Գարնանը ուրախալի է նայել ձիւնապատ . . . (ի՞նչերին): — Շատ աղբիւրներ բղխում են . . . (ի՞նչերից): — Մեր երկիրը լիքն է . . . (ի՞նչերով): — Վայրենի այծերը աղբում են . . . (ի՞նչ տեղերում):

§ 21. Գեղեցի կ'կեղեցի: Մեր քաղաքումը կայ գեղեցիկ եկեղեցի: — Գեղեցիկ . . . կտուրը ծածկուած է քարով: Ես տեսել եմ մէկ գեղեցիկ . . . Պապս մէկ ջահընձայեց . . . Այսօր առաւոտեան շատ մարդիկ դուրս եկան . . . Սուտ մի երդուիր . . . Ես աղօթում եմ . . .

Եկեղեցին եր: Եկեղեցին երը ունին սեղաններ: . . . սեղանները զարդարուած են պատկերներով: Մեր պատկերը շինել են շատ . . . Նորանք շատ ընծաներ են տուել . . . Գիւղերում . . . (ի՞նչերից) բարձր աներ չկան: Մեր աշխարհը լիքն է գեղեցիկ . . . Մարդիկ աղօթում են . . .

§ 22. Շունը մսակեր կենդանի է: . . . Հաւատարմութիւնը ամենին յայտնի է: — Իմ հօրեղայրս ունի որսի . . . Նա այդ . . . շատ լաւ է կերակրում: Որսի ժամանակ այդ . . . քաջը չկայ: — Այդ . . . հօրեղայրս շատ կենդանի որսեր է բունել: — Այդ . . . երկիւղ ասած բանը չկայ:

§ 23. Գոհարից թանկ է իմ երկու . . . (ի՞նչը) և բրկու ունիքեր ձգուած են . . . (ի՞նչի) վերելք: Ամենից աւելի պահպանիր քո . . . (ի՞նչը): — Պէտք է հաւատամ իմ . . . (ի՞նչին): Տրտութեան ժամանակ արտասուքը թափվում է իմ . . . (ի՞նչից): — Ես տեսնում եմ . . . (ի՞նչով): — Արտասուքի կաթիւներ նկատուեցան նորա . . . (ի՞նչում):

— 186 —

§ 24. Հինդ մատներ: իմ ձեռքիս վերայ կան  
հինդ մատներ: զժուար է մարդուն առանց . . . Սաստիկ  
ցուրտը մաս է . . . Հիւսնը կորեց իւր . . . իմ . . .  
մէկը երկար է միւսից: Ես շատ բան եմ շինում իմ . . .  
Ամենեին մասուածը չկայ իմ . . . (\*):

§ 25. Վարեց: (Ովկ) Գիւղացին վարեց օր ավարը: (Բնչով) Գիւղացին  
օրավարը վարեց արօրով: (Որտեղ) Մեր տան յեւ  
տեր զիւղացին օրավարը վարեց արօրով: (Երբ) Երեկ  
մեր տան յետեր զիւղացին օրավարը վարեց արօրով:  
(Բնչպէս) Երեկ մեր տան յետեր արօրով զիւղացին օրա  
վարը վարեց սաստիկ ջան ասիրութեամբ:

Փորեց: Ովկ Ինչ. ուր. Երբ. Բնչով. Բնչպէս:

Կլկարէ. ովկ. Ինչ. ուր. Երբ. Բնչով. Բնչպէս:

Գրումէ. ովկ. Ինչ. Երբ. Բնչով. ում վերայ:

§ 26. Փորուեցաւ. Ինչը. ումնից. ուր. Երբ.  
Բնչով. Բնչպէս:

Կորպումէ. Ինչը. ումնից. ուր. Երբ. Բնչով.

Բնչպէս:

Կլգրուի. Ինչը. ումնից. որտեղ. Երբ. Բնչով.

Բնչպէս:

§ 27. Շրջումէ. ովկ. որտեղ. Երբ. Բնչով.

Բնչպէս:

Իջնումէ. ովկ. որտեղից. Երբ. Բնչով. Բնչպէս:

(\*) §§ 23 և 24 Թուական անունների համար է դրած, ուրեմն  
պէտք է ուսուցիչը իւր հարցերն ուզգէ այնպէս, որ թուական-  
ները ևս դրյականի հետպատասխանեն, Դասաւորկան թուականի  
կրթութեան համար ուսուցիչը հարցնում է, որո՞նք են քո մատ-  
ներդ համարիք . . . Որնէ առաջին մատը . . . Կրկուրդը և այն:

Կը դայ (ձիով). ովկ. որտեղից. ուր, Երբ. Բնչպէս.  
Բնչե. Բնչպէսի ձիով:

Վայր ընկաւ: Բնչը (խնձորը) Բնչպէսի. Երբ.  
ուր. Բնչից. Բնչը վերայ:

§ 28. Կարումէ. ովկ. Ինչ. որտեղ. ում հա-  
մար. Բնչից. Բնչով:

Կօշկար կարում է. Ինչ. որտեղ. ում հա-  
մար. Բնչից. Բնչով:

Ուրմնագիրները շինուամբ են. Ինչ. որ-  
տեղ. Բնչից. Բնչպէս: (\*)

§ 29. Աեղան. Ինչ բան է սեղանը: Ովկ է շի-  
նուամ սեղանը և Ինչից: Ինչ կայ սեղանի տակին: Ինչ  
կայ սեղանի երեսին: Ինչ են զնում սեղանների վերայ:

§ 30. Գրչահատը. Ինչ բան է գրչահատը:  
Գրչահատի լեզուակը և կոթը Ինչից են շինած: Որտեղ  
են շինուամ գրչահատը: Ինչ են անուամ գրչահատով:

§ 31. Տուն. Ինչ բան է տունը: Ինչից են շինուամ  
տները: Ովկ է շինուամ փայտէ տունը և Ինչից: Ովկ է շի-  
նուամ քարէ տները: Տան վերեր Ինչ կայ: Կողքերին Ինչ  
կայ: — Տան պատերուամ Բնչեր են լինում:

§ 32. Հաց: Ովկ է թիսում հացը և Ինչից: Ինչից  
են շինուամ խմորը: Ովկ է աղուամ ալիւրը, որտեղ և Ինչից:  
Որտեղ են աճուամ հացահատիկները և Երբ: Ովկ է մշա-  
կուամ արտերը և Բնչով: Ինչէ հարկաւոր ցորենի աճելու  
համար:

(\*) Այս բոլոր կրթութիւնները §§ 25, 26, 27, 28,  
պէտք է փոփոխել այլ և այլթուերով եղակիից յոդնակի, յոդնա-  
կիից եղակի և ընդհակառակն. կարելի է փոփոխել նոյնպէս ե-  
ղանակներով և ժամանակներով.



§ 33. Գրեցէք նոյնպէս սեղանի, քարետախտակի և  
գրատախտակի մասին: Գրեցէք, թէ ի՞նչ է անվում դասառ  
տանը: Ի՞նչ է անվում տանը և այլն: (Առաջ հարցերը  
գրեցէք, յետոյ նորանց պատասխանները:)

§ 34. Գրեցէք նմանապէս կատուի, շան, ձիու և  
կովի մասին. գրեցէք բաղի մասին: Նկարագրեցէք այդին,  
պարտէզը, ձեր տունը և այլն:

§ 35. Գրեցէք ծտի և գեղձանիկի մասին. Գրեցէք,  
թէ դուք ի՞նչ արիք դասատանը: Գրեցէք, թէ ի՞նչ էք  
մտադիր անելու վաղը: Գրեցէք թէ ի՞նչ արիք դուք անա  
ցեալ ամառը: Գրեցէք ձեր ընկերին, թէ ի՞նչպէս անցկաց-  
րիք դուք դատիկը, ի՞նչպէս անցկացրիք ծնունդը և մլրտու-  
թիւնը: Գրեցէք ձեր հօրը, թէ ի՞նչով էք պարագում  
դուք դասատանը և այլն:

## Վ Ե Ր Զ



Գին է 40 կ0Պ  
Գումարով առնողներին 35 կոպ.

2013

4544



